Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5717

Ч47.925
Ф-31

488

9(47.925)
Ф-31

ԳՐԱԾԳԻՐՔ

Ա. Օ. ԳԱՅԻ,

ԳԱՏՄՈՒԹԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՍՏԵՓԱՆ ՊԵՐՃ ՊՕՂՈՍ–ՓԱՓԱԶԵԱՆՑ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ
Հ.Ս.Խ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
Ա. ՍՅՈՒՆԻ
Москва, Мясницкая

1007/30998

ՄՈՍԿՎԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՍԵՆԻ
– 1863 –

38519 ш.հ.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՅՏՈՒԱԾՔԵՆՏԻՐ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

2004

21743-60

Ընդ

Մեծապատիւ

Յարութիւն Աղա Պասեան Բիւկենցի

Մեծայարգ Տէր

Ազգային Պատմութեան Դասագրքիս տըպագրութեանը համար ձեր ազգասիրական յորդորը ապացոյց կուտայ Ազգային յառաջադիմութեան սիրող և ձեռնտու ըլլալուդ, և առհաւատչեայ սիրոյն՝ որ ունիք Ձեր հայրենակից նուաստս վրայ, խրախոյս ըլլալով ինձ ուրիշ օգտակար ծառայութիւններ մատուցանելու իմ սիրելի Ազգիս։

Ընդունեցէք ուրեմն, Մեծապատիւ Տէր, իմ շնորհակալութիւնս, զոր անկեղծ սրտէ Ձեզ մատուցանելով,

Մնամ

24 Մայիս 1862 Սիրելի Ազգիս և Ձեզ անձնանուէր

Ս. Պ. Պ. ՓԱՓՍՉԵԱՆՑ

Ի ՅԻՇԵՍՏԱԿ

ԲԱՐԵԱՑԱՊԱՐՏ ՀՕՐ ԻՄՈՅ

ՊՕՂՈՍԻ ԲԻԿԵՆԵԱՆՑԻՈՅ

ԵՒ

ԲԱՐԵՊԱՀՏՈՒՀԻ ՄՕՐ ԻՄՈՅ

ԹՈՒՐՔԱՆՏԱՅ ՏԻԿՆՈՅ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայ եղբայր իր Ազգային Պատմութիւնը գիտնալու, ուշքով անցեալը դիտելով՝ ներկայն կշռելու և յապագան տեսնելու, ու անոր ուղղութիւն մը տալով՝ ապագային հիմունքն անոր մէջ ձգելու խորհուրդն յղանալու անհրաժեշտ պարտք ունի։ Այս պարտքն այնքան կը ծանրանայ, որչափ ժամանակին լուսաւորութիւնը, և մեր շուրջը գտնուող ազգաց վրայ Ազգութեան գաղափարին աճիլը, և մեծամեծներ գործելը կը նշմարենք։ Կ. Պոլսոյ և գաւառներուն ազգային դպրոցաց մէջ Ազգային Պատմութեան կարևորութիւնը ճանչցուած է, և արդէն հոգ և խնամք կը տեսնուի զայն աւանդելու և Հայ մանկուոյն սիրտը ճշմարիտ Հայ ընելու։ Եթէ Թուրքատանի Հայը քնէ ու իմանայ որ Ռուսատանի Հայն իր ազգային դպրոցներուն մէջ Ռուսաց պատմութիւնը առաջ աւանդելու պարտաւորուած է քան ազգայինը, և տեղ տեղ ալ ոչ երբէք կ՚աւանդէ. մեծ շնորհք մը և Օսմանեան տէրութեան աղատամիտ քաղաքակացիութեան և լուսաւորութեան ու Եւրոպոյ յառաջադիմութեան ներքնդունակ ըլլալուն արդիւնքը պիտի սեպէ այդպիսի բռնութենէ ազատ ըլլալն ի։ և գիտցին ալ շատով պիտի գտնէ թէ Ռուսն ի՞նչ նպատակու այդ ի սկզբան անենշմարելի, բայց յետագային ծանրակշիռ և իրեն համար կարևոր սկզբունքը մուծած է Հայոց դպրոցներուն մէջ ի Ռուսատան. ասոր համար գիտնալ պէտք են Ազգային Պատմութեան ամենակարևորութիւնը, և անհրաժեշտ պարտք սեպուելու է Հայ եղբոյրն քիչ շատ ծանօթութիւն ունենալ իր անցեալին։ Թէպէտ մենք կը փափաքէինք Ազգային Պատմութեան ընդարձակ և կատարեալ ու ճիշդ նոր խմբագրութիւն մը մինչև շերեայ քաջ պատմագէտ ազգայնէ, որ միանգամայն Եւրոպացի ճանապարհորդներու և պատմագէտներու վերջին խուզարկութիւններովն ալ ճոխացուցած ըլլայ, այսպիսի գասագիրք մը յօրինման շը փութալ. բայց դպրոցներուն համար մեծ կարևորութիւն ունենալը նկատելով, խնամով ձեռնամուխ եղանք այս ծանր գործոյն. և սոյնը իբրև համառօտ Դասագիրք մը պատրաստել փութացինք։

Այն յիշատակաց արժանի ազգային վերջին դէպքերն ալ, որոնք թէպէտև ցարդ գրի առնուած չէին, բայց անոնց վրայ լաւ տեղեկութիւն ունեցող ժամանակակից կենդանի անձերէ

կարևոր ծանօթութիւններ առած, յիշատակեցինք Դասապրքիս մէջ։ Մանաւանդ հարկ կը սեպեմ հոս յիշատակելու մեր շնորհակալութիւնը Պէռպէռեան Աւետիս պատուելիին, որ 1780 թուականէն Սիմէոն Կաթողիկոսի օրէն սկսեալ բաւական ընդարձակութեամբ Ազգային Պատմութեան շարունակութիւն մ՚ընելու ձեռնարկած ըլլալով, իւրաքանչիւր դէպք իր ճիշդ ժամանակի թուականովը արձանագրած, և մինչև Տ. Մատթէոս Կաթողիկոսի ընտրութիւնը և օծումը շարունակած՝ առ ձեռն պատրաստ խմբագրութիւն մ՚ունենալով, իր ակամաս եղած ազգային բանի մը գլխաւոր դէպքերու ճիշդ թուականը և պատմութիւնը մեղի տալու բարեհաճեցաւ։ Իսկ մենք պատմութեան շարունակութիւնը բերած հասուցած ենք մինչև 1860 մայիս 24 ը, այն օրը՝ յորում Ազգը իր երջանիկ ապագային հիմը ձգեց, այն օրը՝ յորում Հայ երդոն իր Հայութեան իրաւունքը ու պարտքը ճանչնալ ու վայելել սկսաւ։ Վասն զի այն օրը հաստատուեցաւ Ազգային Սահմանադրութիւնը, որուն հիմը՝ ընդհանուր ժողովրդեան գաղտնի քուէարկութեամբն ընտրուած ազգային Երեսփոխանական ժողովոյ կազմութիւնն է։ Եւ եթէ մեր Ազգային Պատմութեան սկիզբէն մինչև այն օրը աչք անցընելու ըլլանք, ազգային Վարչութիւնը բացարձակապէս կախեալ կը գտնենք թագաւորէ, նախարարէ, և կամ վերջին ժամանակներս պատրիարքէ ու ամիրայէ, և ուրիշ իշխաններէ։ Թէպէտ 1841 ի ազգային յեղափոխութենէն ետքը ամիրաներուն իշխանութիւնը շափաւորուեցաւ, և Էնաֆ ժողովուրդը ազգային վարչութեան անդամակցութեան իրաւունքը ստացաւ Բ. Դրան շնորհած արտօնութեամբը. սակայն այդ իրաւունքը աւելի կանոնաւորելու և աւելի օրինաւոր հիման վրայ հիմնելու պէտքը 1860 ին ազգալի եղաւ, և նոյն տարեայն մայիս 24 ին Ազգային ընդհանուր ժողովով վաւերացաւ Ազգային Սահմանադրութիւնը, որուն հիմը, ինչպէս ըսինք, ընդհանուր ժողովրդեան գաղտնի քուէարկութեամբն ընտրուած Երեսփոխանութիւնն է։ Եւ որովհետև ազգային Վարչութեան մէջ եղած այս հիմնական ու խիստ մեծ նշանաւոր կերպարանափոխութեան օրէն սկսաւ դուրս սփռել և ծաւալել յառաջադիմութեան գաղափարը, գՆՁՁ և զՀայրենիս ճանչնալու, սիրելու և անոնց ծառայելու արբազան ու անհրաժեշտ պարտքը, մենք ալ պատմութիւնը մինչև հոն շարունակելով ընդհատեցինք, ապագային վրայ ամենամեծ յոյսը տածելով պատերնուս մէջ։ Նոսա օրէնքէ ազ-

գայիսն որ ազգային կարևոր դէպք մը կամ ուրիշ գիտելիք թիւն մը բերնով կամ գրով աւանդուի մեզ, պատրաստ ենք շնորհակալութեամբ զայն ընդունելով ի գիր անցնելու, և հրատարակելու երկրորդ տպագրութեան ժամանակ, եթէ Աստուծով անոր արժանանալու բարեբաղդութիւն ունենանք։ Աւասի մեր թերութիւններուն ներողամտութիւն խնդրելով, կը փափաքինք որ փոխանակ պատմագրի արժանաւորութիւն ու տաղանդը փնտռելու մեր վրայ, առաւել մեր նպատակը ու տիրոջը գիտելով բարեհաճին մեր սիրելի ազգայինները քաջալերելու զմեզ։

17 Յունիս 1862
Ամենափրկչի Վարժարան
Զալամիոյ։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Շնորհակալութիւն մատուցանելով այն Դատապիրքս ոչ բոլոր ընդունելութեամբ պատուող ազգայ հասարակութեան և ազգային վարժարաններուն, կը փութանք առայ երկրորդ տպագրութիւնը ուրախութեամբ որոշ ձեւոնարկել։ Ազգայն մի՛ ինչ դէպքերը բաւական կարեւոր փոխութիւններով ընդարձակեցինք այս անգամ, ուրիշ փոխութիւններն ալ ուրիշ առնի կը թողուինք։

25 Յունիս 1863
Ամենափրկչի վարժարան
Զալամիոյ։

Ս. Պ. Պ. Փ.

ՀԱՄԱՌՕՏ

ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

1. Սահմն. Այսաստանին սահմանն է, Արևելքէն՝ Կասպից ծովն ու Պարսկաստանը. Արևմուտքէն՝ Աղիսատան, Միջագետք Աղուոց և Վիրաց. Արևմուտքէն՝ փոքր Արմենիոյ ծայրերը. Հիւսիսէն՝ Պոնտոս, Խաղտիք, Կողքիս, Սև ծովը և Գրաբանը։

2. Լերին. Այսաստանի գլխաւոր լեռներն են, Արարատ կամ Մասիս լեռը, Կորդուաց լերինք և Նախճաւանոս (Նրճէյան) փոքր Այոց մէջ։ Աստց մէջ զատ կան շատ փոքր լեռներ, ինչպէս Արագած, Սուկաւէտ, Գեղամա, Արոս, Օրդոց լեռան, Սարագայ լեռն և Սեպուհ լեռն։

3. Գետ. Մեծ գետերն են, Եփրատ կամ Արածանի, Տիգրիս կամ Դիկղատ, Արաքս, Կուր, Ճորոխ։ Իսկ պզտիկներն են, Արևս՝ փոքր Այոց մէջ. Խուրեան և Ցղմուռ գետ։

4. Լիճ. Երկու մեծ լիճ ունի, Ովի Բզնունեաց ու Ովի Գեղամայ։ Այսաւայրն սահմանին վրայ կ'ելնոյ նաև Ովի Կապուտան կամ Ովի Գրգռայ։

5. Օր. Ինդ հանրապէս ցուրտ, մանաւանդ հիւսիսային մասն Այսաստանին գրեթէ ուր ամիս

ձմեռ կ'ընէ, իսկ հարաւային կողմերն աւելի կաւ կուղէ, բայց շատ քաջառողջ է օդը, զոր բնակչաց ընդհանրապէս երկարակեցութիւնն ալ կ'ապացուցանէ։

6. Բուսաբերութիւն. Հողը շատ բերրի է. թէպէտ և ապաք գաւառներուն յատկացած բնրքերը ընդհանրապէս չկրնար պտղաբերել. բայց շատ պտուղաւէտ ցորեն, գարի և ուրիշ արմտիք, և տեսակ տեսակ բանջարեղէնք յառաջ կուգան. նոյնպէս բամբակ, վուշ և ոդդան կարմիր ներկը շատ աղէկ կ'ածին։ Նոյնպէս պտուղաւէտ են մրգենիներ ծառերը և ոթիները. ծիրան՝ որ Հայաստանէն տարուեցաւ Յունաստան։ Սմռան մէջ խիստ անուշահոտ տեսակ տեսակ ծաղկունք դաշտերը ու պարտէզները կը զարդարեն։ Թէպէտև Հայաստան անտառաց մասին շատ յաջող չէ, ըստ որում այնքան յաղթ և բարձր ծառերով չեն անտառները. բայց եբեւելի են բարտի (գաւազ. աղաճը), ուռենի (սէօյիւտ), փշատի (խյտէ աղաճը), կաղամախ (մէշէ), և կաղամախ երիրուն, սօսի (պէյազ քաւաք). թըթենին ալ շատ աղէկ կ'ածի, որով շատ տեղեր շինամ կը սնուցանեն։

7. Կենդանիք. Եբեւելի են երիվարք և նժոյգ ձիեր, և ուրիշ տեսակ գրաստներ. նոյնպէս վայրենի գազաններ։ Իսկ օշխարներն և ուրիշ ընտանի անասունները բազմաթիւ և խիստ պարարտ են. նոյնպէս բազմատեսակ են հաւերը. իսկ երէվայրիք անտառներուն և լեռներուն մէջ լեցուն են, ուր անդուլ կը պարապին որսորդք գազանք որսալու։ Լեռներուն և լիճերուն մէջ ալ պտղաւէտ ձկունք կ'ածին։

8. Հանքաբանութիւն. Հայաստան գլխաւոր երկու

մաս կը բաժնուի, այսինքն Փոքր Հայք և Մեծ Հայք։

Փոքր Հայք չորս նահանգի կը բաժնուի.

Ուռաջին Հայք. Երրորդ Հայք.
Երկրորդ Հայք. Կապադովկիա.

Փոքր Հայոց գլխաւոր քաղաքներն են, Ամասիա, Եւդոկիա կամ Թոգատ, Սեբաստիա կամ Սուազ, Մաժակ կամ Կեսարիա, Մելիտինէ, Բարկեր, Էին և Նիկոպոլիս։

Մեծ Հայք տասնեւհինգ նահանգի կը բաժնուի. որոնց անուններն են.

Ա. Բարձր Հայք. Թ. Փայտակարան.
Բ. Զորրորդ Հայք. Ժ. Ուտի.
Գ. Ալձնիք. ԺԱ. Արցախ.
Դ. Տուրուբէրան. ԺԲ. Սիւնիք.
Ե. Մոկք. ԺԳ. Գուգարք.
Զ. Կորճէք. ԺԴ. Տայք.
Է. Պարսկահայք. ԺԵ. Այրարատ։
Ը. Վասպուրական.

Գ. Ա. ԲԱՐՁՐ ՀԱՅՔ

Ութը գաւառի կը բաժնուի.

Հին գաւառք. Նոր Քիւրտք.

Դարանաղի. Կամախ. Տուժիկ.
Մելենդուր. Գուրուշայ.
Երզնկայ. Երզնկա.
Մանանաղի. Շուշար. Թէքման.
Դերջան. Դերջան.
Սպեր. Խարբերդ.
Շատղոմք. Գորճիգուտ.
Կարին. Երզրում։

10. Պարանաղի գաւառին քաղաքներն են Ընի, Օրդան Լայն։ Որ է Անանայ այրք լուսաց տեղը, ուր Ս. Գրիգոր Լուսաւորիչ վախճանեցաւ։

11. Եկեղեաց գաւառին գլխաւոր տեղն է Երիզա կամ Երզնկա։

12. Սպեր գաւառը Բագրատունեաց ցեղին երկիրն էր։ Գլխաւոր տեղիքն են, Բաբերդ և Սպեր։

13. Կարին գաւառը բարձր Այոց ամենէն մեծ գաւառն է. գլխաւոր քաղաքն է Կարնոյ քաղաք կամ Եդեսդուպոլիս։

14. Բ. ՀՈՐՈՐԴ ՀԱՅՔ

Ութը գաւառ ունի.

Հին Գաւառք.	Նոր Վիճակք.
Խորձեան.	Կեղի. Ալինճ.
Գեգիք.	Ակռ. Հենի.
Օրիք.	Ամշիածագ.
Աշտեանք.	Ճապաղջուր. Խուլի.
Բալահովիտ.	Բալու.
Պաղնատուն.	Ալաշկերտ.
Անձևիթ.	Խարբերդ.
Խոզնայ գաւառ.	Թորթում։

15. Օրիք՝ ասի նահանգին ամենէն մեծ գաւառն է. որուն գլխաւոր քաղաքն է Արտիրոսայ քաղաք կամ Արտիկերտ։

16. Գ. ԱՂՋՆԻՔ

Երիք գլխաւոր գաւառ ունի.

Հին.	Նոր.
Ալրզ.	Խարզան.

Ազնուաց ձոր. Սուսան.
Սալնոյ ձոր. Խաղէշ։

17. Այս նահանգին գլխաւոր քաղաքն է Տիգրանակերտ, զոր Տիգրան Ա. Հայկազուն թագաւորը շինած է։

18. Դ. ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ

Տասներկու գլխաւոր գաւառ ունի.

Հիւ.	Ար.
Տուարաճառաւի.	Կէօքսու. Գարաեազը.
Մարդալի.	Թէքման. Վարդոյ.
Ազիուլիտ.	Բաղնոց. Սարը սու.
Վարաժնունիք.	Խամուր. Լեզ.
Ապահունիք.	Մնլազկերտ.
Խոռխոռունիք.	Գուլանը.ք.
Հարք.	Խամուր. Խնուս.
Բզնունիք.	Խլաթ. Արծկէ.
Տարօն.	Մուշ. Հուխուր.
Սասունք.	Սասուն.
Արշամունիք.	Խոլի. Վարդոյ.
Արեւարք.	Կիւզէլ—տէրէ։

19. Տարօնը Տուրուբերանին մեծ գաւառն է. որուն գլխաւոր քաղաքն է Աշտիշատ. գիւղերուն մէջ երեւելի է Հացիկք գիւղը։

20. Հարք գաւառին գլխաւոր քաղաքն է Մանազկերտ։ Այս գաւառին մէջն է Հայկաշէն գիւղը. որ Հայաստանի մէջ մեր Հայկ նահապետին շինած առաջին գիւղն է։

21. Ապահունիք գաւառին մէջն է Գալարիա

կամ Աչուզ գիւղը, ուր որ Պարսիկները Տիրան Բ. թագաւորին աչուքները հանեցին։

22. Ե. ՄՈԿՔ

Երեք գլխաւոր գաւառի կը բաժնուի.

Հին.	Նոր.
Առուենից ձոր.	Առուենից ձոր.
Առանձնակ մոկք.	Մոկս.
Ծերմաձոր.	Շատախ։

23. Զ. ԿՈՐՃԷՔ

Չորս գլխաւոր գաւառ ունի.

Հին.	Նոր.
Կորդուք կամ Տմորիք.	Պոհդան.
Որսիրանք.	Որսիրանք.
Փոքր Աղբակ.	Ղուլամերկ.
Ղահուկ.	Ղահուկ։

24. Է. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

Չորս գլխաւոր գաւառ ունի.

Հին.	Նոր.
Տամբեր.	Տամբեր.
Օարեհաւան.	Սաքամաար.
Հեր.	Խոյ.
Օարաւանդ.	Օարաւանդ։

25. Ը. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Հայաստանի ամենէն մեծ նահանգն է, և տասն և հինգ գլխաւոր գաւառ ունի.

Հին.	Նոր.
Մշտունիք.	Մատան. Գաբաշ.
Տոսբ.	Ալան.
Աղբերանի.	Գերիկի.
Բաջքերունիք.	Ընթեշ.
Ընտազ.	Պակու.
Նախիջևան.	Նախիջևան.
Ակե.	Պակու.
Գողթն.	Ղուլիս.
Ընձևացիք.	Խոշապ.
Ծուաշռուտ.	Գարաքոյունլու.
Արանդ.	Արանտ.
Ընձախիձոր.	Բոդոլ.
Արդաստան.	Սիսիանապատ.
Շրուանդունիք.	Հայոց ձոր.
Ընբակ.	Ելպաղ.

26. Մշտունիք գաւառին գլխաւոր քաղաքն է Մատան, հոս է նաև Նարեկայ վանքը։ Այս գաւառին քովերը կ'իյնայ Զանգեզուրի ծովը, որուն մէջ հարս կղզի կան Ուռէր, Ղլիսամար, Կոտց և Լիմն։

27. Տոսբ գաւառին գլխաւոր քաղաքն է Ալան կամ Թամիրամակերտը։

28. Գողթն գաւառը շատ գինի ունի։ Հոս է Գուզայ աւանը, որ հիմա Հին Գուզայ կ'ըսուի։

29. Նախիջևան գաւառին գլխաւոր քաղաքը նոյնպէս Նախիջևան կը կոչուի։

30. Թ. ՓԱՅՏԱԿԱՐԱՆ

Երիզ գլխաւոր գաւառ ունի.

Հայերէն.	Լատին.
Պարդանակիրք.	Պարդ.
Դարանդաշտ.	Դարանդաշտ։

31. ԺԱ. ՈՒՏԻ

Երկու գլխաւոր գաւառ ունի.

Հայերէն.	Լատին.
Ասի առանձնակ.	Ասանշիր. Պէրատ.
Դարդման.	Դրմանիկ։

32. Ասի առանձնակ գաւառին մէջ են Պարտաս և Խաղխաղ քաղաքները։

33. ԺԱ. ԱՐՑԱԽ

Երեք գլխաւոր գաւառ ունի.

Հայերէն.	Լատին.
Մեծ Տարանդ.	Շուշի.
Սոթք.	Սոթք.
Փառնէս կամ Փառիսոս.	Շամքոր։

34. ԺԲ. ՍԻՒՆԻՔ

Տասը գաւառ ունի.

Հայերէն.	Լատին.
Զորք կամ Կապան.	Գոռիան.
Բաղք.	Պարկուշատ. Տաթև.
Գողտնքունի.	Կէօք—Հայ.
Վայոց ձոր.	Տարուաղեզ.
Տարանդ.	Օշական։

Օղուկք.	Պարկուշատ. Անեղի.
Ոսհուկ.	Ջ ոհուկ.
Երինջակ.	Ալենճա.
Խոխական.	Օրտուպատ.
Ալբեւիք.	Անեղի։

35. Գեղարքունի գաւառին մէջն է Գեղամայ ծովակը, որ Սեւան անուանով կղզի մը ունի։ Այս գաւառին գլխաւոր քաղաքն է Գեղարքի, զոր Գեղամ նահապետը շինեց։ Այց եւ դարձը Գեղամայ Գառնիկ կամ Գառնուկ թագուանը անուանով Գառնի ոչ անուանեցաւ։

36. Աղք գաւառը Աղաբերդ անունով Երեւանի բերդ մ'ունի։

37. ԺԳ. ԳՈՒԳԱՐՔ

Վեց գլխաւոր գաւառ ունի.

Հիւ.	Նոր.
Ջաւախք.	Խրդվիս.
Ղորսիտ.	Ղորոգիտ.
Տաշիր.	Լոռի. Թամբակի.
Աղդահան.	Աղդահան.
Կողբուտոր.	Խոզանի. Պօռչալու.
Կղարջք.	Կլարջէթի. Աբուսուշ։

38. ԺԴ. ՏԱՑՔ

Այս նահանգին[1] Երեւանի ռեղիմն են Ղուռմիլ քաղաքը, Սկեռնոտինջ գիւղը եւ այլն։

39. ԺԵ. ԱՅՐԱՐԱՏ

Այս նահանգը մեր թագաւորներուն սեպհականն

[1] Այս նահանգին գաւառները աշխարհագրական տախտակին վրայ նշանակուած չըլլալուն զանց կ'ընենք հոս դնելը։

Երկիրն ու բնակութեան տեղն էր, և Հայաստանեայց միւս նահանգներէն շրջապատուած։ Այս նահանգին մէջ Ծովի Գայլոպայ անուանով փոքրիկ լճակ մը կայ։

Ներքեւուն մէջ երևելի է Արդան կարմիր բառած ներկը, որ կարմիր որդ մ'է։ Ասկից զատ զանազան անասուններ, թռչուններ, պտուղներ ու հանքեր ունի։ Այս նահանգին մէջ Սուրբ Իջմիածնայ վանքը կը նստի մեր Սրբազան Կաթողիկոս Հայրապետն ամենայն Հայոց։

40. Այրարատ նահանգը տասնեվեց գաւառ ունի։

Հին.	Նոր.
Բասեան.	Հասան գալէ.
Օշական.	Տիատին. Նահիէ.
Երասխաձոր կամ Արշարունիք.	Զալդրան. Կաղզուան.
Բագրեւանդ.	Ալաշկերտ.
Մասեացոտն.	Գայէզիտ. Սուրմառի.
Կոգովիտ.	Գայէզիտ. (Գարոյնք).
Գուգարք.	Կարբի. Գառնիպազար.
Ամատունի.	Ամատունի.
Կոտայք.	Երևան.
Անի.	Կէօք չայ. (Երևան).
Բագրատունի.	Արտաշատ.
Գարեղեանք.	Վերին բասեն.
Տիրակ.	Կիւմրի.
Օրիշար.	—
Վանանդ.	Գարս.
Ներքին կամ Վերին Բասեան։	—

51. Բասեան գաւառին մէջն է Վաղարշաւան գիւղը։

42. Ընշարունիք գաւառին քաղաքներն են Երուանդաշատ, Բագարան, Երուանդակերտ։

43. Բագրեւանդ գաւառին քաղաքներն են Օտրնհաւան, Վաղարշակերտ. գիւղերուն մէջ երեւելի են Բագաւան և Իլուր, ուր որ Սուրբ Սահակ վախճանեցաւ։

44. Սասնոյ գաւառին գիւղերուն մէջ անուանի է Ընկոռի գիւղը։

45. Ռուին գաւառին մէջն է համանուն Ռուին քաղաքը։

46. Թիրակ գաւառը շատ բարեբեր է, գլխաւոր քաղաքն է Անի, որ Բագրատունի թագաւորներուն մայրաքաղաքն էր։

47. Վանանդ գաւառին գլխաւոր քաղաքն է Վարա, ուր տաճարորդ դարուն ազգիկ թագաւորութիւն մը սկսաւ և ըստ ելցաւ Թորգոմ-որ-Ի-ն Վարդ-ց։

48. Այս Այրարատ նահանգին մէջն են Վաղարշապատ քաղաքը, որ Այրակունի թագաւորներուն մայրաքաղաքն էր, և Այրատաշատ և Այրարատ քաղաքները։

ԴԱՍԱԳԻՐՔ
ԷՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆՑ ՏԻՐՈՒԹԻՒՆՔ.

ԴԱՍ Ա.

ՀԱՅԿ Ի՞նչ յաջորդները ՊԻՆՔ՝ ԱՐԱՄ

1. Մեր Աստուծոյ տէրութիւնը ջրհեղեղէն քիչ մը վերջն սկսած է. և իրեն առաջին նահապետ և գլուխ ունեցաւ Հայկ, որուն անունովը մենք ալ Հայ կ'ըսուինք։

2. Այս Հայկը Թորգոմին որդին էր, Թորգոմն ալ Դամերին որդին, Դամերն ալ Յաբեթին որդին, Յաբեթն ալ Նոյ նահապետին որդին։

3. Հայկը քաջ, գեղեցիկ, վեհանձն և խելացի մարդ մ'էր. իր երեւելի քաջութեան գործն եղաւ պատերազմի մէջ Բելը զարնելն ու սպաննելը։

4. Այս Բելը հսկայ մարդ մ'էր, որ Բաբելոնի աշտարակը շինողներուն լեզուները խառնուած ժամանակին՝ ուզեց ամենուն վրայ տէր ելլալ, և Աստուծոյ պէս պաշտուիլ ամենէն։

5. Միայն Հայկ գտնուեցաւ, որ ճշմա-

բիս Աստուածը ճանչնալով Էլլին պէս բըռ-
նաւորի մը հնազանդիլ ջուզեց. և երբ Էլ
շատ զօրքով պատերազմի եկեր էր Այկին վը-
րայ, Այկ ճշմարիտ Աստուծոյ զօրութեանը
վստահացած զարկաւ ապտնեց բռնաւոր Էլ-
լը, Վանայ ծովուն եղերքները՝ Այոց ձոր
ըսուած գաւառին մէջ, Քրիստոսէ 2300 տա-
րիի չափ յառաջ։

6. Այկ իր այս քաջութեան գործովը ա-
զատեց Էլլին ձեռքէն իր ազգատոհմը, և
ճշմարիտ Աստուածպաշտութիւնը աւելի տը-
ժամանցաւ անոնց սրտին մէջ. ուրեմն Այկին
նման առաջին գրաւ և նախահայր ունենալ-
նիս կրնանք մեզի պարծանք սեպել։

7. Այկին տեղն անցաւ իր որդին Ար-
մենակ։

8. Արմենակին տեղն անցաւ իր որդին
Արամայիս, որ Արմաւիր քաղաքը շինեց Ա-
րարատ գետին քով։

9. Արամայիսին տեղն անցաւ իր որդին
Սիսակ։

10. Սիսակային տեղն անցաւ իր որդին
Գեղամ։

11. Գեղամին տեղն անցաւ իր որդին Այ-
ուս։ Այս Այուսային ժամանակը թշնամիները
քիչ մը զօրացեր էին, և Այուսուն վրայ
սկսեր էին յարձակիլ. որովհետև ժամանակ
անցնելով Այկին և անոր որդւոց երկիրը
մուցեր էին, պէտք էր Այկին պէս ուրիշ
քաջ հայ իշխան մ'ալ, որ այս թշնամիները

վեհատեր. և ահա՛ այր անձն եղաւ Աբրամ։

— Մեր Աստն ի՞նչու Հայ կ'ըսուի. — Ո՞վ էր Հայկ. — Ի՞նչ երեւելի գործ ունեցաւ Հայկ. — ո՞վ էր Բել. — Հայկ ի՞նչու զարկաւ ոգեաներց Բելը. — Հայկին Բելն ոգեաներն ի՞նչ ապրիւնք ունեցաւ. — Հայկին տեղեակ անցաւ. — Ամենակին որո՞նք յանկարծակին վիճեցաւ Աբրամ. — Հարանց ժամանակին ը Հայաստան ի՞նչ վիճակի մէջ էր։

ԴԱՍ Բ.

ԱՐԱՄ

12. Հարանց արքին էր Աբրամ. և քաջ, աշխարհակալ և հայրենասէր իշխան մ'եղաւ, և Հայաստանը ազատց բռնաւորներու ձեռքէն։

13. Աբրամց թշնամիներն էին Նիւքար Խարշամ և Պայապիս։ Նիւքարը բռնեց, և աշտարակի մը ծայրն քամեր տուաւ Աբրամի քաղաքին մէջ։ Խարշամն ալ բռնեց ոգեաներց։ Իսկ Պայապիս Կապադովկիոյ իշխանը փախաւ վիճեցաւ Մինչերկրական ծովուն կղզիներին մէկուն մէջ, և անոր եկեղեցիներուն տիրեց և ապրեցաւ որ ամէնքն ալ Հայերէն խօսին։

14. Աբրամ մարդասիրաբար պատերազմեցաւ Նիւքարի, որ Աստուածոց թշնամի էր, և Աբրամին քարեկամութիւնը կ'ուզէր ունենալ։

15. Աբրամ իւր քաջութիւններով և աշխարհակալութիւններով այնքան երեւելի եղաւ որ օտար ազգերն սկսան Աբրամն կոչել Հա՛յերը, իր անունն առնելով։

— Ո՞վ էր Աբրամ. — Աբրամն թշնամիներն որո՞նք էին. — Աբրամ ու նմանս ի՞նչպէս վարուեցան իրարու հետ. — Օտար ազգերն ի՞նչու Աբրամն կը կոչեն Հայերը։

ԴԱՍ Գ.

ԱՐԱՅ, ԿԱՐԴՈՍ, ԱՆՈՒՇԱՒԱՆ

16. Աբրամն մահուանէն ետքը՝ ութսուն անցաւ իւր որդին Աբրայ, որ շատ գեղեցիկ, վիճակամոյն քաջ և առաքինի Հայ մ՚էր։

17. Աբրայ իւր գեղեցկութեամբը հատոր թշնամի ունեցաւ Թամիրամը, որ Աղբերամուցքոց վատ և սխրամոլ թագուհին էր։

18. Նուշութեամբ չյաջողելով բռնութիւնը ձեռք առեր էր Թամիրամ, որ իրեն չար կամքին հնազանդեցնէ Աբրայն. բայց Աբրայ քաջութեամբ և առաքինի վերհանձնութեամբ պատերազմելով Թամիրամին դէմ՝ մեռաւ, և իւր բարի ու առաքինի անուն կեղտ չթերաւ։

19. Թամիրամ Հայաստանի տիրեց, և անոր օրին և դիրքին գեղեցկութիւնը տեսնելով, ամուսնութեան բնակութեան հատոր գեղեցիկ քաղաք մը շինեց Թամիրամակերտ անուանով, որ հիմա Վան կ՚ըսուի։

20. Աբրային մահուանէն ետքը, Թամիրամին ձեռքը Հայոց վրայ իշխան եղաւ Աբրայի որդին Կարդոս։

21. Կարդոս ու Թամիրամ երկուքն ալ մեռան պատերազմի մը մէջ, որ կ՚ընէին Նիներա-

սին դէմ, որ Շամիրամին որդին էր ու անկէ ապատամբած։

22. Կարգուին որդին Նուշաւան, թէ արեան Նիմրոտին քոյր զեղի էր, բայց իր իմաստութեամբը և քաջութեամբը ազատեցաւ զերութենէն, և Այաստանի տէր եղաւ։

23. Նուշաւան խորագրութեամբ բաւական ժամանակ Ազգը կառավարելէն, և շատ բարեկարգութիւններ ալ ընելէն հայքը մեռաւ առանց զաւակ ունենալու։

— Արամին ով յաջորդեց. — Արայ ի՞նչպէս մարդ էր. — Ո՞վ էր Շամիրամ. — Արայ ի՞նչու պատերազմեցաւ Շամիրամին հետ. — Ո՞վ շինեց Վան քաղաքը. — Արայի տեղն ով անցաւ. — Շամիրամ ու Կարդոս ի՞նչպէս մեռան. — Կարդոսին տեղն ով անցաւ. — Նուշաւան ի՞նչպէս կառավարեց Ազգը։

ԴԱՍ Դ.

ՊԱՐԷՏ ԵՒ ՀԷ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ ՄԻՆՉԷ— ՍԿԱՑՈՐԴԻ

24. Նուշաւանին տեղն անցաւ Պարէտ, որ Այկայ մեռաց որդւոց ցեղերէն ինչած քաջ ու կրուելի անձ մ'էր։

25. Պարէտին յետոյ իրարու ետև յաջորդեցին Արամ, Օտան, Փառնակ Ա. Սուր, Հաւանակ, Վաշտակ, Այկակ Ա. Ամբակ Ա. Ադոնակ, Շաւարշ Ա. Նորայր, Վասակ, Կայ, Գառակ, Հրանտ, Ինձակ, Գրիգոր, Հօրայ, Օտրմայր, Շաւարշ Բ. Պերճ Ա. Իրուն, Պերճ Բ. Բարամ, Հայ, Յուսակ, Ամբակ Բ. Կայպակ, Փառնաւազ Ա. Փառնակ Բ. Սկայ-

Մոսկվա, 2
Ա. ՍՅՈՒՍԻՆՅԱՆ

որդի, որուն օրոնը Աստուծոյ Սենեքերիմ թագաւորին որդիքը Ադրամելէք և Սարասար խրեց Հայրը Սենեքերիմը սպանեալ փախան Այրարատ, որոնցմէ ձեւացան Ազգրուն, Գնունի և Սանասունք նախարարութիւնները։

26. Գառնակ Ա. ին ժամանակ Բանանուցիք Յեսուէն յաղթուելով, ոմանք Այրարատ եկան, որոնցմէ ձեւացաւ Գնթունեաց նախարարութիւնը։

27. Օրմայր քաջ և հզօր իշխան մ'էր, որ Տրդատայ օգնութեան գնաց, և շատ նշանաւոր քաջութիւններ ընելէն ետքը զար նուեցաւ մեռաւ. Թրխատէ 1200 տարի չափ յառաջ։

28. Պերճ Ա. հզօր և կորովի մարդ մ'էր, որ բաղար Այոց աշխարհին տիրեց, և շատ ազգեր նուաճեց, և շատ զօրք գումարելով նոր գիւղաքաղաքներ գրաւ։

— Ո՞վ էր Պարկա. — Պարկան մինչև Սկայորդի իրարու եկաւ որոնք յաղթեցին. — Սկայորդիին օրէնքն ի՞նչ պատ. հած է. — ի՞նչպէս ձեւացաւ Գնթունեաց նախարարութիւնը. — Ո՞վ էր Զարմայր և ի՞նչպէս մեռաւ. — Ո՞վ էր Պերճ Ա. և ի՞նչ նշանաւոր գործ ըրած ունի։

ԳԱՍ Ե.

ՊԱՐՈՅՐ Ա ԻՐ ՅԱՋՈՂԵՐԸ ԳԻՆՔ— ՏԻԳՐԱՆ Ա.

29. Պարոյր Սկայորդիին որդին էր, որ Այոց առաջին թագաւորն եղաւ։

30. Պարոյր իր ըրած քաջութեանը փոխարէն այս պատիւն առաւ Վարդանէն, որ

Արդանաբաղ Աստուծոյն թագաւորէն ապրատամբելով, օգնութիւն խնդրեր էր Պարսկէն. և երբ միաբան յաղթութիւնն ըրին, ան առնէ Աստրակէս իշխաց Աստուծոյն, և Պարսին ալ թագաւոր դրաւ Հայաստանի։

31. Պարսին յաջորդեցին եռեռ եռեռ, Հրաչեայ, Փառնաւաղ Բ. Պաճայճ, Կառնակ, Փառս, Հայկակ Բ. Երուանդ Ա։

32. Հայկակ Բ. և Նաբուպոդոնոսոր միացած Երուսաղէմն առին. և Հայկակ Շամբատ անուն ունուով Հրէայ իշխան մը բերաւ Հայաստան. ասոր սերունդը Խոսրովունի ըսուեցաւ, այս ցեղին մէջ եղող Խոսրով անուն երեւելի իշխանին անունովը։

— Ո՞վ եղաւ Հայկազանց առաջին թագաւորը. — Պարսիկ մ՚ենչպէս և ո՞ւրկից թագաւոր եղաւ. — Պարսիին որո՞նք յաջորդեցին. — Հայկակ Բ. ի՞նչ քաջութեան գործ ըրած ունի. — Խոսրովունեաց ցեղն ո՞ւրկից յառաջ եկած է։

ԳԱՍ Զ.

ՏԻԳՐԱՆ Ա. Ի՞Ր ՅԱՋՈՐԴՆԵՐԸ ՄԻՆՉԵՒ ՎԱՀԷ

33. Հայաստան թագաւորներուն խիստ քաջը, զօրաւորը, ճարտարամիտը և նշանաւորն է Տիգրան Ա. Երուանդայ որդին և անոր յաջորդը։

34. Տիգրանին մեծ քաջութիւնը յայտնի եղաւ, երբ Խուրա Պարսից թագաւորին հետ միացած, Ժդահակ Սարայ թագաւորին դէմ կը պատերազմէր, մէկ զարմելով գեղեցիկ վրաց զ՚Ժդահակը, և յաղթութիւն ստացաւ։

35. Տիգրան շատ բարեկարգութիւններ ընելէն ետքը մեռաւ. և յաջորդեց Վահագն, որ Տիգրանին որդին էր, և շատ քաջ ըլլալուն համար, շատ առատութիւններ ցուցուցին իր վրայ, և Վրացիք ալ զինքը կը պաշտէին։ Վահագնի ցեղը Վահունիք ըսուեցաւ։

36. Վահանդնի յաջորդեցին Ցռաւան, Ներսեհ, Օտարեհ, Ընդամ, Բագամ, Վան և Վահէ։

37. Վահէին դէմ պատերազմի եկեր էր Զէքսանդր Մակեդոնացւոց թագաւորը, որմէ հետու Վահէ օգնութիւն խրկեր էր Դարեհ Պարսից թագաւորին՝ Զէքսանդրին դէմ։ Պատերազմին մէջ շատ քաջութիւններ ընելէն ետքը՝ Վահէ ինկաւ մեռաւ, և վերջացաւ Հայկազանց թագաւորութիւնը 1800 տարի դիմանալէն ետքը, Քրիստոսէ 328 տարի յառաջ։

38. Վահէին մահուանէն ետքը Հայաստան Մակեդոնացւոց իշխանութեան տակ մնաց, և երբեմն Մակեդոնացի և երբեմն Հայ կուսակալներով կը կառավարուէր 180 տարիի չափ միջոցի մէջ, մինչեւ Արշակունեաց թագաւորութեան սկիզբը։

—Հայկազուն թագաւորներուն մէջ խիստ երեւելին ո՞վ եղաւ. — Տիգրանին մեծ քաջութիւնն ի՞նչ յայտնի եղաւ. — Ո՞վ էր Վահագն, և վրան ի՞նչ գիտելիք կայ. — Վահագնի որո՞նք յաջորդեցին. — Ի՞նչպէս վերջացաւ Հայկազանց թագաւորութիւնը, և քանի՞ տարի տեւեց. — Վահէէն վերջը Հայաստան որո՞նց իշխանութեան տակ մնաց, և մինչեւ ե՞րբ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐՔԱՅԱՆԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

ԴԱՍ Է.

ՎԱՂԱՐՇԱԿ

39. Առաջին Արշակունի թագաւորը Վաղարշակ եղաւ, որ Արշակ Մեծ Պարթեւաց թագաւորին եղբայրն էր, և ասոր կողմանէ ընտրուած. որովհետև ինչպէս Ասիոյ շատ մասերուն, անոնք ալ Հայաստանի տիրոջ Արշակ։

40. Վաղարշակ իմաստուն, խոհեմ և արդարասէր անձ մ՝ըլլալով, իր առաջին գործն եղաւ միտել թէ Հայոց ազգն ու Հայաստան գտնուող նախարարներն ուսկից յառաջ եկած են։

41. Այս բանիս համար Մար Աբաս Կատինա անուանով մէկը Նմրուտ խրկուեցաւ, ուր գնաց և մեծ դիւանին մէջ հին գրքերէն Հայկազանց ազգին պատմութիւնը գտաւ և բերաւ Վաղարշակին։

42. Վաղարշակին երկրորդ գործն եղաւ Մարիւզիկէս Կապադովկիայի իշխանին դէմ պատերազմը, որուն մէջ սպաննուեցաւ Մարիւզիկէս Հայոց քաջ և յաղթաբաղուկ իշխանները։

43. Վաղարշակ շատ բարեկարգութիւններ և նորանոր օրէնքներ հաստատեցին վերջը

22 տարի թագաւորելոյ մեռաւ. Դրխատամէ 128 տարի յառաջ։

— Առաջին Արշակունի թագաւորն ոմն եղաւ. — Վաղարշակ ինչպէս մարդ էր, և իր առաջին գործն ինչ եղաւ. — Ինչպէս գտնուեցաւ Հայկազանց Ազգին պատմութիւնը. — Վաղարշակին երկրորդ գործն ինչ եղաւ. — Վաղարշակ քանի՞ տարի թագաւորեց։

ԴԱՍ Ը.

ԱՐՇԱԿ Ա. ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Ա.

44. Վաղարշակին յաջորդեց Արշակ Ա. իր որդին, որ հօրը նման քաջութեամբ երևելի եղաւ. Պոնտացիներու դէմ, և ինչան յաղթութեան կոթող մը մնաց ծովուն եզերքը, և նիզակով զարկաւ ծակեց քարը։

45. Արշակ շատ նեղութիւն տուաւ Բարբարոսներուն, որ իրենց հրէական կրօնը թողուն. և 13 տարի թագաւորելոյ մեռաւ, յաջորդեց իր որդին Արտաշէս Ա։

46. Արտաշէս իր մանկութեանը մէջ կը ցուցնէր իր քաջութեան ձիրքը և մեծ տոգանդը, և հօրը աթոռն անցնելուն պէս առաջինները շանաւոր գործն եղաւ Պարթևաց թագաւորն իրեն երկրորդ ընելը. վասնզի մինչև այն տեղը Հայոց թագաւորները Պարթևաց երկրորդն էին։

47. Արտաշէս խոստացաւ որ և աշխարհակալ թագաւոր մ՚եղաւ, վասն զի ոչ միայն Պարսկաստանի տիրեց, և իր անունը տակ կոխել տկաւ. այլ և բոլոր Փոքր Ասիոյ, և հաւերով Յունաստան ալ անցաւ, և անոր մեծ մասին տիրեց։

48. Արտաշէս իր Արտաշատ աղջիկը Մեհրդատին տուաւ, որ Վրաց թագաւոր էր, և Կոմկատու լեռներուն և Սեւ ծովուն կողմերն ամոր յանձնեց։ Արտաշէսի զօրքերն այնքան բազմաթիւ էին, որ եթէ ամէնքը մէկտեղ հեռնեռէին՝ արեգակը կը խաւխանէր, և եթէ մէյմէկ քար հեռէին՝ բլուր մը կը ձեւանար. ինքն ալ իր զօրքերէն ապահովեցաւ՝ խառնուածեան մը մէջ. Թրխատոսէ 90 տարի յառաջ։

— Ո՞վ էր Արշակ Ա. և ի՞նչ քաջութեան գործ ունի.— Արշակայ ամ յաջորդեց.— Արտաշիսի առաջին նշանաւոր գործն ի՞նչ եղաւ.— Արտաշէս ի՞նչ արժանաւորութեամբ աշխարհակալ կոչուեցաւ.— Արտաշէս զի՞նչ իրեն փեսայացուց.— Արտաշիսի զօրաց բազմութիւնն ի՞նչպէս կը նկարագրուի.— Արտաշէս ի՞նչպէս մեռաւ։

ԳԱՍ Թ.

ՏԻԳՐԱՆ Բ.

49. Տիգրան իր հօրը Արտաշիսին մահէն երկու տարի յառաջ թագաւորած էր, բայց երբ ինքնագլուխ սկսաւ թագաւորել, խակոյն զօրք ժողովով հաւաքեց ապստամբիլ ուզող հարկատու ազգերը։

50. Այսց ամենէն երեւելի, անպարտելի, խոհական թագաւորներէն մէկն եղաւ Տիգրան, որ Հռովմայեցւոց դէմ շատ անգամ պատերազմելով մեծամեծ յաղթութիւններ շատ անգամ ձեռք ձգեց, և նշանաւոր եղաւ նոյն իսկ Հռովմայեցւոց քով։

51. Տիգրան Հռովմայեցւոց հետ երկարատև պատերազմներուն մէջ՝ իր Մեհրդատ

քեռայրը հրամանատար կարգած էր, որ նշանաւոր յաղթութիւններ ձեռք բերած ունի։

52. Տիգրան եռանէ էր միշտ Յոյներն ալ իր տակը նուաճած պահելու, որոնց շատ ծանր կուգար Հայոց իշխանութեան տակը մնալը. և երբեմն երբեմն ապստամբիլ կ'ուզէին։

53. Տիգրան հոգ կը տանէր կարգաւորութեան հետամնեալներ չմնալու, և արժանաւոր յարգանքը անոնց տալու։ Սելեւկիայեցոց թագաւորը եկաւ և բոլոր Հարեանց թագաւորութեան սիրեց։ Պարթեւներն ալ գնաց, բայց Երեկ Արքաներուն դշխոյն՝ շատ ընծաներով Տիգրանին սիրոն առաւ, ու խաղաղութեամբ եւ դարձաւ։

54. Սիհրդատ երբ տեսաւ իր Փառնակէս որդւոյն Հռոմայեցւոց կողմն անցնիլը, յուսահատեցաւ, և բերդի մը մէջ պաշարուած ըլլալով ինքզինքը ապտնեց, որ Հռոմայեցւոց զօրագլուխ Պոմպէոսին ձեռքը չինայ։

55. Տիգրան ալ Սիհրդատին ճանչնալն երբը ծերացած ըլլալով, և տեսնելով Հռոմայեցւոց յարձակումը, Արշակ Պարսից թագաւորին տուաւ նոքին նախագահութիւնը, որ իրեն ոգնէ։

56. Տիգրան իր ծերութեան տեսնելն Հայոց ու Պարսից բանակին ընդհանուր ապստամբելու դրաւ Բարզաֆրնան Հայ նախարարը։

57. Բարզաֆրնան բոլոր Արաբաց երկրին սիրեց, և Արաբացին ալ առաւ, շատ անգամ Հռոմայեցիներն ալ զարկաւ փոխուց։

58. Տիգրան իր խորին ծերութեան մէջ այս յաղթութիւնները տեսնելէն եւ իր մեռաւ 85 տարուան՝ 54 տարի թագաւորելով։

59. Պատմութիւնը կը ցուցնէ որ Տիգրան բոլոր կեանքը պատերազմներով անցուցեր է. և այս պատերազմներուն մէջ խիստ շատ անգամ յաղթող ելլալով, փառաւոր յիշատակ թողուցած է, և որուն կը վկայեն օտարազգի պատմիչներն ալ. շատ ազգեր նուաճեց, շատ թագաւորներ գերի առաւ, շատ բարեկարգութիւններ քրաւ, իսնամութեանդարդն ալ կը ճանաչէր, և Տիգրանակերտի մէջ մեծ ու փառաւոր թատր մը կանգնեաց էր։

— Ո՞վ յաջորդեց Արտաշեսի. — Ի՞նչպէս մարդ էր Տիգրան Բ. և ի՞նչ մեծ հարուստ ունեցաւ. — Տիգրան իր հռոմէացիներուն դէմ պատերազմներուն մէջ ո՞վ կարգած էր զօրապետ. — Տիգրան Յունաստանն ալ նուաճեց. — Տիգրան ի՞նչ հոգ կը տանէր կուսակրութեան, և ո՞րչ որ սեղերու տիրեց. — Մինդպատ ի՞նչպէս մեռաւ. — Տիգրան ի՞նչու Պարթից տուաւ նախագահութիւնը. — Հայոց և Պարթից բանակներուն ո՞վ ընդդիմակեաց եղաւ. — Բոլորովիրան ի՞նչ քաջութիւններ ըրաւ. — Տիգրան ի՞նչպէս մեռաւ. — Պատմութիւնն ի՞նչպէս կը ներկայացնէ զՏիգրանը։

ԳԱՍ Ժ.

ԱՐՏԱՒԱԶԴ Ա. Լ ԱՐՇԱՄ

60. Արտաւազդ Ա. Տիգրանայ որդին, հօրը տեղ թագաւոր եղաւ։

61. Արտաւազդ իր հօրը քաջ և աշխոյժ որդին ու անոր բարի ձիրքերը ջիրյուս փայլեցնելու իր վրայ։ Արդ ժամանակն Աղեքսանդրի

ռոմմայեցւոց զօրագլուխը ոմիրեց բոլոր Աստուծոյ երկրին։

62. Անոնիոս Արտաւազդայ հետ թշնամացաւ, որովհետև Արտաւազդ իր խոստմանը համեմատ չօգնեց Անոնիոսին, որ Պարսից հետ կը պատերազմէր։

63. Անոնիոս վրէժն առնելու համար խաբէութեամբ բռնեց Արտաւազդը, ու ոսկի շղթայի զարկած Եգիպտոս տարաւ, ուր Կղեոպատրա թագուհին զինքը գլխատել տուաւ. որով չորս տարի չափ առանձին թագաւորած եղաւ։

64. Արտաւազդին բռնուելէն ետքը Տիգրանին եղբօրորդին Արշամ թագաւորեց Հայոց վրայ։

65. Արշամ երկրին խաղաղութեանը և իր ապահովութեանը համար Հռոմայեցւոց հետ հաշտուեցաւ, և անոնց հարկատու եղաւ։

66. Արշամ երեսուն գործ մը չունենալով, երեսուն տարի թագաւորելէն ետքը մեռաւ. երեք տարի Դրիտատէ յաջորդեց։

— Տիգրան Բ. ին ո՞վ յաջորդեց. — Արտաւազդ իր հօրը քաջութիւնն արժանաւոր զաւակ եղաւ. — Անոնիոս ո՞վ էր. և ի՞նչու թշնամացաւ Արտաւազդին հետ. — Արտաւազդ ի՞նչպէս մեռաւ. — Արտաւազդին ո՞վ յաջորդեց. — Արշամ ի՞նչու հաշտուեցաւ Հռոմայեցւոց հետ. — Արշամ քանի՞ տարի թագաւորեց։

ԴԱՍ ԺԱ.

ԱԲԳԱՐ

67. Արշամին յաջորդեց իր որդին Աբգար, որ խելացի և հեզաբարոյ անձ մ'էր։ Սար

թագաւորութեան երրորդ տարին Հայք բարբարոսներուն Հռոմայեցւոց հարկատու եղան, և Օդոատոս կայսեր պատկերը Հայոց մեհեանները մէջ կախուեցաւ։

68. Աբգար պարտաւորեցաւ Երուզէսի զէմ պատերազմ բանալ. ըստ որում Երուզէս ամբարտաւանութեամբ ուզեց իր պատկերն ալ՝ կայսեր պատկերին քով կախել տալ Հայոց մեհեաններուն մէջ։ Աբգար այս պարսիկութիւնը յանձն չառաւ, և պատերազմով մերժեց, ու յաղթեց Երուզէսին։

69. Աբգար միտքը դրաւ որ հարկ չտայ Հռոմայեցւոց, և անկախ թագաւորութիւն վարէ, ըստ որում սկզբնէ զայնած էր՝ ըսելով որ Հռոմայեցւոցմէ անարգուեր են իր խրկած Հայ դեսպանները, որոնք Օդոատոս կայսեր մեռնելէն ետքը՝ Տիբերիոս կայսեր գահն ելլելու շնորհաւորելու գացեր էին։

70. Աբգարու անկախութեան խորհուրդը յաւաջ չգնայ. վասնզի Արտաշիր Պարսից թագաւորը նոյն օրերը մեռնելով, անոր որդւոց մէջ ծագած խռովութիւնը վերցնելու համար Պարսկաստան գնայ, և վերադարձաւ սաստիկ հիւանդութենէ մը բռնուած։

71. Հռոմայեցիք Աբգարու Պարսկաստան երթալէն կասկածեցան. վասնզի Աբգար ինքզինքը արդարացնելու համար դեսպան խրկեց Արեւոտանի վրայ վերակացու դրուած Հռոմայեցի իշխանին, որ Պարսկաստան երթալուն պատճառը իմացնէն։ Դեսպանները

Պալեատինու մէջ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ հրաշքները տեսնելով, վերադարձնուն պատմելին Աբգարու։

72. Աբգար առանց վարանելու հաւատաց որ Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուած և Որդի Աստուծոյ է. և որովհետև Պարսկաստան ստացած հիւանդութենէն տակաւին բժշկուած չէր, աղաչանաց թուղթ գրեց որ գայ զինքը բժշկէ։

73. Յիսուս Քրիստոս պատասխան գրեց Աբգարու, անոր հաւատքը գովելով, և խոստացաւ որ իր համբարձմանէն վերջը աշակերտներէն մէկը կը խրկէ զինքը բժշկելու։

74. Քրիստոսի Համբարձմանէն ետքը եկաւ Թադէոս առաքեալ, բժշկեց զԱբգար, քարոզեց Յիսուսի Քրիստոսի Սուրբ Աւետարանը, մկրտեց հաւատացեալները, հաստատեց Սուրբ Եկեղեցին, և Հայաստանի մէջ այն օրէն սկսաւ Քրիստոնէութեան ճշմարտութիւն և սուրբ հաւատքը։ Իսկ Աբգար 38 տարի արքայութիւնէ թագաւորելէն ետքը մեռաւ, Քրիստոսի 34 թուականին։

— Ո՞վ էր Աբգար. — Օգոստոս Հռոմայեցւոց կայսրը պատկերն ի՞նչու Հայաստանի մեհեանները մէջ կախուեցաւ — Աբգար ի՞նչու պատերազմ բացաւ Հերոդէսին դէմ. — Աբգար ի՞նչու իր անկախութիւնն ստանալ խորհեցաւ. — Աբգարու անկախութեան խորհուրդն յառաջ գնաց. — Աբգար ի՞նչպէս լսեց Յիսուսի Քրիստոսի անունը. — Հաւատաց Աբգար ի Քրիստոս. — Քրիստոս ի՞նչ պատասխան տուաւ Աբգարու խնդրանաց. — Քրիստոս ի՞նչ համբարձմանէն ետքն ո՞ր առաքեալն եկաւ ի Հայաստան։

ԴԱՍ ԺԲ.

ԱՆԱՆԻ ԵՒ ՍԱՆԱՏՐՈՒԿ

75. Աբգար մեռնելուն պէս մեր Աղգին թագաւորութիւնը երկուքի բաժնուեցաւ։ Անանէ Աբգարու որդին՝ Եդեսիայի մէջ թագաւորեց. իսկ Սանատրուկ Աբգարու քեռորդին Հայաստանի մէջ։

76. Անանէ քրիստոնէութիւնը թողուց, և կռապաշտութեան հետևեցաւ, ու շատ քրիստոնեայ նահատակեց։ Ինքն ալ 4 տարի միայն թագաւորեց, և նորոգեալ տուած պալատին մէջ՝ սիւն մը վրան իյնալով՝ մեռաւ։

77. Եդեսացիք իրենց թագաւոր՝ Սանատրուկն ուզեցին, երդումն առնելով անկէ, որ ազատ թողու զիրենք քրիստոնեայ մնալու։ Բայց յետոյ Սանատրուկ իր երդմանը դէմ գործեց, և շատ քրիստոնեայ նահատակեց. ուրանց մէջ էին իր Սանդուխտ աղջիկը, և Յուդէոս առաքեալը։

78. Սանատրուկ երեւելի գործք մը չունեցաւ. միայն Ամիդին քաղաքը, որ երկրաշարժէ աւրուած էր, աքանչելի կերպով նորոգեց, ու քաղքին մէջ տեղն իր արձանը կանգնեց ձեռքը դրամ մը տուած, իմացնելով՝ որ բոլոր ունեցածը ծախեր է։

79. Սանատրուկ որսի ատեն դիպուածով զարնուեցաւ նետէ մը, ու մեռաւ. 34 տարի թագաւորելէն ետքը. Քրիստոսի 65 թուականին։

— Արդար մեռնելուն պէս թագաւորութիւն ինչու եր-կաքի բաժնուեցաւ. — Ինանէ քրիստոնեայ մնոց. և ինչպէս մեռաւ. — Եղեռացիք ղմել իրենց թագաւոր ուզելին. և ինչ պայմանաւ. — Սանսարուկին երեւելի գործն ինչ եղաւ. — Սանսարուկ ինչպէս մեռաւ։

ԴԱՍ ԺԳ.

ԵՐՈՒԱՆԴ

80. Սանսարուկին յաջորդեց Երուանդ անուանով իշխան մը. որ մօր կողմանէ Արշակունի էր, բայց թագաւորական ցեղէ չէր։

81. Երուանդ թագաւոր եղաւ՝ իր քաջութիւններովը և քաղցրաբարոյութեամբը բոլոր նախարարաց սիրան իրեն գրաւած ըլլալովը, բայց Արտաշեսի տոլեռ չկրցաւ պահիլ. ինչպէս որ Արշակունի թագաւորաց կարգն ու սովորութիւնն էր։

82. Որ համար Երուանդ Սանսարուկին զաւակներին վախնալով, որոնք թագաւորութեան օրինաւոր ժառանգներն էին, մեռցաց զամէնքը. միայն Արտաշէս անուանով պզտիկ տղայ մը փախաւ ազատեցաւ Սմբատ Բագրատունիին ձեռքէ։

83. Երուանդ այս իր քրոջ անգթութեամբն ալ չկրցաւ հանգարտիլ, մանաւանդ զի Արտաշէսին Պարկատուն փախչելը զինքն անհանգիստ կ'ընէր, մանաւանդ որ Սմբատ այս բանին հոգ կը տանէր, ուստի շատ գիր գրեց Պարսից Դարեհ թագաւորին, նոյնպէս Սմբատին, որ Արտաշէս մարդի տղայ է, կամ՝ մեռցնեն, կամ իրեն բերեն յանձնեն։

84. Օրուան մը չարին այս միջոցները. ասսի Տրուանդ սկսաւ Հայոցմանը ամրացնել. Հռոմկլայեցւոցմէ օգնութիւն դրնելու համար, բայց Մինջոդեսին անոնց ալ սաւ, և Հայոցմանէն ալ աւելի հարկ կուտար. Տրուանդ աշխատ անուն. բաղաք մը շինեց, և ամուր պարսպով պատեց, և ամրոն ալ հոն փոխադրեց։

85. Ամենքմէ զատ շատ պատրաստութիւն ներ տեսաւ, ուրիշ շինութիւններ ալ ըրաւ. և շատ զօրքով պատերազմի պատրաստուեցաւ Խուրեան գեղին քով. վասնզի լուծ էր որ Սմբատ Դարեհին օգնութեամբը Բրաշէսը Հայոցմանն կը բերէր՝ թագաւոր նստեցնելու համար։

86. Բրաշիսին գալը լսելով, շատ նեղութիւններ միացան անոր բանակին. որով Տրուանդայ բանակը սկսաւ, միայն Պրոց և Մինջոդեսայ և ուրիշ վարձու զօրքը մնացին։ Այս փորձանքներուն արիութիւնը շատ ստոյգ էր հասկնալով Հայոց արիութեան հետ, որոնք սիրայօժիր սատակ կը պատերազմէին։ Նոցմէ սնանք Տրուանդի խօսք տուած ըլլալով՝ մեռցնելու զԲրաշէս, մահերնին աչք առած, պատերազմին մէջ եր Բրաշէսի վրայ յարձակեցան, Դիտակ կոչեցեալ հայ իշխանը՝ որ Բրաշիսի սիրելի որդին էր, և լաւ անոնց դիմաց, զարկաւ մեռցուց զամենն ալ, բայց ինքն ալ դէմքին կէսը կորսնցնելով՝ ինկաւ մեռաւ։

87. Երուանդ յուսահատած Երուանդ գաշտս փախաւ. հան հասան Հայոց զօրքերը. և պատերազմը քիչ մը տեւելէն ետքը, թերդին զօրքերն անձնատուր եղան. Երուանդ ալ Արտաշէսի զօրքերէն ապաւնուեցաւ, 20 տարի թագաւորելէն ետքը, Քրիստոսի 85 թուականին. որուն Արտաշէս փառաւոր շիրիմ մը կանգնեալ տուաւ, Արշակունի կնոջ որդի ըլլալուն համար։

— Ո՞վ էր Երուանդ. — Երուանդ ի՞նչպէս թագաւոր եղաւ. — Երուանդ ի՞նչպէս ուսկից էրկիւղ ունեցաւ. — Ո՞վ էր Արտաշէս, և ի՞նչպէս ապստամբեցաւ Երուանդի ձեռքէն. — Երուանդ իր այս բրած անգթութիւնովը բառնալու�եւ, և հանգիստ ըլլա՞ւ. — Ի՞նչ միջոց ձեռք առաւ Երուանդ իր բրնաւորութիւնն ապահովցնելու համար. — Երուանդայ բանակն ի՞նչպէս ակարացաւ. — Ո՞վ էր Գիսակ, և ի՞նչ սիրտով թիւն ցուցուց Արտաշիսի. — Երուանդ ի՞նչպէս մեռաւ։

ԳԱՍ ԺԴ.

ԱՐՏԱՇԵՍ Բ.

88. Սմբատ յաղթութիւնը կատարելէն ետքը, թագ դնելով Արտաշիսի գլուխը, զայն Հայոց թագաւոր ապակեց։

89. Արտաշէս թագաւորելուն պէս բանը իր բարերարները վարձատրեց. Պարսից զօրաց առաջ պարզեւ տուաւ և իրենց տեղը խրկեց. Սմբատը ընդհանուր ապարանքս ը բաւ, Արգամն ալ իրեն երկրորդ. Գիսակին Ներսէս որդին նախարարաց կարգն անցուց, և այն ցեղին անունը Գիսանեան դրաւ, Ի յիշատակ Գիսակին զԱրտաշէս ապատեալ ա տեն դէմքին կէսը կրծոցեալ մեռնելուն։

90. Պրոպէտ առոյգ և քաջ և պատերազմի հմուտ էր։ Լսեաց թագաւորը Հայաստան յարձակելոյ, Պրոպէտ ինքն զէմ պատերազմի ելաւ, և Լսեաց թագաւորին ոգան բռնեց։

91. Լսեաց թագաւորը ուզեց հաշտութիւն ընել, և խոստացաւ որ Պրոպէտ ինչ բան որ ուզէ՝ տայ. բայց Պրոպէտ յանձն չառաւ։ Յետոյ Լսեաց թագաւորին Սամթնիկ աղջկան ապաչելովը զինքն Պրոպէտ, և ինքն երդացրը թողուց, ու Սամթնիկն ալ իրեն կին առաւ։

92. Պրոպէտ ասելով որ Հռոմի կողմերը խռովութիւն կայ, Հռովմայեցւոց հարկ տալը դադրեցուց, և Հռովմայեցւոց զօրացն ալ քանի մը անգամ յաղթեց. բայց երբ Տրայիանոս կայսեր անթիւ բազմութեամբ գալը լսեց, վախնալով, շատ ընծաներ առած դիմացն ելաւ, և չվճարած հարկերն ալ վճարելով հաշտութիւն ըրաւ Տրայիանոսի հետ։

93. Պրոպէտ Հայաստանը թէ ուսման և թէ արուեստի և թէ մշակութեան մէջ ծաղկեցնելու փոյթ կը տանէր։ Օտար երկիրներէ շատ գաղթականներ բերաւ ու Հայաստանի մէջ բնակեցուց։ Հրաւիրեց ալ այնչափ յառաջ տարաւ, որ իր ատենը Հայաստանի մէջ ամենեւին չը գործուած երկիր չմնաց։ Սակայն զատ Հայաստանի լմերուն և գետերուն վրայ նաւագնացութիւն ու ձկնորսութիւն հաստատեց։

94. Արտաշէս 41 տարի թագաւորելէն ետքը մեռաւ Արտաշէս դաւառը. Քրիստոսէ 126 թուին։ Թագուհի Հանդէսը խիստ վատառաւոր էր. դագաղը ոսկիէ, անկողինը քեհելէ, ոսկեայ բանուած զգեստ հագած, գլուխը թագ, ոսկիով գործուած զէնքերն իր դիմացը դրուած. չորս կողմն իր որդիքը և աղգականները կեցած, անոնց քովը բոլոր թագաւորական պաշտօնեաներն ու նախարարները իրենց դնդերովը. նոյնպէս բոլոր զօրքն իրենց զէնքերովը պատերազմի երթալու պէս շարուած. առջևէն պղնձէ փող հնչեցնելով, և ետևէն սև հագուած լալկաններ, անոնց ետևէն ալ ժողովրդեան բազմութիւնը կ'երթար։ Այնպէս ազգին Հայերը, մինչև շատ մարդիկ ինքզինքնին սպաննեցին Արտաշիսի գերեզմանին վրայ։

— Ո՞վ զԱրտաշէս թագաւոր սպանէց. — Արտաշէս իր բարեբարեներն ի՞նչպէս վարձատրեց. — Արտաշէս Ալանաց դէմ ի՞նչու պատերազմի ելաւ. — Արտաշէս ի՞նչպէս հաշտուեցաւ Ալանաց հետ. — Արտաշէս ի՞նչպէս Տրդատիսոմ սիրուն առաւ. — Արտաշէս ի՞նչպէս ծաղկեցուց Հայաստանը — Արտաշէս ուր մեռաւ. և ի՞նչ թագուհն Հանդէս կառարուեցաւ վրան։

ԳԱՍ ԺԵ.

ԱՐՏԱՒԱԶԴ Բ. ՏԻՐԱՆ Ա. ՏԻԳՐԱՆ Գ. ԵՒ ՎԱՂԱՐՇ

95. Արտաւազդ իր հօրը գահը նստաւ։ Սակայն զբօսասէր և անկարգ կեանք մ'ունեցաւ, և օր մը որսի ելած առենը՝ ձիովը խա-

բունկ փոսի մը մէջ ինկաւ և կորուեցաւ, երկու տարի թագաւորելէն ետքը։

96. Ասուաղդայ վրայ առատել կը պատմուի թէ, այրի մը մէջ շղթայով կապուած կեցած է, և երկու շուն միշտ շղթան կը կրծեն որ փրթի, և Ասուաղդ ելլայ աշխարհիս վերջ ասց. բայց դարբիններուն ալի վրայ երկաթ ծեծելու ձայնէն շղթաները նուրբեն կը զօրանան։ Ասոր համար մինչև Գրիսանեանութեան առեն ալ կը գտնուէին միսամիս դարբիններ, որ կիրակի օրերն ալ քանի մ'անգամ ուռը ալին զարնելու սովորութիւնը կը պահէին։

97. Ասուաղդին յաջորդեց իր եղբայրը Տիրան Ա. որ իր եղբօրը նման զբօսաէր և անհոգ կեանք մը վարեց, և յիշատակի արժանի գործք մը չունեցաւ. 21 տարի թագաւորելէն ետքը, օր մը Համբան ձիւնի բնութեամբ մեռաւ։

98. Տիրանին մեռնելէն ետքն իր պզտիկ եղբայրը Տիգրան Գ. թագաւորեց։

99. Տիգրան արիստիրս ըլլալով միաբանեցաւ Պարսից Գերոյ թագաւորին հետ, և յաղթեց Հռովմայեցւոց, և անոնց Սեւերիանոս զօրավարը սպաննեց։

100. Տիգրան այնուհետեւ իր բանակին գլուխն անցած դէպ ի փոքր Ասիա յառաջ քալեց, ուր նոյն կողմերն իշխող թագուհի մը խաբեբայով բռնուեցաւ և բանտը մնաց։ Նոյն միջոցին Հռովիս Վերա՝ Սարկոս Ա-

ընդհուպ կայսեր դահակիցը Հայոց ու Պարսից վրայ դալով, երբ իմացաւ որ Տիգրան քրոնեւեր է, զանիկա ազատեց և Հայաստան խրկեց։

101. Տիգրան 42 տարի թագաւորելէն ետքը մեռաւ, և իրեն յաջորդեց Վաղարշ որդին։

102. Վաղարշ իր հօրը թագաւորութիւնն առաւծին պէս, Վարդգէսին շինած աւանն ամուր պարսպով ազատեց և անունը Վաղարշապատ դրաւ։

103. Հիւսիսային ազգերն ասոր օրովը Հայաստանի վրայ յարձակիլ սկսան. Վաղարշ քաջութեամբ անոնց դէմ պատերազմելով վռնտեց, բայց ինքն ալ զարնուելով մեռաւ, 20 տարի թագաւորելէն ետքը. Քրիստոսի 213 թուականին։

— Ո՞վ յաջորդեց Արտաշէսի. — Արտաւազդ ի՞նչպէս կեանք անցուց, և ի՞նչպէս մեռաւ. — Արտաւազդայ վրայ ի՞նչ առասպել կայ. — Արտաւազդայ ո՞վ յաջորդեց. — Տիրան ի՞նչ կեանք վարեց. — Տիրանին ո՞վ յաջորդեց. — Տիգրան քաջութեան գործ մ՚ունի՞. — Տիգրան ո՞ւր և ի՞նչպէս բանտարկուեցաւ, և ո՞վ ազատեց զինքը բանտէն. — Տիգրանին ո՞վ յաջորդեց. — Վաղարշապատ քաղաքը ո՞վ պարսպեց. — Վաղարշ ի՞նչ քաջութեան գործ ունի։

ԴԱՍ ԺԶ.

ԽՈՍՐՈՎ ՄԵԾ

104. Վաղարշին որդին Խոսրով իր հօրը տեղ թագաւորելուն պէս, առաջին գործն եղաւ հիւսիսային ազգերէն վրէժն առնել. ինչպէս որ ալ յաղթեց անոնց։

105. Յետոյ Հռովմայեցիները զարկաւ փախուց, որոնք Հայաստանը բոլորովին նուաճելու համար Հայոց վրայ եկեր էին։

106. Յետոյ Պարսից հետ պատերազմ ունեցաւ. ըստ որում Ներսէս անունով Պարսիկ իշխան մը Պարսից շատ նախարարներն իրեն հետ միաբանելով, Պարսից Երուանդ թագաւորէն ապստամբեր, անոր հետ պատերազմեր, և պատերազմին մէջ Երուանդ մեռեր, ու ինքն Երուաշիր թագաւորեր էր։ Եւ որովհետև խորով Երշակունի ելլալով, Երուանդին ազգական էր. ուստի Երուանդին վրէժն հանելու համար Երուաշիրին հետ պատերազմեցաւ, և միջեւ Հնդկաստան փախուց զայն։

107. Երուաշիրին ձարը հատնելով, մեծ պարգեւ խոստացաւ, ով որ երկնակաւ մը խորովը մեռցնէ։ Յանձն առաւ զայն Ենակ Պահլաւունի նախարարը, և ձեւանալով իբրեւ փախստական Երուաշիրին բռնութիւնները կրելն, եկաւ Հայաստան։ Ն'ամբան գալու առեն ծեռաւ իր որդին մեր սուրբ Կիրիպոր Լուսաւորիչը։

108. Ենակ իր միտքը դրած չարութիւնը քիչ ժամանակէն յաջողեցաւ կատարելու։ Որ մը որսի առեն զարկաւ սպանեց զխորով. ու երբ թագաւորին մարդիկը զինքը կ'ուզէին սպանել, փախչելու առեն գետն ինկաւ ու խղդուեցաւ։

109. Խորով չմեռած հրաման ըրաւ որ

Անակայ ցեղը թրէ անցընեն։ Սինայն Ս. Գրիգոր ազատեցաւ, որն որ Կեսարիա փախուցին։ Խոսրով այսպէս դառնապէս մահուամբ մեռաւ 48 տարի թագաւորելէն ետքը. Գրիգորիոսի 261 թուականին։

— Ո՞վ էր Խոսրով, և իր առաջին գործն ի՞նչ եղաւ. — Հռոմայեցիներուն հետ ի՞նչու պատերազմեցաւ. — Պարսից հետ պատերազմն ի՞նչու էր. — Արտաշիր ի՞նչ ճար մոռածեց Խոսրովին ձէռքեն ազատելու. — Խոսրովը մեռցնելն ո՞վ յանձն առաւ. — Անակ կրցաւ խորհուրդն յառաջ տանիլ. — Խոսրով շմեռած ի՞նչ հրաման բրաւ. — Ո՞վ ազատեցաւ այս կոտրածէն. — Քանի տարի թագաւորեց Խոսրով։

ԳԱՍ ԺԷ.

ԽՈՍՐՈՎԻՆ մահուանէն ետքը ՏՐԴԱՏԻՆ թագաւորելը։

110. Խոսրովին մեռնելէն ետքը, եկաւ Արտաշիր Հայաստան, և բոլոր Հայոց տիրեց. Խոսրովու ցեղը ջնջել ուզաւ, որոնցմէ Տրդատ՝ Խոսրովու որդին և անոր Խոսրովիդուխտ քոյրն ազատեցան Արտաւազդ Մանդակունին և Օտա Ամատունին ձեռք։

111. Արտաւազդ Մանդակունին Հռոմ փախուց զՏրդատը, ուր շատ քաջութիւններ ընելով՝ մեծ անուն առաւ Տրդատ։ Ընդամենը մէկ ձեռքովն երկու վայրենի ցուլերու եղջիւրներէն բռնելով՝ քաշեց փրցուց և զանոնք սպաննեց։ Որ մ՚ալ ձիրնիծայի մէջ, հակառակորդին ճարտարութեամբը Տրդատ կառքէն վար իներա. ասոր վրայ ասուիկ բարկանալով՝ վազեց հակառակորդին կառքին ե-

տեւէն այնպէս ուժով բռնեց, որ ալ ձիերը չկրցան յառաջ երթալ. ու բանս ամէն տեսնողներուն մեծ զարմանք պատճառեց։

112. Երթալով կը հասկնուէր Տրդատին անունը, մինչեւ իր փախուստին վիճակին մէջ իր քաջութիւններով Հայոց թագաւոր ըլլալու արժանացաւ։ Այսն զի Գթոց թագաւորն անհամար զօրքով՝ Հռովմայեցւոց վրայ դիմած, և պատգամ խրկած էր Գիսակզեսիանոս Հռոմայ կայսեր, որ երկրքին միայն մենամարտին։ Այս բանիս վրայ երբ Գիսակզեսիանոս շատրած էր, և ահա Տրդատը ներկայացուցին անոր, որուն խնայն կայսերական զգեստներ հագցնել տուաւ. և Տրդատ երբեւ կայսր Հռոմայ՝ ներկայացաւ Գթոց թագաւորին, անոր հետ մենամարտեցաւ, և բռնեց զայն, քերաւ Գիսակզեսի անուին առջեւ։

113. Գիսակզեսիանոս շատ ուրախացած, ուզեց Տրդատը վարձատրել. և երբ իմացաւ որ անիկա Հայոց թագաւորին որդին է, ապնոր թագաւորական զգեստ հագցուց, թագդրաւ գլուխը, և շատ զօրքով Հայաստան խրկեց, որ երթայ իր հօրը թագաւորութիւնն առնուլ։

— Խոսրովը մեռնելէն ետքը ո՞վ տիրեց Հայաստանի.— Արտաւազդ ո՞ր փախուց Տրդատը.— Հռոմայ մէջ ի՞նչ քաջութիւններ ըրաւ Տրդատ.— Ո՞րչափ ի՞նչ քաջութեամբ կրցաւ Տրդատ ելլալ թագաւոր Հայոց։

ԴԱՍ ԺԸ.

ՏՐԴԱՏ

Ի

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ի ՁԵՌՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

114. Տրդատ Կեսարիա հասնելուն պէս, շատ մը Հայ նախարարներ դիմացն եկան, և վինքը թագաւոր ընդունեցին։

115. Տրդատ Հայոց և Հոռոմեցւոց զօրքերով յառաջ անցաւ. և Թագուհ որ Արտաշիրի յաջորդն էր, քանի մ՝ անգամ դէմն եկաւ, բայց յաղթուեցաւ, և վերջապէս բոլորովին վռնտուեցաւ Հայաստանէն, և Տրդատ տիրեց բոլոր Հայաստանի։

116. Տրդատ Եկեղեաց գաւառէն անցնելու առեն, Ներսիսա չաստուածին շնորհաւորութիւն և զոհ մատոյց, և հրաման ըրաւ իրենները, որ նոյնն ընեն։ Որքան որ Հայաստանի մէջ կուապաշտութիւնը տիրած էր, բայց և այնպէս Աբգարու ժամանակէն քրիստոնէութիւնը պահուած էր, և այս տարբ հաւատքին հետեւողներ կային, որոնց մէջն էր և Ս. Գրիգոր Լուսաւորիչ։

117. Տրդատ հրաման ըրաւ Ս. Գրիգորի որ իրեն պէս զոհ մատուցանէ. և երբ չընդունեցաւ անոր հրամանը, շատ չարչարելէ առաւ. և իմանալով որ Ներսէս որդին ալ է, հրաման ըրաւ որ Արտաշատ բերին մէջի խոր

վիրապը նետեն, որ մահապարտներու համար օձերով լեցուն տեղ մ՚էր։

118. Այնուհետեւ հրաման հանեց, որ ամէն տեղ կռոց յարգանք մատուցանեն, և քրիստոնէութիւնը ջնջեն. առանիւ շատ քրիստոնեաներ նահատակուեցան, որոնց մէջ էին նաեւ Հռիփսիմեան Ս. Կուսանքները, որոնք Հռոմին հալածանքէն փախեր եկեր էին։

119. Տրդատ իր այս անդթութիւններուն պատիժն առաւ. օր մը որսի ատեն խոզի կերպարանք փոխուեցաւ և վայրենացաւ. իշխաններէն շատն ալ նոյն պատիժը կրեցին։

120. Այս պատժէն ազատեց զիրենք Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որ 14 տարի վիրապին մէջ Աստուծոյ հրաշքովը ողջ մնացած էր, և վերապէն հանուելով բժշկեց զՏրդատ, և բոլոր հարուածեալները. զԹրիատս ճշմարիտ Աստուած յայտնապէս քարոզելով. մկրտեց զամէնքը. Հռիփսիմեանց տուրբ կուսանաց մարմիններուն համար վկայարան շինեց, և ինքն ալ Կեսարիա երթալով Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Ս. Լեւոնդ Եպիսկոպոսէն։

121. Թրիատոնէութեան ճշմարիտ հաւատքը բոլոր Հայաստան շուտով տարածուեցաւ, վասն զի Տրդատ և Ս. Գրիգոր Լուսաւորիչ միանգամայն այս բանիս ի՛աշխատէին. բոլոր կուռքերը, քուրմերը և անոնց պաշտամունքը ջնջուեցան, և եկեղեցի շինուեցան. որոնց մէջ էն նշանաւորն ու փառաւորն ե-

գաւ Ս. Լիզմիածնայ Եկեղեցին, որուն ճարտարապետը նոյն ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս եղաւ, քան տեսչեան Սրբոյն Գրիգորի։

122. Տրդատ Խոսրովանոց վրայ պատերազմի եկաւ, որ Հայաստան արշաւել սկսեր էին, յաղթեց, և Հայաստանէն վռընեց։ Յետոյ Շապուհին դէմ պատերազմի եկաւ, և Շապուհ շատ նեղը մնալով, հաշտութիւն խոսեցաւ։ Որոր այս պատերազմներուն մէջ Տրդատին անվեհեր քնութիւնը և արիութիւնը կը փայլէին։

123. Այն միջոցներուն մէջ Նիկիոյ տուրբ Ժողովը կը կազմուէր ընդդէմ Արիոս հերետիկոսապետին։ Այս տուրբ Ժողովոյն ներկայ էր Հայոց կողմանէ Ս. Աբրահամէ՝ Ս. Լուսաւորչին որդին, որ Հաւատոյ Հանգանակը Հայատան բերաւ նոյն ժողովէն։

124. Այնուհետեւ Ս. Լուսաւորիչ Հայաստանի հոգեւոր կառավարութիւնը բաղրուվին Ս. Աբրահամէն յանձնեց. և ինքը դնաց Վանեայ այրը, ուր ճգնութեամբ և աղօթքով անցուց, մինչեւ որ սրբութեամբ վախճանեցաւ։

125. Տրդատ ալ տեսնելով նախարարաց անկարգութիւնները, որոնց ցաւէն թողուց թագաւորութիւնը, և Ս. Լուսաւորչի ճրդնարանը քաշուեցաւ։ Նախարարները մարդ խրկեցին որ գայ թագաւորութիւնը ձեռք առնէ, բայց երբ Տրդատ յանձն չառաւ,

գաղտուկ թոյն խմցուցին, ու այն քրիստոնեայ և քաջ արքային կեանքը կարճեցին, որ 56 տարի թագաւորեց. Քրիստոսի 342 թուականին։

126. Տրդատին օրովը փախստական եկաւ ի Հայաստան Մամգուն Ն՛ենացին իր ընտանիքովը. Տրդատ ատոր քաջասրտութիւնն ու հաւատարմութիւնը տեսաւ, երբ Մամգուն նուաճեց Սկիւթեայց ցեղը, որ Տրդատէն ապստամբած էր, ուստի Տրդատ ատոր սերունդը նախարարութեան կարգն անցուց անոր անուամբը Մամիկոնեան կոչելով, որուն ցեղէն երեւելի և ընտիր ազարակներ և իշխաններ մեծամեծ ծառայութիւններ ըրին Աղգիս և Հայրենեաց։

— Տրդատ ի՞նչ ընդունելութիւն գտաւ Հոյ նախարարներէն. — Տրդատ ի՞նչպէս տիրեց բոլոր Հայաստանի. — Եկեղեաց գաւառին մէջ ի՞նչ ըրաւ. — Հայաստան բոլորն ալ կռապաշտ էին. — Ս. Գրիգոր կատարեց Տրդատայ հրամանը և ի՞նչ եղաւ. — Ալ որո՞նք նահատակուեցան. — Տրդատ ի՞նչ պատիժ կրեց իր այս անգթութիւններուն համար. — Ո՞վ այս պատժէն ազատեց զՏրդատ. — Քրիստոնէութիւնը ի՞նչ պէս համարձակ տարածուեցաւ բոլոր Հայաստան. — Տրդատ ուրիշ ի՞նչ քաջութիւններ ըրաւ. — Ո՞վ գնաց Նիկիոյ տարբ ժողովը Հայոց կողմէն. — Ո՞ւր վախճանեցաւ Ս. Լուսաւորիչ. — Ի՞նչպէս մեռաւ Տրդատ. — Ո՞վ եղաւ Մամիկոնեան նախարարութեան նախահայրը։

ԴԱՍ ԺԹ.

ԽՈՍՐՈՎ Բ.

127. Տրդատին մեռնելէն ետքը մեծ ու ցաւալի խռովութիւն մնաց Հայաստանի մէջ։ Գնունեաց, Անաւաղեանց և Արդունի

եաց նախարարութիւններն իրարու հետ պա-
տերազմելով՝ իրարու ցեղերը ջնջեցին։ Ազ-
ուանք ապստամբեցան, ու Սանատրուկ անու-
նով մէկն իրենց վրայ թագաւոր դրին։ Այնպէս
Բակուր Աղձնեաց իշխանն ապստամբեցաւ։

128. Այս ամէն խռովութիւնները տես-
նելով միւս նախարարները, Ս. Լուսաւորչին
որդի Ս. Գրիգոր Կաթողիկոսին հետ միա-
ցած՝ Տրդատայ որդին Խոսրով Բը թագաւոր
դրին։ Հռոմայ Կոստանդ կայսրն ալ թագ ու
ծիրանի խրկեց Խոսրովին։

129. Խոսրով իր հօրը քաջութիւններէն
զուրկ էր, և մեղկ ու զբօսասէր կեանք մ'ան-
ցուց։ Բայց ասոր օրովը երևելի եղաւ Վա-
հան Մամիկոնեան զօրավարը, որ մեծ պատրաս-
տութեամբ հիւսիսային ազգաց դէմ եկաւ,
որոնք մինչև Վաղարշապատ եկեր հասեր էին։
Այսերն այն ատենն կատաղութեամբ պա-
տերազմեցան որ, ինչպէս իրենց սովորութիւ-
նն էր, թշնամեաց նեռ նեռելու ատեն թող
չտալով, սատիկ հալածեցին և վռնտեցին
զանոնք։

130. Խոսրով 9 տարի թագաւորելէն ետ-
քը մեռաւ, և իրեն յաջորդեց որդին Տիրան Բ.
որ Ս. Գրիգորէն հետ Կոստանդնուպոլիս
գնաց, ու հոն Կոստանդ կայսրը թագաւորե-
ցուց զինքը։

131. Թագուհ երբ Խոսրովին մահն ու
Տիրանին Կոստանդնուպոլիս երթալը լսեց,
պատեհութիւն սեպելով անհամար բազմու-

թեամբ Հայաստան խրկեց իր Ներսեհ եղբայրը. բայց Ուրշաւիր Կամսարական, որուն որ յանձնուած էր Հայաստան, միացնելով նախարարները՝ յաղթեց անոնց, և վռնտեց զՆերսեհը։

132. Տիրան Հայաստան դառնալուն պէս սկսաւ բոլորովին թուլութեամբ և անկարգութեամբ կառավարել, անոր համար Շապուհին հետ հաշտութիւն խօսեցաւ, և ըսկսաւ անոր ալ տուրք տալ, ինչպէս Յունաց կուտար։

133. Շապուհ սասսիկ բարկացաւ Տիրանին դէմ, վասնզի երբ Յուլիանոս ուրացող կայսրը Պարսից վրայ կ'երթար, Տիրան վախնալով՝ օգնած էր Յուլիանոսին։

134. Տիրան մեծ անգթութիւն մ'ըրաւ՝ Յուլիանոսին պատճառաւ. վասնզի Յուլիանոս իր սիրած պատկերը խրկեց Տիրանայ, որ եկեղեցւոյ մէջ կախել տայ. և երբ Ս. Յուսիկ Կաթողիկոսը դէմ դրաւ և չուզեց Աստուծոյ տաճարը պղծել, ու պատկերը ոտնակոխ կատրուեց, Տիրան բարկանալով՝ այնչափ ծեծել տուաւ Ս. Հայրապետը՝ որ վախճանեցաւ ծեծին տակ։

135. Բայց շատ չանցաւ իր պատիժն ալ առաւ Տիրան. վասնզի Յուլիանոս Պարսից հետ ըրած պատերազմին մէջ սպաննուեցաւ, և Շապուհ Տիրանէն վրէժ առնելու համար՝ բարեկամութիւն կեղծելով իրեն կանչեց Տիրանը, և անոր աչքերը կուրցնել տուաւ։ Այս-

սէս 11 տարի թագաւորեց Տիրան. (Քրիս-տոսի 364 թուականին)։

— Տրդատին մեռնելէն ետքն ի՞նչ եղաւ Հայաստան. — Այս խառնութիւններուն առաջքն ի՞նչպէս առնուեցաւ. — Խոսրով ի՞նչպէս կեանք կ՚անցընէր. և ո՞վ հիւսիսային աղգաց յարձակմունքն արգիլեց. — Խոսրովու ո՞վ յաջորդեց. — Շապուհ ի՞նչ առթով Հայաստան խրկեց իր Ներսեհ եղբայրը. — Տիրան ի՞նչու տուրք տալ սկսաւ Պարսից. — Շապուհ ի՞նչպէս բարկացաւ Տիրանին դէմ. — Տիրան ի՞նչ անզթութիւն գործեց. — Շապուհ ի՞նչպէս հանեց իր վրէժը Տիրանէն։

ԴԱՍ Ի.

ԱՐՇԱԿ Բ.

136. Տիրանին յաջորդեց իր որդին Արշակ։ Սակայն Արշակունի թագաւորաց մէջ ամենէն մանր, անկարգ և վատաբարոյն եղաւ. երբեմն Յունաց և երբեմն Պարսից խաղալիկ, և երբեմն այս երկուքին ալ առելի. և իր նախարարացն ալ առելի, և իր անզթութիւններուն ալ երեւելի։

137. Պարսիկ և Յոյն իրենց մէջ ունեցած առելութենէն. Յոյնը սիրեց զԱրշակ որ Պարսից չծառայէ, և երբ Արշակ մանկ էր, Յունաց կայսրը նեղանալով Թէոդոս զօրավարը շատ զօրքով Հայաստանի վրայ խրկեց։

138. Արշակ Յունաց Վալենտիանոս կայսեր բարկութիւնը լիկցնելու համար, Ս. Լուսաւորչի թառանը թողը Մեծն Ներսէսը Կոստանդնուպոլիս խրկեց, որ իր աքսանչելի և քաղցր բնաւորութեամբը հաճեցուց կայսրը, և ամէն բան կարդի դրաւ։

139. Նոր վրայ Պարսից թագաւորը Շա-

պուհ՝ Ասրշակին նեղացաւ, և պատեհ առթի մը կ'ըսպասէր Ասրշակէն վրէժն առնելու։

140. Ասրշակ ամօթ չսեպեց այսպէս մէյմը Յունաց և մէյմ'ալ Պարսից սիրան առնելու համար այնչափ վատանալը. այլև սկսեց Հայ նախարարներուն հետ ալ թշնամանալ, և ընտանի պատերազմ յարուցանել։ Ասրշակաւան անունով աւան մը շինեց, և որպէս զի շատով լեցնէ զայն բնակչաք, հրաման ըրաւ որ հոն փախչողը դատապարտեն աղատի. ասով անբնդդամ ու չարադործ մարդերով լցաւ աւանը։ Նախարարներն այս անկարգութեան դէմ դըրին, վասն զի շատերուն ծառաներն իրենց տիրոջ ինչքերը յափշտակած կամ գողցած՝ Ասրշակաւան փախած էին։ Ասրշակ մարդ չըրաւ անոնց բողոքը։

141. Աւտի նախարարները Շապուհին դիմեցին, որ Յունաց հետ ըրած պատերազմէն կը դառնար. Շապուհ օգնեց անոնց. բայց Ասրշակ իմանալով՝ փախաւ, և Պրատ ապաւինեցաւ։

142. Ասրշակ Պրատմէ շատ զօրք ժողվեց, եկաւ նախարարաց դէմ պատերազմի. արիւնհեղութիւնը սոսկալի էր, և բաւական ժամանակ տևեց։ Այն միջոցին Յունաց Պաղէս կայսրն ալ Ասրշակայ դէմ զօրք խրկեց, վասնզի լսեր էր որ Ասրշակ Պարսից օգներ է, անոնց Յունաց վրայ գալու առեղծ։

143. Ասրշակ բոլորովին շուարած, նորէն Ս. Ներսէսի խնկաւ, որ շատ դժուարու-

թեամբ նախարարները հաշտեցուց թագաւորին հետ. և վերջը Արշակին որդին Պապը պատանդ առած Կոստանդնուպոլիս Վաղէս կայսեր գնաց։ Բայց Վաղէս Արիանեան ըլլալով մեկէն քշել տուաւ Ս. Ներսէսը, և դաշինքն ալ ջնջուեցաւ։

144. Խելքը գլուխը ջերմաւ Արշակ. և Ս. Ներսէսի Հայաստանէն հեռացած տեղը՝ դարձեալ իր ոխը նախարարներէն առնել կ'ուզէր. շատ մարդ անիրաւութեամբ սպաննեց. և նորէն սկսան խռովութիւնները։ Հապա ալ իր ոխն առնելու համար, նորէն շատ զօրք խրկեց Հայաստան։ Նախարարներն ալ Արշակէն ձանձրացած՝ և անոր զայրացած, միացան Հապուհին զօրաց հետ, որպէս Արշակին ճարը հատնելով անձնատուր եղաւ Պարսից։

145. Հապուհ Արշակը շղթայակապ Անյուշ բերդը խրկեց. և որպէս զի դիւրաւ Հայաստանի տիրէ, ուզեց որ Հայերն արեւապաշտ ընէ։ Այս նպատակին գործակից գտաւ Ներուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան ուրացող նախարարները. որոնց թագ և պատիւ խոստանալով, շատ գօրքով խրկեց, որ երթան Հայերն արեւապաշտ ընեն։ Անոնք ալ եկան ամէն տարիք հասուցին Հայոց։

146. Արշակ ալ սեղմեալ այն ամէն չարիքները, յուսահատելով ինքզինքը սպաննեց. 18 տարի չափ Աղէն տունը կործանելու համար թագաւորելէն վերջը, Քրիստոսի 382 թուականին։

147. Պատմութիւնը կը ցուցնէ թէ Աբշակ իր անկարգ և անզգամ ընթացքովը ի՞նչ տխմարութեան պղտիկցուց տէրութիւնը, և ի՞նչ աղէտներ հասուց Աղգին։ Իր մէկ անգթութեան գործն ալ եղաւ, իր եղբօրորդին Դրնեղը անպարտ տեղն սպաննել տալը, նախանձոտ մարդոց առաջ ամբաստանութիւններուն ականջ դնելով։ Այս ալ բաւական չեղաւ, Դնեղին Փառանձեմ կնոջն ալ իրեն երկրորդ կին առաւ, որ Աբշակին առջի կինը Ալամալիսդան թողնաւորել տուաւ, ամբարիշտ քահանայի մը ձեռօք։ Ս. Հաղորդութեան մէջ թոյն խառնել տալով։

— Ո՞վ էր Աբշակ Բ. և ի՞նչպէս մարդ. — Ի՞նչու Յունաց կայսրը՝ Թէոդոս զօրագլուխը խրկեց Հայաստանի վրայ. — Ո՞վ ինչցուց Յունաց կայսեր բարկութիւնը. — Ի՞նչու Աբշակին և նախարարաց մէջ գժտութիւն ծագեցաւ. — Աբշակ ի՞նչու Վրաստան փախաւ. — Երբ ամէն կողմէ թշնամիներէ պաշարուեցաւ Աբշակ, ի՞նչ հնարք մտածեց. — Ս. Ներսէս ի՞նչ ընդունելութիւն գտաւ Վաղէսէն. — Ս. Ներսիսէն հեռանալէն ետքը ի՞նչ ընթացք ունեցաւ Աբշակ. — Ի՞նչու Պարսից անձնատուր եղաւ Աբշակ. — Ի՞նչ բրաւ Շապուհ զԱբշակը. և ի՞նչ միջոց գործածեց Հայաստանի տիրելու. — Աբշակ ի՞նչպէս մեռաւ. — Աբշակայ մէկ անգթութեան գործն ալ ո՞րն եղաւ։

ԴԱՍ ԻԱ.

ՊԱՊ

148. Հայաստան իր թշուառութիւններէն շատով ազատեցաւ. վասն զի Ս. Ներսէս որ Մեծն Թէոդոսին կայսր ընտրուելովը աքսորէն ազատած էր, և շատ պատուով կը կենար անոր քով, ու նոյն միջոցին եղած Կ. Պոլսոյ Ս. Յու-

զանոյն ներկայ գտնու

153. Սուրբն Ներսէս, մեր բարերարը, բոլոր այս աղէկութիւններէն զատ, ուրիշ շատ բարեգործութիւններ ալ ըրած ունէր։ Ամէն տեղ աղքատանոցներ և հիւանդանոցներ շինել տուած. շատ ալ օտարանոցներ, վանքեր և դպրոցներ հաստատած, ամէնն ալ իր եկամուտովը. որպէս զի հաստատ ու անխախտ մնան միշտ։

154. Ասանկ բարերար և սուրբ անձ մը՝ իր բարիքը վայելող անձէն թունաւորուեցաւ. վասն զի Պապ չկրցաւ դիմանալ Ս. Ներսէսի, որ անոր ըրած չարութիւնները և անկարգութիւնները կը յանդիմանէր. և անկէ ազատելու համար, գաղտնի թոյն տալ տուաւ. և անոր տեղը Շահակ անունով մէկը Կաթողիկոս դրաւ, առանց Կեսարիոյ Արքեպիսկոպոսին ձեռնադրել տալու, ինչպէս որ մինչև նոյն ժամանակը սովորութիւն էր։

155. Պապ ալ շատ չթագաւորեց. վասնզի Թէոդոս կայսրէն ապստամբելով, ինքն ալ բռնուեցաւ, և Կոստանդնուպոլիս խրկուեցաւ. ուր կայսրը գլուխը կտրել տուաւ, 7 տարի թագաւորութիւն ընելէն ետքը. Քրիստոսի 388 թուականին։

— Հայտնուն ի՞նչպէս ազատուցաւ իր թշնամութիւններէն. — Ս. Ներսէսի խնդիրն ընդունուեցաւ. — Պատերազմին ժամանակ ի՞նչպէս օգնեց Ս. Ներսէս. — Պատերազմը ի՞նչպէս վերջացաւ. — Պատերազմին վերջն ի՞նչ եղաւ. — Ս. Ներսէս ուրիշ ի՞նչ բարեգործութիւններ ըրած էր. — Ի՞նչպէս վախճանեցաւ Ս. Ներսէս. — Ս. Ներսէսի տեղն ո՞վ դրաւ Պապ. — Պապ ի՞նչպէս ժառաւ, և ո՞ւր։

ԳԼՈՒ ԻԲ.

ՎԱՐԱԶԴԱՏ, ԱՐՇԱԿ Գ. ՎԱՂԱՐՇԱԿ Բ. Ե ԽՈՍՐՈՎ Գ.

156. Թէոդոս Պապին տեղ Արշակունի կարգեաց մը Վարազդատ անուն՝ Հայոց Թագաւոր դրաւ։

157. Վարազդատ իր քաջութիւններովն երեւելի եղած էր Յունաց մէջ. անգամ մը հինգ Ընդոբարտացիի դէմ ելլելով՝ մէկմէկու եռեւէ հինգն ալ սպաննեց։ Երդի մը վրայ վազելով տասնեւեօթը հոգի եռեւէ եռև նետով զարկաւ սպաննեց. դարձեալ Հայաստան եկած ժամանակը Նփրատ գետին քանուերկու կանգուն լայն մէկ տեղէն անցին ցատկեց։

158. Վարազդատայ Թագաւորութիւնը շատ քիչ տեւեց. ըստ որում Վարազդատ չուզելով Յունաց զօրավարներուն իշխանութեան տակ ելլալ. միտքը դրաւ Պարսից օգնութեամբը ապստամբիլ։ Բայց այս բանս Թէոդոս լսած ելլալով, Վարազդատ Կոստանդնուպոլիս գնաց որ զինքն արդարացնէ. կայսրը բարկութենէն առանց տեսնելու մէկէն աքսորել կուտայ զինքը հեռու կղզի մը։

159. Վարազդատին տեղ՝ Պապայ երկու որդիքը Արշակը ու Վաղարշակը Հայոց վրայ Թագաւոր դրաւ Թէոդոս. որպէս զի եթէ մէկն ապստամբի, միւսը հաւատարիմ մնայ։

160. Արշակ Դուին քաղաքը դրաւ իր ա-

թառը, իսկ Վաղարշակ Երիզա քաղաքը, որ և ոչ տարի մը թագաւորելով մեռաւ։

161. Այն միջոցին Յոյնք և Պարսիկք ուրոշեցին որ Հայաստանին արևելեան մասը Պարսից իշխանութեանը տակ ըլլայ. և արևմտեանը՝ Յունաց. այս պատճառաւ Արշակ չուզեց Պարսից ծառայել. և Յունաց մասը գնաց, ու աթոռը Երիզա փոխեց։

162. Շապուհ նեղանալով այս բանից վրայ, Արշակունեաց ցեղէն խոսրով անուն մէկը թագաւոր դրաւ իր մասին վրայ։ Արշակ քիչ ատենէն մեռնելով, խոսրով Յունաց կայսեր խոստացաւ հարկը վճարել, եթէ անոր մասին ալ ինք թագաւորէ. և կայսեր հաճութեամբը բոլոր Հայոց վրայ թագաւոր եղաւ խոսրով գ։

163. Հայ նախարարներուն անմիաբանութիւնը, և Հայ թագաւորներուն թուլութիւնը արդէն առիթ տուեր էին, որ Պարսիկքը զօրանան և բռնանան մեր վրայ։ Ուրեմն խոսրով փոքր փոքրեց Պարսիցմէ ապրատամբելու, վասն զի տիրադաւ նախարարներուն մատնութեամբը Շապուհ անհամար զօրքով իր Արտաշիր որդին խրկեց, որուն դէմ չկրնալով ելլել խոսրով անձնատուր եղաւ. և այսպէս 5 տարի թագաւորելէն ետքը, շղթայակապ Ինչուշ քերդը բանտարկուեցաւ, Քրիստոսի 399 թուականին։

— Պապին տեղ ալ յաջորդեց. — Վարազդատ ինչ քաջութեան գործեր ունէր. — Վարազդատ ինչու կ. Պոլիս զբ-

նաց. — Վարագդատին տեղ որոնք դրուեցան. — Արշակ Ի՞նչ-
չու Յունաց մասը գնաց. — Պարսիկք իրենց մասին վրայ թա-
գաւոր դրին. — Խոսրով որշափ տարի եշխեց։

ԴԱՍ ԻԳ.

ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Գ.

164. Ընտաշէր՝ Խոսրովու տեղն անոր Վ ռ-
ամշապուհ եղբայրը թագաւոր դրաւ Հայոց։

165. Վռամշապուհ խնամուն մէկն ը-
լալով, իր տէրութեան սկսրութիւնը ճանչ-
նալով, ամենեին ապստամբութիւն չխորհե-
ցաւ. այլ ուզեց որ միշտ հնազանդ մնայ Պար-
սից, և իր երկրին բարեկարութեանը ջանայ.
մինչեւ որ ալ իր օրուանը քիչ մը խաղաղցաւ
Հայաստան։

166. Այս խաղաղութեան միջոցին կը
փայլէին Հայաստանի մէջ Ս. Սահակ Պարթև
Հայրապետը, և Ս. Մեսրոպ. որոնք Վռամ-
շապհոյ ուսումնասիրութիւնը տեսնելով, ե-
ւեւէ եղան հայերէն գրեր գտնելու, դպրոց-
ներ բանալով Աղգին ուսումնական կենդանու-
թիւն տալու. և յաջողեցան իսկ այս ձեռնարկ-
կութիւններուն մէջ։ Ահա այս ժամանակն է
որ Հայ Գրագիտութեան Սկիզբը կ'ըսուի,
և մեր շնորհալի Թարգմանչաց շնորհիւ ծաղ-
կեցան գպրութիւնք, և թարգմանուեցան
Աստուածաշունչ Ս. Սաստեանը, և ուրիշ շատ
գրքեր։ Այս թարգմանչաց մէջ երևելի են
Ս. Մեսրոպէն և Ս. Սահակէն զատ, Մովսէս
Խորենացի քերթողահայր, Եղնիկ քաջ հայ-

կաբան, Կրիւն տրամաբան, Նղիշէ քաղքրաբան, Ազան Երծրունի՝ որուն աշակերտն էր Պարար Ճարտասան, Մամբրէ վերծանող։

167. Ռամշապուհ 21 տարի թագաւորելէն ետքը մեռաւ, իր խաղաղասէր և առաւնասէր բարքովը՝ այոց տրոյն երախտագիտութիւնը վայելելու արժանաւորութեամբ։

168. Ռամշապհէն ետքը գարձեալ՝ այոց տոհմն տիրեալ եղաւ, վասն զի Պարսիկք օր ըստ օրէ զօրացած բոլոր Հիւսիսը թափէին՝ այոցը կրակապաշտ ընելու։ Այք ալ իրենց անմիաբանութիւնովը, և մանաւանդ ոչէտ նախարարներուն երկպառակութիւնով աւելի տկարացեր էին, և մօտ էր Երշակունի հզօր թագաւորութեան ի տպաւ բարձումը։

169. Ռամշապհոյ տեղ, ըստ որում Հնոր որդին Երուաշէս դեռ պզտիկ էր, թագաւոր նստաւ նորէն Խոսրով Գ. տղատած իր բանտարկութենէն. բայց մէկ տարիէն մեռաւ։

170. Խոսրովին տեղ՝ Յաղկերտ Պարսից թագաւորն իր որդին Տրդատը՝ այոց թագաւոր դրաւ, որպէս զի՝ այոցը դիւրաւ կրակապաշտ ընէ։

171. Ինչ մը ժամանակ ետքը Ռամ Պարսից թագաւորը՝ Ռամշապհոյ որդին Երուաշէսը թագաւոր դրաւ։

172. Այոց Տէրութեան կործանումն արդէն մօտեցած էլլալով, Երուաշէսի նման

զեղեն ու մոլի թագաւոր մը, և նախարարաց նման վատաբարոյներեր փոխեցին այդ կրօնաւորը։ Եւ ահա նախարարք ձանձրացած թագաւորութենէն ուներալէ, ամ չուզեցին Հայ թագաւոր, և աւելի աղէկ սեպեցին Պարսիկ իշխանով մը կառավարուիլը. և ամանկ խնդրեցին Պաւանէն։

173. Պաւամ արտաքսուած էր ամանկ խնդիր մը շատով ընդունելու. նախարարները մարիկ ջերին ամենեին Ս. Սահակին թախանձանքներուն, որ ի՛ազատէր և ի՛արտաքսուէր եա կեցնելու զանոնք այս չար խորհրդէն, աւելի լաւ սեպելով զեղեն, բայց հայ թագաւորի հպատակելը, քան օտարազգի ծառայելը. սակայն բան մը չկրնալով ընել, ինքն ալ բանտարկուեցաւ. Արտաշէս ալ աքսորեցաւ, 6 տարի թագաւորելէն ետքը։

174. Ահա այսպէս վերջացաւ Արշակունեաց հզօր թագաւորութիւնը Քրիստոսի 433 թուականին, անխոհեմ և կարճամիտ նախարարաց ձեռօք. և այն օրէն մէյմ՚ալ չշոկուեցաւ Հայոց բազդը. և միշտ ազէտք ու տառապանք կրելու դատապարտուեցանք։

— Խոսրովին տեղն ալ անցաւ. — Վռամշապուհ ինչպէս կառավարեց Հայաստանը. — Աստ տեղը որ Ս. Հայրերը կը փայլեին մեր Աղգին մէջ. — Վռամշապուհ որքան իշխեց. — Վռամշապհէն ետքը ինչ վիճակ ունեցաւ Հայաստան. — Վռամշապհոյ ալ յաջողեց. — Խոսրովու ալ յաջողեց. — Արտաշէս ինչ վարք ունեցաւ. — Նախարարները փոխանակ անոր վարքն ուղղելու, կամ մէկ ուրիշը թագաւորցնելու ինչ խորհուրդ ըրին։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՄԱՐՕՊԱՆՆԵՐՐ, ԿԻՐԱՊԱՏՆԵՐՐ, ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐՐ

ԳԱՍ ԻԴ.

ՎԵՀՄԻՀՐՃԱՊՈՒՀ ԵՒ ՎԱՍԱԿ ՍԻՒՆԻ

Մարպպանէր։

175. Ուրշակունեաց թագաւորութեան վերնալէն վերջը, Պարսից թագաւորն իր կողմէն իշխան մը կը խրկէր՝ որ Հայաստանի հարկը ժողվէ, և հոն նստելով զգուշանաց աշխարհին. այս իշխանը Մարպան կ'ըսուէր։

176. Առաջին Մարզպանն եղաւ Վեհմիհրճապուհ, որ քսնութեամբ լաւ մարդ մը ըլլալով՝ 14 տարի աղէկ կառավարեց. և յետոյ տար տեղը դրուեցաւ Վասակ Սիւնեաց իշխանը, որ Հայ ըլլալով Հայոց ուրախութիւն և վսխիթարութիւն տալու վոխանակ, չարիք չմեաց Հասուց Ազգին։

177. Պարսիկները Հայոց տէրութիւնը ձեռք ձգելէն ետեւ, անոնց կրօնին դէմ ալ յայտնի յարձակմունք ընելու եկան. որպէս զի զանիկա ալ Ջնջելով՝ ամբողջ ազգն իրենց մէջ ընկղմեն ու բոլորովին կորնչեն։ Բայց Հայոց մէկ մասն իր առաջին կրօնասէրը բաւական ըլլալով, և մանաւանդ իր կրօնասէրութեան եռանդէն յորդորուելով և մղուե-

լով, իր հոգելից առաջնորդներուն հետ մէկ տեղ բոլոր զօրութեամբ այս երկրորդ դարձնակալութեան դէմ զինեցաւ։

178. Յաղկերտ Բ. Պարսից թագաւորը Հայերը կրակապաշտ ընելու շատ հնարքներ գտնելուց։ Որպէս զի Ղազին մեծերը և պատերազմական զօրութիւնը Հայաստանէն հեռացնէ, հրաման ըրաւ և շատ զօրք բերել տալով, Հոնաց դէմ ելթը տարի պատերազմի աշխատցուց։ Այս միջոցին կրակապաշտութեան տխրմունք ըրաւ քանի եղող նախարարաց, որոնց մէջէն յայտնի դէմ դրաւ Պարեգին քաջ նախարարը, որ բանտարկուեցաւ։ Իսկ Ղազի գնաւնի և Մանուճիհր Ռշտունի իրենց զօրքովը Յաղկերտին բռնութենէն փախչելու առնին, Յաղկերտ եռեւնուն զօրք խրկեց և Ղարգել տուաւ զանոնք։

179. Յետոյ Յաղկերտ Վենշապուհ առնուալ քնիչ մը խրկեց Հայաստան, որ Հայերը շատ նեղեց. և թուղթ մ՚ալ գրել տուաւ Հայոց, տխրելով որ կամ պատասխանը տան և կամ Պարսից կրօնքը ընդունին. Յովսէփ Կաթողիկոս Ղազին միաբան հաւանութեամբը թղթին պատասխանը գրեց։

180. Այս պատասխանին վրայ Յաղկերտ կատղելով, հրաման գրեց, և բոլոր Ղազին մեծամեծ նախարարները Պարսկաստան կանչեց։

181. Երբ նախարարները ճարերնին հատած եկան Պարսկաստան գացին, Յաղկերտ զամէնքն ալ բանտ դնել տուաւ, և կ՚ըսէր

որ հաւատքնին ուրանան, և իրեն հետ երկրպագութիւն ընեն արեգական։

182. Նախարարները տեսնելով որ եթէ իրենք Յաղկերտի կամքը չկատարեն, պիտի նահատակուին հոն, և անդին բոլոր Հայաստան դիւրաւ ոչի տակ պիտի երթայ. ուստի աւելի աղէկ սեպեցին երեսանց հաճութիւն տալ Յաղկերտին կամացը։

183. Յաղկերտ մեծ ուրախութեամբ ընդունեց զանոնք, և մեծամեծ պարգեւներով, և շատ ալ մոգերով և զօրքով Հայաստան խրկեց, որ երթան բոլոր Ազգը կրակապաշտ ընեն։

184. Մոգերն աղէկ ընդունելութիւն գտան Հայերէն. վասն զի առաջին փորձի մը մէջ, Ս. Գեւոնդ և ուրիշ արժանաւոր քահանաներ ժողովրդեան հետ՝ ինչպէս որ Հայոց սովորութիւնն է՝ հատ գաւազաններով յարձակեցան մոգերուն վրայ, և աղէկ ջարդ մը տուին, անանկ որ լեղապատառ փախուցին զամէնքն ալ։

185. Իսկ ուրացեալ Նախարարները Յովսէփ Կաթողիկոսի ոտքն ինկնալով՝ զղջացին իրենց ակամայ ուրացութեանը վրայ, վասն զի Հայաստանի փրկութեանը համար առ ժամին այնպիսի զինքուած ըրեր էին. միայն Վասակ պրանց ուրացած էր, և ամէն հնարք իր գործ կը դնէր կրակապաշտութիւնը մտցնելու և Հայաստան։

— Աղշակունեաց թագաւորութեան վերնալէն վերջը ինչ

պէս կը կառավարուէր Հայաստան. — Առաջին մարզպանն ով եղաւ. — Ո՞վ յաջորդ դրուեցաւ Վեհմիհրշապուհին. — Պարսիկները Հայոց տէրութենէն զատ ուրիշ ի՞նչ ձեռք ձգել կը ջանային. — Յաջողեցա՞ւ Պարսից խորհուրդը. — Յազկերտ ի՞նչ հնարքներ բանեցուց Հայերը կրակապաշտ ընելու. — Դ՞ենշապուհ ի՞նչու եկաւ Հայաստան. — Հայոց գրած պատասխանները վրայ ի՞նչ ըրաւ Յազկերտ. — Նախարարները ի՞նչ ըրին. — Նախարարաց ուրացութիւնը տեսնելով ի՞նչ ըրաւ Յազկերտ. — Մոգերն ի՞նչ ընդունելութիւն գտան Հայերէն. — Ուրացեալ նախարարները ամէնն ալ զղջացի՞ն։

ԴԱՍ ԻԵ.

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

186. Վասակ գաղտուկ և յայտնի կը ջանար կրակապաշտութիւնը մուծանել Հայոց մէջ. և երբ կը բռնուէր, իսկոյն սուտ երդումներով և սուտ զեղջերով կ՚ազատուէր քարեսիրտ Հայոց ձեռքէն։

187. Բուռական չէին Պարսից երեսէն մեր Ազգին կրած յաւերը, պէտք էր որ աւելին կրեն Վասակ հայ նախարարին և մարզպանին ձեռքէն ալ։ Վերջապէս Վասակ կեղծ դիմակն երեսէն վար առաւ, և յայտնի համարձակ միացաւ Մինհրներսեհ Պարսիկ հաղարապետին հետ, որ անհամար զօրքով կուգար Հայերն ընկճելու, և բոլորովին ջնջել վերցնելու Քրիստոնէական սուրբ կրօնը։

188. Հայոց կենդանի և միշտ մնալուն բաղձն անանկ պարագայի մէջ անոնց սուրբ կրօնքէն կախում մ՚ունէր, և կրօնքն ալ այս պատերազմին վախճանէն. ուստի Հայերը մեծ փութով սկսան ամէն կողմէ գալ հանիլ Աւարայրը

գեղին քուլերը, իբրև վաթսուն և վեց հազար հոգի, և այս վերջին պատերազմը իրենց արիւնովը դնել։

189. Իրենց այն դառն վիճակին մէջ կարծես թէ հոգի առած և զօրացած էին Հայք. և բարձրացնելով իրենց ձայնը յերկինս, կոչեցին Աստուծոյ զթութիւնը յօգնութիւն, նուիրեցին Աստուծոյ իրենց սիրտը, և Քրիստոնէութեան նահատակներ ըլլալ ուխտեցին, և մինչև իրենց արեան վերջին կաթիլը պաշտպանելով Քրիստոնէութեան սուրբ հաւատքը, Քրիստոնեայ ու Հայ մեռնին։

190. Այնքան հաղարաւոր Հայերն ի մի ժողվող, և ի մի նպատակ առաջնորդող քաջ, ու հզօր սպարապետ մը կ'ուզէր. և Աստուած ալ պարգևած էր Քրիստոնէութեան այդ անձնվիրուն ախոյեանը, Վարդան Մամիկոնեանը, որ երկնային զօրութեամբ և Քրիստոսի սիրով զօրացած, Հայրենեաց գերութեան վիճակին մէջ Հայրենեաց փրկութեան խորհրդով և եռանդով վառուած էր։

— Վասակ ի՞նչ վատ ընթացք բռնած էր. — Վասակ կըբացաւ հանգիստ Պարսից հետ միանալ. — Հայերն ի՞նչպէս պատրաստուեցան մեծ պատերազմին. — Այնքան հաղարաւոր Հայոց առաջնորդն ո՞վ եղաւ։

ԴԱՍ ԻԶ.

Ս. ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ Ս. ՂԵՒՈՆԴԻ ԽՐԱԽՈՅՍՆԵՐԸ

191. Հոգեգալաւեան վերջերորդ երեկոյն, որ երկրորդ օրը պատերազմ պիտի ըլլար,

բոլոր Վարդանեանք խոստովանեցան և հաղորդուեցան Քրիստոսի սուրբ մարմնոյ և արեան, որպէս զի հոգւով և մարմնով զօրանան։

192. Հոն ամէնքը զուարթ էին, և զիրար կը խրախուսէին. հոն մոռցուած էին հայր, մայր, քոյր, աղգական, բարեկամ անուններըը, ամէնքը Եղբայր էին ի Քրիստոս յոյսն մեր, ամէնքն երկնային սուրբ սիրով վառուած, ամէնքն ալ մահուան պատրաստուած, որպէս զի յաւիտենական աշխարհին ուրախութիւններէն չզրկուին։

193. Հոն Ս. Վարդան վերջին և աղդու յորդոր մը տուաւ, որով կը ծանուցանէր թէ։ Ուրիշ պատերազմներու մէջ բրած քաջութիւններնուս փոխարէն՝ մարմնաւոր պատիւներ առած եմք. բայց այն քաջութիւնները անարդ և անօգուտ էին, և պարգեւներն ալ ոչինչ։ Հիմա որ չէթէ անցաւոր թագաւորի համար, այլ երկնից և երկրի ստեղծող և մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի համար պիտի պատերազմինք, ո՞րչափ պէտք է որ արի, անյողդող, և անենկուն սրտով դիմենք մեր թշնամւոյն վրայ, ու մեր արեամբը միշտ հաստատ պահենք Քրիստոսի սուրբ եկեղեցին Հայաստանի մէջ։ Ուստի, բատ Ս. Վարդան, չի վախնանք մեր թշնամւոյն բազմութենէն, չի վախնանք անոնց սուրերէն, որ միայն մեր մարմինը մեռցնելու կարող են և ոչ հոգինիս. կամ յաղթենք՝ որ բարձրանայ ճշմարտութիւնը, և կամ մեռնինք այնպէս՝ որ մեր թշնամւոյն զօրու-

թիւններդը խորտակուին, և ամօթահար լքանին։ Այժմ մեռնինք, բայց Հայ անուան և մեր քաջութեան մէջ վատութիւն չընդունինք։

194. Ս. Վարդան ինքեց խօսքը, և ինքն ու իրենները երկնային զօրութեամբ լցուած էին, և ամենուն դէմքը կը լուսափայլէր։ Այս արի արտերուն ուրիշ վեհ զօրութիւն թեքադրող մ'ալ կար. այն էր Ս. Ղևոնդ։

195. Ս. Ղևոնդ՝ առուածային արքայական պաշտամանց նուիրուած, և Հայաստանեայց եկեղեցւոյ անձնանուէր պաշտօնեայ, առուածային փառաց և Հայրենեաց պատուոյն նախանձախնդիր և արիասիրտ քահանայն, որ աշխարհիս մէջ էր՝ բայց զաշխարհ ուրացած, և իր երկնաւոր վարդապետին հաւատարիմ աշակերտ կը գտնուէր։

196. Սուրբն Ղևոնդ մարմնաւոր չհամբեց այն կռիւը, զոր հանդերձեալ էր ընել Ս. Վարդան. ուստի ինք և ուրիշ առաքինի կրօնաւորք փութացեր մտեր էին բանակին մէջ՝ վնասած արտերը քաջալերելու, վշտացածները մխիթարելու, և բոլորն ալ զինուորք Քրիստոսի ընելու։ Սուրբ Ղևոնդ իր ազգաս առնախօսութեամբը կը խրախուսէր զամէնքը. «Մի միայն առաքինեաց զօրացուցչին Յիսուսի Քրիստոսի ապաւինելու, անոր սիրոյն համար արտերդմելու, և մեռնելու իսկ։

197. Այնպէս ներգործեց Սրբոյն Ղևոնդի խօսքերն ընդհանուր բանակին վրայ, որ զանարքութեամբ միաբերան աղաղակեցին.

«Զոր հաւատարի մեր մահը արդարներուն մահին, և մեր արեան հեղումը աւրբ մարտիրոսաց արեան, և հաճի Աստուած այս կամաւոր պատարագիս, և իւր Նկեղեցին չտայ հեթանոսներուն ձեռքը»։

— Պատերազմին առջի օրը ի՞նչ պատրաստութիւն տեսան Վարդանանք։ — Ի՞նչ ոգւով կեցած էին։ — Վարդան ի՞նչպէս խրախուսեց իր զօրքը։ — Վարդանին պէս ուրիշ ո՞վ զօրութիւն կը թելադրէր։ — Ս։ Ղևոնդ ի՞նչ կատարելութիւններ ունէր։ — Ի՞նչու Ս։ Ղևոնդ և ուրիշ կրօնաւորք բանակը փութացեր մտեր էին։ — Ս։ Ղևոնդի ատենախօսութեան նպատակն ի՞նչ էր։ — Ի՞նչ ներգործութիւն ըրին Սրբոյն Ղևոնդի խօսքերը։

ԳԱՍ ԻԷ։

Ս։ ՎԱՐԴԱՆԱՆՑ պատերազմը, և ԱՏՐՈՐՄԻՋԴ Մարզպան։

198։ Աւաւտուն սկսաւ պատերազմը խիստ կատաղութեամբ, Աւարայրի դաշտին մէջ՝ Տղմուտ գետին եզերքը։ Պատերազմին տեսիլն անգամ մարդ կը սարսափեցնէր։ և քաջ Վարդանանք այնպիսի բուռն զօրութեամբ յառաջ կը վազէին Պարսից վրայ, որ Պարսից բանակին բոլոր կարգերն ու կարգադրութիւնները խառնակեցան։

199։ Անհնարին է նկարագրել Ս։ Վարդանայ գործած քաջութիւնները, և թէ ինչ արագութեամբ վազեց հատուր Պարսից բանակին մէջ տեղը։ ուր ինք ալ ամէն կողմանէ հարուած ընդունելով և վիրաւորուելով՝ ինքն կաւ մեռաւ, բայց զՆկեղեցին Քրիստոսի և զՀայաստան ազատեց, մեծ ջարդ և սարսափ

տալով Պարսից։ Նոյն օրը Ս. Վարդանայ հետ նահատակուեցան հազար երեսունեւվեց անձինք, որոնք ընդունեցին Քրիստոսի ձեռքէն երկնային փառաց անթառամ պսակը։ Ուստի և օրհնեալ է Վարդանայ և իր ընկերակցաց յիշատակը. ինչպէս որ ամէն տարի Հայաստանեայց ուղղափառ Ս. Եկեղեցին փառաւոր հանդիսիւ կը տօնէ անոնց սուրբ յիշատակը։

200. Ս. Վարդան նահատակուած ըլլալով և օրն ալ իրիկուն եղած, Հայերը պարկին ձեղքեցին Պարսից բանակը, և անցան գացին իրենց բերդերը քաշուեցան։ Իսկ Պարսիկները այն առիւծն արդարած էին Հայոցմէ, որ անոնց երեսը նայելու և անուններն տալու անզգամ էին հանդգնածներ։

201. Իսկ անօրէն Վասակ էր ամէնար տակաւին ուրիշ չարութիւններ ալ գործելու, խաբէութեամբ մարդ կը բռնէր և կամ կ'ըսպանէր և կամ հաւատքը ուրացնել կուտար։ Վասակ շատ աշխատեցաւ Հայաստանի բերդերն առնելու. ու ասանկով շատ տեղեր կը կործանէր ու կ'ապականէր և Ս. Յակոբ Կաթողիկոսն և Ս. Ղևոնդ քահանայն և ուրիշ քանի մը քահանայներ ձեռք ձգեց։

202. Յարկեր ալ ելլով այս պատերազմին անյաջող ելքը, և տեսնելով որ ամէն յոյս չկայ Հայերը կրակապաշտ ընելու. Արտաքին խնդիրը մարզպան դրաւ, հրամայեց տալով անոր որ ամենուն հետ սիրով վարուի, և Հայաստանը խաղաղցնէ։

203. Նկաւ Աղտարմիզդ. Հրաման տուաւ որ ամէն մարդ ազատ իր քրիստոնէութիւնը պաշտէ. միայն Ս. Յովսէփ Կաթողիկոսը, Աշտուհեաց Սահակ Եպիսկոպոսը, Ս. Ղևոնդ քահանան և ուրիշ քանի մը քահանայներ շղթայի զարկած Յազկերտին խրկեց։ Նոյնպէս հաճոյեց նախարարները որ Յազկերտին երթան, երդուելնալով որ իրենց վնաս մը չհասնի։ Վասակ ալ Պարսից տէրութեան ըրած ծառայութիւններուն փոխարէնն ընդունելու համար եկաւ Պարսկաստան գնաց։

204. Յազկերտ իրեն գացող եկեղեցականները, Ս. Ղևոնդ և անոր ընկերները Ղևոնդեանք չարչարանքներով նահատակեցուցաւ։ Նախարարներուն ալ ասիրեց որ հաւատքնին ուրանան. բայց անոնք մինչ չընչին և բանտը մնան. ուր երկար ատեն կենալէն և շատ տանջանքներ կրելէն վերջը, Ը. զամշապուհ անուն իշխանին ազդեցութիւնը ազատեցուն բանտէն ու Պարսկաստան կը կենային։ Իսկ Վասակ յանցաւոր և տէրութեան վնասակար գտնուեցաւ, և անարգութեամբ մահապարտից բանտը գրուեցաւ, ուր որդնոտելով ատեցաւ ու կրտուեցաւ. Քրիստոսի 452 թուականին։ Նա արժանի փոխարէնն ընդունեց այն ամէն չարիքներուն՝ որ իր Աստուծոյն և Հայրենեացը հատցուց։

— Ե՞րբ սկսաւ պատերազմը. ու ի՞նչպէս, — Ի՞նչպէս նահատակուեցաւ Ս. Վարդան. և ուրիշ քանի հոգի նահատակուեցան. — Պատերազմին վերջն ի՞նչ եղաւ. — Պատերազմէն վերջը տակաւին Վասակ ի՞նչ կը գործէր. — Յազկերտ ի՞նչ.

շու խրկեց Սարթմիզդը. — Սարթմիզդ երբ Հայաստան եկաւ ինչ ըրաւ. — Յաղկերտ իրեն գացող քահանայները, նախարարները և վասակն ինչ ըրաւ։

ԴԱՍ ԻԸ.

ԱՏՐՎՇՆԱՍՊ, ԱՆԴԵԿԱՆ ԵՒ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մարդպաններըը։

205. Յաղկերտ մեռնելով, անոր պզտիկ որդին Պերոզ Թագաւորեց Պարսից վրայ, որուն Թագաւորութեան վերջերը տարին Սարմենատ Պարսիկ իշխանը Հայոց մարզպան դրաւեցաւ, և նախարարներն ալ անոր հետ մեկտեղ Հայաստան խրկուեցան. որոնք եկան և սկսան միաբան աշխատիլ որ Քրիստոնէութիւնը պայծառանայ, և մերկացած Եղեռն նոր հոգի ու նոր եռանդ մը տան։

206. Սուտաց ալ գթայ մեր Եղեռն վրայ, և յարոյց երկրորդ Վարդան մը, Վահան Մամիկոնեանը, որ Ս. Վարդանայ Հայկական եղբօրը մեծ որդին էր։

207. Վահան թէ հոգեւոր և թէ մարմնաւոր ընտիր ձիրքերով զարդարուած քաջ և խոհակն անձ մ՝էր, որ մեծամեծ ծառայութիւններ ալ ընելով՝ շատ սիրելի եղաւ ամենուն, մանաւանդ Պարսից Պերոզ Թագաւորին։

208. Սիրտ որ Վահան անխոհեմութեան գործով մը իր այս կատարելութիւնները կ՝ազօտացնէր. վասն զի ուրացեալ հայ իշխանները նախանձելով անոր վրայ, ամբաստանեցին

Պերոզն թէ Վահան ապատամբել կ'ուզէ։ Վահան Պերոզին ինքզինքը արդարացնելու համար Պարսկաստան գնաց, և հաւատքն ուրացած դարձաւ Հայաստան, շատ պատիւ և պարգեւ առած։

209. Վահան իր այս անխոհեմութեան վրայ շուտով զղջաց, և խղճմտանքը զինքը կը տանջէր. մինչև որ Վրաց Վախթանկ թագաւորին Պարսկցմէ ապատամբելը լսելով, յարմար առիթ սեպեց ինքն ալ իրեն հետ միաբանած բարեպաշտ նախարարներով ապատամբելու Պարսկցմէ, և Քրիստոնէութեան պաշտպան ելլալով՝ կրօնապաշտութիւնը հաստատել և ջնջել Հայաստանէն։

210. Եղան նախարարներ, որոնց երբ Վահան խնդրուց իր ապատամբելը, փոխանակ օգնելու, ուրիշ գայթակղներու ալ արգելք եղան, ու անոնց եւեթ վազելով խափանեցին։ Իսկ որոնք որ յանձն առին ու միաբան կեցան, Վահանը ապարատեւ գրին՝ և Սահակ Բագրատունին ալ մարզպան՝ Արշակաւանայ տեղը, զոր պատերազմի մէջ սպաննեցին։

211. Պերոզ Վահանին ապատամբութիւնը լսելով, շատ ջանաց որ բռնութեամբ իրեն հնազանդեցնէ. առաջին անգամ Արմենիոյն իրեց շատ զօրքով, յետոյ Մինրանը, յետոյ Օրմիզդ հազարապետը, յետոյ Շապուհ Մինրանեանը։ Բոլոր ամենուն դէմ դրաւ Վահան քաջութեամբ, միշտ յաղթեց. և միայն անգամ մը Մինրանին դէմ պատերազ-

մեծ ժամանակը յաղթուեցաւ. ըստ որում Վ՝ախթանկ որ Հայոցմէ օգնութիւն ուզեր էր՝ խարդախութիւն ընելով Վ՝ահանը յանկարծակի բերաւ. և այս պատերազմին մէջ Սահակ Բագրատունին և Վ՝ասակ Վ՝ահանին եղբայրը նահատակ եղան։

212. Վ՝ահան այս պատերազմներուն մէջ. մէկ անգամին՝ աւելի յայտնի ըրաւ իր անպարտելի արիութիւնը։ Վ՝ասն զի Վ՝ահանին քով գտնուողները թուլնալով հեռացէն ցրուեցան, մնանկ որ հարիւր հոգւով մնացեր էր դրեթէ, և Թ՝ագաւորին 2–3000 զօրաց դէմ պատերազմի ելաւ, քանը մնացողներուն մէկ մասն ալ փախան, և միայն քանի մը իշխաններ և 30–40 ի չափ զինուոր մնացին. ասոնցմով Վ՝ահան դարձեալ զարկաւ ցրուեց Պարսից բանակը. վասն զի միշտ Ս՝ատուծոյ վստահացած էր. և Ս՝ատուած ալ ամէն յաջողութիւն կուտար անոր։

213. Պերոզ մեռնելով՝ անոր Վ՝աղարշ եղբայրը թագաւորեց Պարսից վրայ. ասիկա լսած ըլլալով Վ՝ահանց քաջութիւնները և անոր արդար պահանջմունքը, Նիխոր անուն խարազատը մարդը խրկեց Վ՝ահանին. որ եկաւ Վ՝ահանին դաշինքն ընդունեց, որոնց գլխաւորն էր թէ Պրխատնէութիւնը աղատ պրշտուի Հայաստանի մէջ և Պարսիկք բնաւ չխառնուին, և Վ՝ահան ալ գնաց Պարսից դուռը ու նոյնն երդուեցաւ թագաւորին, և ընդհանուր պարտակա դրուելով դարձաւ

Հայաստան. Ընդեկան Պարսիկ իշխանն ալ Հայաստանի մարզպան եղաւ։

214. Յետոյ երբ Ընդեկան հարկաւոր գործի մը համար Պարսկաստան դարձաւ, շատ գովեց Վահանայ իմաստութիւնը, և անոր քաջութիւններեր. և խորհուրդ տալով Վաղարշին որ զՎահանը մարզպան դնէ, Վաղարշ ալ այնպէս ըրաւ. և Հայաստան մեծ ուրախութիւն զգաց, քրիստոնեայ, քաջ ու իմաստուն և իրեն սիրելի Հայ իշխանի մը մարզպան դրուելուն վրայ։

215. Հայոց ուրախութիւնը քիչ տևեց, ըստ որում Կաւատ թագաւորելով Պարսից վրայ, նորէն կրակապաշտութիւն ուզեց Հայաստանի մէջ մուծանել. որով ստիպուեցաւ Վահան նորէն պատերազմի սկսիլ, և վերատեց քուրմերը և նոր մարզպանը, որոնք եկեր էին Հայաստան։ Բայց երբը Կաւատ Յունաց դէմ պատերազմ ունենալով, հաշտութիւն խօսեցաւ Հայոց հետ. և Վահան 25 տարի չափ Հայաստանը կառավարելէն վերջը վախճանեցաւ. Քրիստոսի 510 թուականին։

216. Վահանին օրով կը ծաղկէր Յովհան Մանդակունի Կաթողիկոսը. որ հոգւով Սրբոյ լցուած նեղհուն անձ մ'էր, և բայց ի բազմապատիկ շինութիւններէ և ուրիշ եւրախութիւններէ, եկեղեցական սրբազան ժամատրութեան ծաղկեցուցիչ ալ եղաւ։

--Յաղկերտի յաջորդը Պերոզ ի՞նչպէս վարուեցաւ Հայոց հետ. — Ո՞վ եղաւ Հայոց համար երկրորդ Վարդան մը. —

Վահան ի՞նչ ձիւրք ունէր։ — Վահան ի՞նչ անխոհեմութիւն գործեց։ — Վահան իր այս անխոհեմութեան կեղտն ի՞նչպէս ջնջեց։ — Բոլոր նախարարներն ալ միաբանեցան Վահանին հետ։ միաբանողներն ի՞նչ ըրին։ — Պերոզ Վահանին ապստամբութիւնը լսելով ի՞նչ ըրաւ։ — Վահան ի՞նչպէս յառաջ տարաւ այս պատերազմները։ — Վահան իր անպարտելի արիութիւնն ո՞ւր յայտնի ըրաւ։ — Ի՞նչպէս խաղաղացաւ Հայաստան։ — Վահան ի՞նչպէս մարզպան եղաւ։ — Վահանին մարզպան ընտրելն եղբը միշտ խաղաղ մնաց Հայաստան։ — Քանի՞ տարի իշխեց Վահան։ — Ո՞վ էր Յովհան Մանդակունին։

ԳԱՍ ԻԹ։

ՎԱՐԴ, ԲՈՒՐԴԱՆ, ՄԺԵԺ ԳՆՈՒՆԻ, ԴԵՆՇԱՊՈՒՀ, ՎՇՆԱՍ ՎԱՀՐԱՄ, ՎԱՀԱՋԴԱՏ, ՍՈՒՐԷՆ ՃԻՀՐ, ԵՎԴՈՆ ՃԻՀՐ մարզպանները։

217. Վահանին տեղն անոր զղջիկ եղբայրը Վարդ մարզպան եղաւ, որ ջորա տաբիէն մարզպանութենէ ինկաւ։ և Կաւատ անոր տեղը Բուրզան անվախան Պարսիկը մարզպան դրաւ, որ երեք տարի Հայերը շատ նեղեց։

218. Բուրզանին առեալ երբ Հոնք Հայաստանի վրայ վազելով շատ աւերմունք կ՚ընէին, Մժեժ Գնունի կորիւն Հայ իշխանն անոնց դէմ ելլելով, ապէկ ջարդ մը տալով փախուց։ Մժեժին այս քաջութիւնը լսելով Կաւատ, զինքը մարզպան դրաւ Բուրզանին տեղը, որ 30 տարի խաղաղութեամբ զՀայքը կառավարեց։

219. Մժեժին մահուանէն ետքը Խոսրով Պարսից թագաւորը Դենշապուհ Պարսիկ իշխանը մարզպան դրաւ։ Այս առեղը Մամիկոնեան

Բ. Որբազան Կաթողիկոսը Հայոց տոմարը նորոգեց, և թուականն մ՚ալ հաստատեց, որ Քրիստոսի 551 թուականէն կ՚ըսկսի։ Սակայն Ս. Կաթողիկոս տեսնելով Դենշապուհին աղանդաւորութիւնները, աղաչեց Խոսրովին. և Դենշապուհն տեղ խրկուեցաւ Վշտաս Վահրամ իշխանը. ասոր յաջորդեց Վարազդատ, ասոր ալ Սուրէն Ռէհր՝ Խոսրովին ազգականներէն մէկը։

220. Սուրէն ալ շատ չարիք հասուց մեր Եղեմն, և Սանուէլ Սամիկոնեան Հայ իշխանը սպաննեց։ Սանուէլին եղբայրը Վարդան այս բանիս վրայ բարկացած զօրք ժողվեց վազեց Դուին քաղքին վրայ, ու քաղաքն առնելով Սուրէնը սպաննեց. ու զօրքն ալ ջարդեց ու ցրուեց։

221. Խոսրով այս բանս լսելով, շատ զօրք խրկեց Վարդանայ վրայ. և Վարդան թէպէտ քիչ որ էր, բայց վարպետութեամբ պատերազմելով յաղթեց անոնց ու ցրուեց։

222. Խոսրով աւելի մեծ բանակ մը խրկեց Վարդանայ վրայ. Վարդան ալ իր բնակութիւնքն առաջ՝ Կ. Պոլիս Յունիանոս կայսրը գնաց, և անկէ օգնութիւն ուզեց. կայսրն ալ օգնեց՝ շատ զօրք խրկելով Հայաստան, որոնց հետ Վարդան ալ վերադառնալով՝ թէպէտ պատերազմեցան Պարսից հետ, բայց վերջապէս Պարսիկք յաղթող եղան, և Հայաստան Պարսից ձեռքը մնաց։

223. Խոսրով ուզելով Հայոց սիրտը շա-

հիլ, սկսաւ քաղցրութեամբ վարուիլ անոնց հետ. և Վ ղան Ն'ինր խաղաղասէր Պարսիկը մարդպան դրաւ. որ 15 տարի կառավարութիւն ըրաւ, և վերջին Պարսիկ մարդպանն եղաւ. Քրիստոսի 578 թուականին։

— Վահանին տեղն ո՞վ դրուեցաւ մարդպան. — Վարդին տեղն ո՞վ դրուեցաւ մարդպան. — Բուզանդին ասենն որ Հայ իշխանն երեւելի եղաւ իր քաջութիւնովը. — Մժէժ իր քաջութեանն ի՞նչ փոխարէն առաւ. — Մժէժէն ետքն ո՞վ մարդպան դրուեցաւ. — Մովսէս Կամսարականն ի՞նչ երեւելի գործ ունեցաւ. — Դենշապուհին տեղ որո՞նք դրուեցան մարդպան. — Սուրէն մարդպանն ի՞նչպէս վարեց իր իշխանութիւնը. — Սուրէնին մահը ինչով ի՞նչ ըրաւ խոսրով. — Խոսրովին մեծ բանակ խրկելն երբ ետց Վարդ՝ ի՞նչ ըրաւ. — Զո՞վ Սուրէնին տեղ մարդպան դրաւ խոսրով։

ԳԱՍ Լ.

ՍՄԲԱՏ ԲԱԶՄԱՅԱՂԹԴԱՒԻԹ ՍԱՀԱՌՈՒՆԻ ԵՒ ՎԱՐԱԶՏԻՐՈՑ մարդպաններէրը։ ԴԱՒԻԹ, ՎԱՐԱԶՏԻՐՈՑ, ՍՄԲԱՏ ԿԻ-ՐԱՊԱՂԱՊՆԵՐԸ։ ՀԱՄԱԶԱՍՊ, ԳՐԻԳՈՐ, ԵՒ ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ պապրէկներէրը։

224. Ն'ինր Վ ղանին տեղը մարդպան դրուեցաւ Սմբատ Բազմայաղթ իր անուանի քաջութիւններուն համար. ասիկայ 8 տարի մարդպանութիւն ընելէն ետքը մեռաւ։

225. Սմբատին տեղը Դաւիթ Սահառունի Հայ իշխանը մարդպան դրուեցաւ, որ 23 տարի մարդպանութիւն ընելէն ետքը, վախնալով Պարսիկներէն՝ թողուց իշխանութիւնը և Կոստանդնուպոլիս փախաւ։

226. Դաւիթ Սահառունիին տեղը ե-

զան Մուշեղ Մամիկոնեանին և Գայլ Վահանին՝ Պարսից հետ ըրած պատերազմները, ուրանք յիշատակաց արժանի են։ Բայց որում Խոսրով Պարսից թագաւորը Յունաստան արշաւած միջոցին, Մուշեղ Տարօնոյ իշխանին հրաման խրկեց որ ինքն ալ իր զօրքովը Յունաց երկիրն արշաւէ։ Մուշեղ Պարսից դէմ ատելութիւն ունենալով, չհնազանդեցաւ թագաւորին հրամանին. որով Խոսրով իր վերադարձին 30000 զօրքով իր Մինհրան քեռորդին խրկեց Մուշեղին վրայ։ Մուշեղ ալ Գայլ Վահանն ամոր դէմ խրկեց. որ զանազան հընարքներով բոլոր Պարսից զօրութիւնը ջնջեց, և որդւոց որդի ժամանակ մը պատերազմելէն վերջը հուսկ ապա եռ կեցան Պարսիկք։

227. Դաւիթ Սահառունին տեղը Սմբատ Բագրատունին որդին Վարազտիրոց մարզպան դրուեցաւ, որ 8 տարի՝ն եռքը ընտանիքն առաւ Կ. Պոլիս փախաւ։ Այս կը վերջանայ մարզպանութիւնը, և Յունաց կայսեր կողմանէ հի-բապաղոպ կամ պապրի անուն դրուած իշխաններուն կառավարութիւնը կ'ըսկսի։

228. Ներսէն կիւրապաղատն եղաւ Դաւիթ Սահառունին, Տրիատոսի 632 թուականին։ Բայց հազիւ թէ երեք տարի անցաւ, իշխաններն ու զօրքն ատոր դէմ եղան և վռընտեցին. և իրենք սկսան իրարու հետ հակառակութիւն ընել. կռուիլ, և Այսուսանը տակնուվրայ ընել։

229. Հայոց այս անմիաբանութիւնը և երկպառակութիւնը պատժեց Աստուած, առնոց գլխուն՝ նոր և արիւնռուշտ թշնամի մի ալ աւելցնելով։ Բաւական չէին մերթ Պարսից եմ և մերթ Յունաց ներքուներնիս, և այս տրկութիւններուս մէջ ալ Իրարու անհաշտ թշնամի ըլլանիս. Հոգարացիք ալ յանկարծ Ասորեստանի կողմէն սկսան Հայաստան արշաւել, և դէմ դնող ալ չըլլալով, հաւած տեղերին աւերեցին և քանդեցին, մինչեւ Տարօն գաւառը։

230. Հոն Տիրան Սամիրամեան տասիկ պատերազմ տուաւ Հոգարացւոց դէմ. բայց որովհետեւ ոմանք հոյ նախարարները առաջուց մոլի չըրին հայրենատէր Տիրանին, և չեկան միաբանելու անոր հետ, և որովհետև պատերազմին ժամանակն ալ Սահուռ Ընձեւացի անարդ և վատթար իշխանն իր զօրքով թշնամեաց կողմն անցաւ, անոր համար Տիրան չարաչար յաղթուեցաւ, և զարնուեցաւ մեռաւ։ Հոգարացիք անկէ մինչեւ Հուին յառաջ քալեցին, պաշարմամբ առին քաղաքը, այրեցին, ջարդեցին, և 35000 հոգի գերի առած տեղերնին դարձան։

231. Հոգարացիք Հայաստանէն քաշուելնուն պէս, Յունաց կողմանէ Կիւրապաղատ դրուեցաւ Վարազիրոց, որ տարին մը մնալով, յաջորդեց անոր՝ իր որդին Սմբատ։

232. Հայաստանի խաղաղութիւնն երկար չտևեց, վասնզի Հոգարացիք զօրացած վերըս-

ոին Հայաստան արշաւեցին, և շատ գաւառներու ախրեցին. ասա որ տեսան Հայք, հրեշտակ խրկեցին Ամիրապետին՝ իրեն հնազանդելու։

233. Հալիւ թէ Հաղարացւոց ձեռքէն ազատեր էին, Հայերը դեռ աչք չբացած տեսան որ Յոյները նեղացած Հայաստան կ'արշաւեն. խելոյն զինչան և խոստացան Հայք հնազանդիլ Յունաց։ Յաւալի վիճակ. վանդի իւրաքանչիւր նախարար իր զօրքն առած իր երկիրը կը պաշտպանէր, և հոն անհոգ նստած՝ թող կուտար որ թշնամին ուզածն ընէ. առանց մտածելու որ թշնամին օր մ'ալ իր վրայ կը յարձակի, և ինք ալ միւսներուն նման գերի կ'ինայ։ Ամենեւ անհաշտ թշնամի ըլլալով, աւելի իրարու դէմ կը պատերազմէին։ Նոր ահա պատմութիւնը կը ցուցնէ որ նախարարներուն անմիաբանութիւնն է բոլոր այս չարեաց պատճառ, քանի որ մի իւրաքանչիւր նախարար իրեն տանուտէր իր իշխանութեան ներքեւ ունէր գաւառներ, և անոնց մէջ բնակող անմեղ ժողովուրդ, որ պարտաւոր էր իրեն գերի իր տիրոջ կամքին հետեւելու։

234. Հաղարացիք լսելով որ Հայք Յունաց հնազանդեր են, նորէն Հայաստան յարձակեցան, և հաւաքեցին. և դարձան իրենց տեղը՝ շատ գերի և պատանդ տանելով հետերնին։ Հայք նեղացած Հաղարացւոց դիրքած ծանր տուքին, նորէն Յունաց կայսեր

դիմեցին. ան ալ Ներսէս Գ. Կաթողիկոսին խնդրանքը Համազասպ Մամիկոնեանը պատրիկ դրաւ։ Այն Ներսէս Կաթողիկոսին օրով եղաւ Վարազ Սուրբ Խաչին գիւտը, Յունդիկ արքեպիսկոպոսին Հայոց մեջը. 12 լուսեղէն սիւներու լոյսովը Սուրբ Խաչը յայտնուեցաւ։

235. Ամիրապետը բարկանալով, բոլոր իր քովն եղած պատանդները թրէ անցընել տուաւ, և երբ պատրաստուեցաւ Հայաստան արշաւել, զինքն ալ իր զօրքն ապանեց։ Նոր ընտիր Մաւի Ամիրապետին նորէն հնազանդեցան Հայք. ու քիչ առնէն Համազասպն ալ մեռնելով՝ անոր տեղը Պատրիկ դրուեցաւ անոր եղբայրը Դրիգոր Մամիկոնեան։

236. Դրիգոր բարեպաշտ իշխանս 24 տարի խաղաղութեամբ իշխեց. և վերջը Խաղբայ դէմ պատերազմին մէջ զարնուեցաւ ու մեռաւ։ Այս օրովը երևելի էին Անանիա Հիրակացին բաղմահմուտ և փիլիսոփայ, և Մովսէս Սիւնեցին Բ. Բերթողահայր։ Յետոյ երկու տարի չափ տակնուվայր եղաւ Հայաստան, մինչեւ որ Աշոտ Բագրատունի Բիւրատեան իշխանը սկսաւ երկրին քիչ մը խնամ տանիլ, և թշնամեաց դէմ դրաւ՝ Հայոց հարկ տալով։

237. Յոյներն իմանալով որ Հայք Հայոց հարկատու եղեր են, սկսան Հայաստան արշաւել, և մեծ չարիք հասցնել Հայոց։ Հայերնիք ալ ընդհակառակը կարծելով որ Հայք Յունաց հնազանդեր են, ա-

նանք ալ միւս կողմէն սկսան յարձակիլ և աւերել, Աշուն ալ զարկին սպաննեցին. և Թշուառ Հայաստանը անտէր՝ սովալուկ գայլերու ձեռք մնաց։ Աշուէն վերջը Հպարտացեալ բոլորովին տիրեցին Հայաստանի, Քրիստոսի 693 Թուականին, և Հպարտացի իշխաններով կը կառավարէին Հայաստանը. այս Հպարտացի իշխաններըը Ասպիան կ'ըսուէին։

— Ճիշդ Վրանին տեղ ո՞վ մարզպան դրուեցաւ. — Սմբատին տեղ ո՞վ մարզպան դրուեցաւ. — Դաւիթին ժամանակին ի՞նչ յիշատակաց արժանի գործք պատահեցաւ Հայաստանին մէջ. — Դաւիթին տեղն ո՞վ մարզպան դրուեցաւ. — Ղազին Կիւրապաղատն ո՞վ եղաւ. — Պարսիցմէ և Յունացմէ ուրիշ ո՞րանք սկսան արշաւել Հայաստան. — Հպարտացւոց արշաւանաց դէմ դնող չեղա՞ւ. — Դաւիթին տեղ ո՞վ կիւրապաղատ դրուեցաւ. — Հայաստան մինչեւ վերջը խաղաղ մնա՞ց. — Հպարտացիները զինուցանելով որո՞նց ղայրոյթը շարժած եղա՞նք. — Մէյմը Հպարտացւոց. մէյմը Յունաց հնազանդելով, անոնցմէ երկիւղ կրելու ի՞նչու կ'ըսուէինք. — Հպարտացիք երբ ըսին Յունաց հնազանդելիս՝ ի՞նչ ըրին. — Մինչեւ վերջը Հպարտացւոց տակը կրցա՞նք մնալ. — Համազասպ Մամիկոնեանը պատրիկ դնելով Հայք Ամիրապետէն չվախցա՞ն. — Համազասպին տեղն ո՞վ դրուեցաւ Պատրիկ. — Գրիգոր ո՞ր թագի իշխեց. — Գրիգորէն վերջն ո՞վ տէր եղաւ Հայաստանին. — Յոյնք երբ խմացան Հպարտացւոց հարկատու ըլլալնիս՝ ի՞նչ ըրին. — Հպարտացիք պաշտպանեցի՞ն զմեզ. — Ո՞ր ուրեմն Յունաց թէ Հպարտացւոց իշխանութեանը տակ մնացի՞նք։

ԳԱՍ ԼԱ.

ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ

238. Առաջին ոստիկանն եղաւ Աբդլա, որ անգութ ըլլալով շատ չարիք հասուց Հայոց։ Աբդլա շուտով վախնուեցաւ Հայաստանէն Յունաց օգնութեամբը, բայց վերջը երբ

Մոհմատ ասելանին անհամար զօրքով գալը լսուեցաւ, իսկոյն Սահակ Կաթողիկոսը ճամբայ եկաւ որ Մոհմատին երթայ, և անոր բարեւութիւնն ընէցուցէ. բայց ճամբան հիւանդանալով՝ աղաչանաց թուղթ մը գրեց և ինքը վախճանեցաւ։ Երբ Մոհմատ արքային մարմինին քովն եկաւ, Կաթողիկոսն ողջ ի պէս ձեռքը շարժելով, նամակը Մոհմատին տրաւաւ և զանիկա հաշտեցուց։

239. Յաւէտ եռեւ ուրիշ ասելանները նշանեցան, ընդ ամէնը 13 ասելան, քանի մը հատ ալ Հայ իշխաններ պատրիկ դրուեցան։ Ասելանները մէջ շատ քիչը քաջը և հանդարտ բնաւորութիւն ունենալով քիչ ժամանակ հանգիստ պահեցին Հայաստանը։ Իսկ անօրէններ եղան, որոնք Հայաստանը բոլորովին արիւնլուայ ըրին, և գրեթէ շատ տեղեր մոխիր դարձուցին։

240. Ասելանները մէջ անօրէնութեան կողմանէ երեւելի եղան Կոշմ, որ նախարարներուն և Աղգին ուրիշ մեծամեծները Նախիջեւանի Եկեղեցւոյն մէջ այրել տուաւ. Վիլթ, Մահմէտ, Եղիա Ա. Եղիա Բ. և ամենէն վերջը Ռուզա անդութ ասելանը, որ բոլոր Հայաստանին անիծոյ ամէն չարիք հասուց։

241. Ռուզա արտաքոյ կարգի անդթութեամբ վարուեցաւ Հայոց հետ. Հայաստանի ամէն կողմերն ասպատակներ ուղարկեց, որոնք շատ տեղեր քանդեցին, կործանեցին, կրակի տուին. շատերը գերեցին շատ նախա-

բարեր և իշխաններ բռնուեցան. ոմանք հաւատքին ուրացան, ոմանք մարտիրոս եղան։ Բռնուած դերիներն ամէնն ալ Ամիրապետին տարաւ, որոնց մէջ էր նաև Սմբատ, որ թէպէտ Բուղային առաջնորդեց որ ինքը պատուոյ հասնի, բայց Բուղա ի վերջոյ զայն ալ շղթայի զարնել, և բանտը դնել տուաւ. ուր Սմբատ զղջալով իր ըրածին վրայ մեռաւ, և խոստովանող ըսուեցաւ։

— Ո՞վ եղաւ առաջին սոսիկանը. — Մոհմատ սոսիկանն ի՞նչու եկաւ. — Մոհմատին քարկոծիւնն ի՞նչպէս իջաւ. — Եռեւէ եռեւ քանի՞ սոսիկան իշխեցին. — Սոսիկաններն ի՞նչպէս վարուեցան Հայաստանի հետ. — Աշօրէնութիւն կրցան նէ որո՞նք երևելի եղան սոսիկաններուն մէջ. — Բուղա ի՞նչպէս վարուեցաւ Հայոց հետ. — Ո՞վ էր Սմբատ խոստովանող։

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ
ԲԱԳՐԱՏՈՒՆԵՑՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

ԴԱՍ ԼԲ.

ԱՇՈՏ Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Խաչաւոր։

242. Արքայականաց թագաւորութեան կրծանուամէն վերջը՝ Հայաստանին կրած աղէտներն ու տառապանքներն այն ատենին ծանրացած էին, որ գրեթէ ուրիշ անգամ մի և ազգութիւն ձեռք ձգելէ յետոյ կրած էին Հայք։ Բայց Աստուած այն դառն վիճակին մէջ՝ իր ճշմարիտ հաւատացեալներուն, և Իրիատոսի սիրոյն համար Հայոց թափած արիւններուն ի շնորհս գթաց, և յաջոյց արի, իմաստուն և ատուածապաշտ Աշոտ Բագրատունին՝ Սմբատ խոստովանողին որդին, որմէ սկսաւ մեր Ազգին երրորդ անգամ թագաւորութիւնը, անոր ցեղին անուամբը Բագրատունեաց թագաւորութիւն կոչուելով։

243. Բագրատունեաց թագաւորութեան բոլոր ժամանակը Հայաստան մշակնեներ պատերազմի դաշտ մը դարձած էր. օտար թշնամեաց յարձակումները և անդադար ներքին ընտանի խռովութիւնները շատ քիչ ատեն թող տուին խաղաղութիւնը վայելելու։

244. Աշոտ իր քաջը բնաւորութեամբ ամէնուն հետ սիրով վարուելով, ու կարողութիւն ունեցողներուն առատ օգնութիւն ընելով՝ ժողովրդեան սիրուն իրեն հետ կապեց։

Աշտին այս վարմունքին համբաւը քիչ ժամանակուան մէջ Ամիրապետին ականջն ալ հասաւ, որով անիկա ալ Աշտին վրայ մեծ համարում մ'ունեցաւ, և Իշխանաց Իշխանի պատիւ տուաւ անոր, ու բոլոր հարկերը ժողովելն անոր յանձնեց։

245. Աշտ այս պատուին հասնելով թշնամաւ Աղգը խնամելու աւելի ընդարձակ միջոց ունեցաւ։ Իր քաջ եղբայրն Աբաս զօրաց վրայ ապարատեա դրաւ։

246. Նախարարները տեսնելով Աշտին խնամուն կառավարութիւնը, խելքերնին գլուխնին ժողված, միաբան որոշեցին որ զանիկա Աղգին վրայ թագաւոր դնեն։ Լատի աղաչեցին Ամիրապետին որ իրենց այս խնդիրքը կատարէ, խոստանալով որ միշտ հաւատարմութեամբ կը ծառայեն իրեն։

247. Ամիրապետն ընդունեց նախարարաց խնդիրքը, և թագ ու թագաւորական զգեստներ իրկեց Աշտին։ Աշտ Անի քաղքին Մայր Եկեղեցւոյն մէջ թագաւոր օծուեցաւ Պէտրոս Ա. Կաթողիկոսէն. և Հայաստան մեծ ուրախութեան հանդէս եղաւ նոյն օրը, վասն զի իր գահին վրայ տեսաւ իր ազգային բուն թագաւորը, որուն շատոնց կարօտ մնացեր էր։

248. Աշտին թագաւորելուն լուրը Վասակ Արշակունի Յունաց կայսրն առաջին ալ շատ ուրախացաւ, և ինքն ալ անոր թագ ու թագաւորական ընծաներ իրկեց։

249. Աշտ իր թագաւորութեան մէջ

հաստատելով, եւ ոչ եւ զաւ Հայաստանին աւելակ զարձած տեղերը կամովնելու, շինելու եւ նորոգելու. անմարդի մնացած երկիրները շինցնելու, եւ արիւն արցունք թափող Հայ ժողովուրդը միխիթարելու։ Հնոսպային ազգերը որոնք ապստամբած՝ շատ նեղութիւն կուտային Հայոց, ամէնքն ալ զսպուեցան, եւ Հայաստան խաղաղութեան մէջ օր ըստ օրէ պայծառանալ սկսաւ։

250. Աշտ զէպ ի Կ. Պոլիս՝ Լեւոն կայսեր տեսութեան համար Հանդարտութիւն ըստ. եւ վերադարձին երբ Թէրակ հասաւ, ծանր հիւանդացաւ։ Կանչեց Աշոտ Գէորգ Ս. Կամոլիկոսը, եւ բոլոր հոգեւորականաց գործերը կատարելով, ազգականներուն ալ շատ զգուշ կոակ ընելով, բարեպաշտութեամբ վախճանեցաւ, 26 տարի իշխելէն եւ 5 տարի թագաւորելէն վերջը. Քրիստոսի 889 թուականին։

— Ո՞ւսկից սկսաւ Բագրատունեաց թագաւորութիւնը. — Այն թագաւորութեան ժամանակ ի՞նչ վիճակ ունեցաւ Հայաստան. — Աշոտ ի՞նչպէս իշխանաց իշխանի պատուոյ հասաւ. — Աշոտ գրա՞ւ ապարատեւ զօրաց. — Աշոտին հանար թագաւոր ընելու որոշումը ի՞նչպէս եղաւ. — Ամիրայեան ընդունելց նախարարաց խնդիրը. — Աշոտ ո՞ւսկից նաեւ թագ ստացաւ. — Աշոտ թագաւոր ըլլալուն պէս ի՞նչ գործերով պատաղեցաւ. — Աշոտ ի՞նչու գնաց Կ. Պոլիս. եւ ի՞նչպէս վախճանեցաւ։

ԳԼՈՒԽ ԼԳ.

ՍՄԲԱՏ Ա.

251. Աշոտին յանքորդեց իր երէց որդին

Սմբատ, որուն թագաւորութիւնը խաղաղութեամբ սկսաւ, և խռովութեամբ լմնցաւ. ինչպէս լսելին կ'աւանդէ ժամանակակից պատմաբան Յովհաննէս Կաթողիկոսը։

252. Սմբատին հօրեղբայրն Աբաս թագաւորութեան աչք ունենալով, շատ զօրք ժողոված՝ քանի մ'անգամ պատերազմեցաւ Սմբատին հետ, և յաղթուեցաւ. բայց այս ընտանի պատերազմը թագաւորութեան գլխուն գալիք փորձանքներուն սկիզբն եղաւ։

253. Սմբատ իր թագաւորութիւնը ապահովցնելէն վերջը, ուզեց երկրին բարեկարգութեան. բայց Արդպատականի Աշէն ոստիկանը նախանձելով անոր մեծնալուն վրայ, պատերազմի եկաւ. և Սմբատ առանց պատերազմելու, Աշէնին սիրտն ինքնցուց, և հաշտուեցաւ հետը։

254. Այս հաշտութիւնը շատ չտեւեց. վասն զի Աշէն զղջաց իր ըրածին վրայ, և խաբէութեամբ Սմբատայ վրայ եկաւ։ Սմբատ յանկարծակի դալով, չկրցաւ առջի բերանը դէմ դնել Աշէնին. բայց վերջը զօրքը գումարելով, ազէկ ջարդ մը տուաւ Աշէնին զօրաց, և փախուց զայն։

255. Անկէ ետքը Սմբատ ուզելով Աղձնեաց նահանգն և Տարօն գաւառն առնել Ամատ ոստիկանին ձեռքէն, անոր վրայ կ'երթայ. բայց Վասպուրականի իշխան Վասակին սիրանենգութիւնովը թագաւորական բանակը քարուտ և հեռաւոր տեղեր առաջնոր-

գլուխով, անակնկալ կերպով թշնամոյն հանդիպեցան. իսկ Սմբատ իր օրինակովը խրախուսեց զօրքը, և քիչ մնաց որ յաղթութեան փողերը հնչէին, հան դարձեալ Զադիկ անանկ շփոթութիւն ձգեց զօրաց մէջ, որ ցիրուցան ըլլալ սկսան. և պատճառ այս պարտութեան՝ Սմբատայ վիրաւորութեամբ հաւատարմութիւն ընելն է Զադիկին։

256. Աշխեն Սմբատին զօրաց ցրուիլը լսելով, և Այ նախարարաց անմիաբանութիւնը տեսնելով՝ նորէն պատերազմի ելաւ. Սմբատ ալ անօգնական մնալով՝ պատանդ տալու իր որդին և հաշտուեցաւ։ Բայց չքշեց, անօրէն Աշխենը նորէն Սմբատայ չարիք հայցելու երբ կը պատրաստուէր, սոսկալի մահուամբ սատկեցաւ. և անոր յաջորդեց Յուսուփ անզգամ եղբայրը։

257. Սմբատ սատիկանները բռնութեամբ ետպատելու համար, խնդրեց Աշիրատէն որ փոխանակ տուրքերն սատիկանները ձեռքովը տալու, ուղղակի ինք Աշիրատին խրկէ։ Այսպէս Յուսուփ բարկացած շատ զօրքով Սմբատայ վրայ եկաւ. և երբ Սմբատայ զօրութիւնն իմացաւ՝ համարձակեցաւ անոր հետ պատերազմելու և հաշտութիւն ըրաւ. միտքը դնելով որ ուրիշ յարմար առթիվ մը իր վրէժն առնէ։

258. Այդ առիթը շուտով ձեռք ձգեց Յուսուփ, վասն զի Զադիկ Աշծրունի Սմբատայ քեռորդին ապստամբելով Սմբատէ՝ գընաց Յուսուփին քով. Յուսուփ ալ գիտնա-

լոյ որ Հայոց զօրս թիւնը ակարացնելու համար մի միայն միջոցը՝ անոնց մէջ երկպառակութիւն ձգելն է։ Դարձեալ շատ պատիւ ըրաւ և թագաւոր անուանեց։

ամէն դժդոհութեան յայտնի ցոյց մը չիարը. երբ Յուլիս 12ին Պօղոս Պատրիարք օրհնեց վերջին օծման իւղը, և խրիմեց եկեղեցիները, որ օծուիլ ուղղղ հիւանդը օծեն։ Գաղատացի Հռոմէականաց զարմացուցին օր օրի կ'աւելնար, քանի որ կը տեսնէին Հայոց ամուսրբութիւնը, որ ժամանակին ճնշման արդիւնքն էր։ Վերջին օծման իւղը դրդուութեան առիթ եղաւ. Օգոստոս 7 շաբաթ օրը (1820) խորհրդոյ Բուցիանեթի խուցէոյոյը կարդաւորին ու Հայոց Ս. Եկեղեցոյն սխեմիմ թշնամի էր, Գաղատացի մը եկաւ շուկայ, Հռոմարքական Հայաւ կերպարանքով, և Հրաբէր սէրոյ տեսրը ձեռքը, ամոր սկիզբը գոնուած Ս. Հռոմարքի պատկերին վրայ Պապին պատկերը փակցուցած, սկսաւ Կեսարացի կոշկակարներուն սենեակները շրջիլ, և դրդռել թէ. Ի՞նչ ամհոգ հատեր էք, Պատրիարքը ֆռանկացաւ, ուրացաւ Ս. Հնչիմնը և Հռոմայ տիեզերական հնազանդեցաւ. ահա եղբը Սուրբ Սիւռոնը վերցաւ, ամոր տեղ ձիթոյ պիտի օծուինք ապցանի նման. ոչ լուեալ ժամանակ չէ՛, մենք վարը բարը պիտի ընենք, դուք ոչ մեզի հետ միացէք, իջնենք Պատրիարքարան, և խնդնենք որ մենք Հռոմարքի որդիք ենք, և ոչ Հռոմայ Պապերուն։ Նաւնկոյ դրդռութիւնը խիստ տարակուսաւ։

457. Պօղոս Պատրիարք նոյն իրիկուն այս լուրն առաւ և անմիջապէս իւր փոխանորդը Դիոնեսիոս Եպիսկոպոս խրկեց Իսկիւտար

Ն՝որոտարապետ Գրիգոր և Պէզճեան ամիրանէ-
բուն. բայց գիշերուան ժամը 3 էր, և բան մը
չկրցան ընել։

458. Հեռեալ առուն անմիւ բաղ-
մութիւն Սայր Նիկողեցին ինքս, և միաբար-
բաս կ՚ազաղակէր թէ, մենք Հայ եմք, Ս.
Լուսաւորչի որդիք, Դաւանակ չենք ըլար, թող
դայ Պատրիարքը, ու զմեզ ապահովցնէ։

Օրդոս Պատրիարք Նշուսաղէմի Սարգիս և
Յակոբ եպիսկոպոսները խրկեց, որ երթան
համոզեն ժողովուրդը. բայց ժողովուրդը մը-
սիկ ջրաս անոնց, զարկաս, և ի Պատրիար-
քարան դիմեց։ Ոռները փակուած դուռ,
զարկաս և խորտակեց զանոնք և ներս լցուե-
ցաս. Պատրիարքը կը փնտռէր, բայց ան
պատսհանէն փախած էր մերձակայ տանիքի
մը առն, և հոն պահուըտած։

459. Հատ ջանցաս եկաս Նէնիջէր Գրա-
սին իր զօրքովը, և ամբոխին քանի մը գլխաւոր-
ները բռնեց և բանտ խրկեց, միւսները ցրուե-
ց, և Պատրիարքարանի դուռը պահպան-
ները համար զինուոր թողուլ՝ մեկնեցաս։ Բ.
Ռուսը այս դրդռուելեան հերձմնականները փնտ-
ռելը ուզելով, բանտարկուածները տանջել
հրամայեց, որոնցմէ մէկը՝ Տէր Պաղտասարը
մնաց, մէկ ուրիշն ալ Կեսարացի Կարա-
պետ անուն տարկաւագ մը, և ուրիշներ ալ
դրդռոց Պաղտասարին, որ շատ փնտռուեցաս,
բայց ի զուր, որովհետև Նշուսաղէմ փախուցած
եղեն զայն։ Սարկաւագը տանջանաց մէջ նախ

Պատուածատուր և Գրեմիա եպիսկոպոսները մատնեց, բայց անոնց վրայ բան մը չկրցաւ հաստատել։ Յետոյ Սոյ Տ. Կիրակոս Ս. Կաթողիկոսը մատնեց, որ այն օրերը Պոլիս գտնուելով նոր ճամբայ ելեր էր իր աթոռը դառնալու. եռեւէն սուրհանդակ խրկուեցաւ, և Նալլը խան տեղը գտնելով դարձուցին ի Պոլիս. Մեծ Գպարքոսին առջև Ս. Կաթողիկոսն ալ հարցուփորձ եղաւ, բայց բան մը չհաստատուելով Թող տրուեցաւ։ Տէր Պաղտասարն ալ վինքը թելադրող Յակոբ և Կարապետ Վարդապետները մատնեց. միայն Յակոբ դատուեցաւ։ Յետոյ Սարկաւագը մատնեց Սախալեան Գրիգոր ամիրան, և ատոր ազգական խեղճ պատանին Զարիա. նոյնպէս Պէկիրոյի տիրացու Յովհաննէսն Խաչատուր. բայց այս վերջինը Խրիմ փախած էր։ Դարձեալ երկու օր ետքը Սարկաւագը մատնեց Գրիգորեան Մկրտիչ ամիրան, Դաւթեհեա Ս. Աբրահամ ամիրան, Կէլիբեան Ս. Պօղոս ամիրան և Սարգսեան Զաս Պօղոսը։ Սոյն Դաւթեհեան երկու օր ետքը ազատեցաւ բանտէն միջնորդութեամբ Անձիոյ Եպիսկոպոսին, որ Զիլպոսի փոխարքային Բարու Գեհեանին էր։

460. Գլուխ 16 ին խրիմուները, գիշերուան ժամը 2 ին Մեծ Գպարքոսը կանչեց Պօղոս Պատրիարքը, և առանձին հարցուփորձ ընելով կ'ուզէր տեղեկանալ թէ այս խուսափութեան բուն շարժառիթն ի՞նչ է։ Պօղոս Պատրիարքը որ լաւ ամենայնի գոհ չէր վիրաւորութեան

բնդ իրենեանն մէկ քանիին վրայ, և արդէն իր հրաժարականին վրայօք խորհող քանի մը գլխաւորաց վրայ ալ վճռացած էր, պատեհ գտաւ ծանուցանելու թէ, Կայսերական կառավարութեան հրամանին համեմատ թէպէտ փութացեր է բաժանումը Ղրիմ վերցնելու միջոցներուն վրայ խորհիլ, բայց քանի մը անձանց ապրելու թեամբը ձգնելով իր գիտցածին հետեւիլ, անոնց կամօքը շարժելով, անխոնջ և անյոգնելի ընթացք մ'ունեցեր է, և տեսա անոնց խոհականութեան վախճանին ալ այս եղեր է։ Կարելի այն քանի մ'անձանց անունները կ'ուզէ գիտնալ, և կ'բաժանուն ասոնք, Գրիգոր Ղարամանեան, Յարութիւն Պէզճեան, Ղանիել Փափազեան, Ս. Յովհաննէս Կրիմեան, և Կարապետ Ղէմուրեան։

461. Իսկ Սախալեան Գրիգոր ամիրան ջերմեռանդ ամենայնոց դիմանալ ուխտաւորութեան ալեւոր հասակին մէջ, բոլոր յանցանքն իր վրայ առաւ, Թոզէք, բառ, այդքան անմեղ բանտարկութիւնը, և զիս միայն արաժեցէք։ Նոյնպէս կեսարացի Յակոբ և Տէլի Պաղտասար ինքզինքնին յանցաւոր խոստովանեցան. և Ղարիա արատանին ալ խոստովանեցաւ որ իրեր թէ ատիսաւորին հետ ատոր անդին շրջած և դրդռութիւն ձգած ըլլայ։ Աւասիկ այս հինգին մահը վճռուեցաւ։ Սեպտեմբեր 18, Վերացման Ս. Խաչի տօնին ուխտերորդ օրը, այսինքն շաբաթ երեկոյ՝ ըստ ը-ութին ժամանակ. Այր Նիկոլեցւոյ դրան առջև գլխատուեցաւ

Յոխանան Գրիգոր ամիրան, Նոյնպէս Հայր սէրել Տէրէկի Մաշը գլխատուեցաւ Յակոբ Կեսարացին, և Տէրի Գազուսարը Սամսիմիա իր արձանացին առջև կախուեցաւ։ Իսկ այլքան անմեղներու արիւնը մանող մարդիկ սարսափելի դատի ենթարկուեցան (որ մահուան կրօնքն ընդունած էր բանտին մէջ.) և Զարխա պատանին կախուեցաւ ի Բարմարգարու ի Սուլթան Գայաղիս։

462. Հեռեալ օրը Զատուածատուր և Երեմիա եպիսկոպոսները և ուրիշ տասնեւինը անձինք բանտէն արձակուեցան։ Իսկ բանտարկուած Երեքի Հայերը աքսորուեցան. Վերջապէս Զատիկին ի Սամսուն։ Հ. Գրիգորիան ի Սամսուն։ Հ. Գօշա Կիլիկեան Յիլմիա, և Զա Գօշա Արդարեան ի Հռոդոս։ Նոյնպէս աքսորուելու դատապարտուեցան Գասրիարքին դարձոց ձեռնադրուած ի եղբայր Տիրոջ անձինքը. բայց ասոնցմէ Ն՛ատիկ Գասխալեան՝ որ Նպարքոսին սեղանաւորն էր՝ ազատեցաւ. Նոյնպէս և Գրիգոր Ն՛արարատեան ազատեցաւ. վասն զի Հոկտեմբեր 3 ին տասնիկ մարդիկ մ՚Երզրում, արքունի պալատին շուտ տեղերուն մէջտեղ. և Սուլթանին հրամանը կատարուեցաւ որ զանոնք նորոգէ։ Նրկանեան Հ. Յովհաննէս ալ այս միջոցին իրեն դէմ եղած մեկ տարուելի մատնութեամբ դժուարութիւն յիլմիա ազատելու համար Սահմանական կրօնքն ընդունեց։ Իսկ Նշանաբերան Կարապետ ի Սաքիզ կղզին և Պէշձեան Յարութիւն յիլմիա աքսորուեցան։

463. Պէշձեան փողերատոցին հաշիւներն

ամբողջ հատոյց, և այն մասին փոխերանոցին վերատեսչէն դուսնթիւն ալ ըսեց. իր պատ-ժապարտութեան վճիռը սա եղաւ թէ. «Յա-ղութիւն Պէզճեան ամենայն հաւատարմու-թեամբ վարեց աղքատնի փոխերանոցին պաշ-տօնը, և իր հաշիւն ամբողջ տուաւ. բայց ազ-դային գործերու ձեռնամուխ ըլլալուն, ի խրատ ղգուշութեան այս օրինակ պատժա-պարտութեան արժանի դատուեցաւ»։ Պէղ-ճեանի տեղն անցաւ Պիլէզիկճեան Պօղոս Հռո-մէական Հայը։

464. Հատանիկ այս կերպով ցրուացան մի-ութեան փափաքով վառուած սրտերը. և խարխուլ հիման վրայ դրուած անխորհուրդ շէնք մը այս վիճակին ունեցաւ։ Իսկ վերջը և վերին զգեցող Արբայեան վարդապետաց հրաման խրկեց Պօղոս Պատրիարք որ Պատրիար-քարան դան, որպէս զի երկուքը յ Ջմիրնիս, երկուքն ի Սուշ և երեքն ի Ս. Նշանաղէմ խրկէ։ Այս ըսելովնոյն վարդապետները փու-թացին դնալ Հ. ատենացուց եկեղեցին, և հան-պաշխարեցին։ Նոյնպէս անուց եաւէն գացին Աբբայի ժողովուրդք։

465. Տարի մը չանցաւ Պէղճեանի աբ-ատը, ու վերադարձաւ (1823). և առաջ Ն'էպէ Հ-մայոնի ներքնատրութեան պաշտօ-նին ատացաւ։ Հինգ վեց ամիս նորը վերատին փոխերանոցի տեսուչ կարգուեցաւ. և օր օրի փառք և պատուով կը յառաջադիմէր. և Սուլթան Մահմուտ Ի. Տղայ թնդակալին ալ

սիրելի ընկերոջ, որ օրի իշխանութեամբ կը ձոխանար, և առանց կասելու բարեդործութեանէ, անընդհատ աղքատին և տառապելոյն դթութեան ձեռք կը կարկառէր։

466. Հալէթ էֆէնտի և անոր սեղանաւոր Խմէլ Հրեայ երկու չարադործները երբ իրենց անօրէնութեանց պատիժը արդարութեամբ տացան բարեդութ Սուլթանէն, և աքսորանաց մէջ խեղդամահ տուին։ քրիստոնեայ հպատակք առհասարակ ուրախացան և հանդստացան։ Պէղճեան ալ առիթ գտաւ Սուլթանէն խնդրելու, որ Տիւզեան Կարապետ և Յակոբ և Պօղոս չէլէպիները ազատուին աքսորէն։ Այսոր համար քանի մը երեւելի նախարարաց սիրոն իրեն յանկոյց, և անոնց խորհրդով աղերսագիր տուաւ Սուլթանին, որ հրաման տուաւ Տիւզեանց վերադարձին։

467. Եւ որովհետև Տիւզեանց ի Պուրսէշէհիր ունեցած ծովերերեայ տունը Խմէլին ձեռքն անցած ըլլալով, Խմէլին ինքն ալ մահուընէն ետքը յաքքունիս գրաւուեցաւ, Պէղճեան փութաց յիշեալ տունը ծախու առնելու, և առաջինին նման ամէն կահ կարասիքով զարդարելով տալով զայն, բանալիներն առաւ, և անուշահոտ լեմոններով լի սափորի մը մէջ դրած, իր Համամիւռ քրոջ տուաւ, որ ընծայ տանի Տիւզեանց Եղբանուհի և Տիւրուհի քոյրերուն. որոնք իր տունն Անէնիգարու հիւրընկալած էր. և իրենց եղբարց ազատութեան աւետիսը տայ անոնց։

468. Մեծ ուրախութեամբ լսուեցան աղեղաւորական քոյրերը, և համարուեցան որ սուտ և սխալ է եղեր այն կարծիքը, որ թէ Պէղէձեան պատճառ եղած ըլլայ իրենց գերդաստանին կործանմանը. ահա ժամանակն ու պատահումները ապացոյց տուաւ թէ Պէղէձեանի վեհ ոգին բնաւ առանց ապերախտութիւն մը և անգթութիւն մը չէ մտաբերած. այն ոգին՝ որ ոչ միայն իր ժամանակի մարդոց մէջ նշանաւոր կը փայլէր, այլ ապագայ դարուց մէջ ալ անմահ պիտի յաւերժանար։ Այս շատով զգացին ազնիւ Նրանուհի և Տիրուհի տիկնայք. նոյնը զգացին նաև բոլոր Տիրեանք և բոլոր ազգայինք. և Պէղէձեանի անմեղութիւնը ու առաքինի և երախտագէտ սիրտը աւելի ծանօթացան. հետևաբար կարկեցան մոցին զայն բամբասող լեզուները։

469. 1823 ապրիլ 15 ին Պօլիս հասան Կարապետ, Յակոբ և Պօղոս էֆէնդիներք, և անմիջապէս Պէղէձեանի առնն ինքն, ու հոն օթևանեցան շատ օր։ Պէղէձեան ուրախութեան արտասուօք հանդիպեցաւ այն սարգսեան ազնուականներին, և փոխադարձ երախտագիտութեամբ երկու կողմն ալ լցուած՝ չէին յագենար փոխադարձ շնորհակալութիւն մատուցանելով մեկմեկու։ Պէղէձեան անոնց ամէն պիտոյքը հոգալով, և հարկ եղած պատասխանները ու ազատութիւնները ալ յանձնելով, թող տուաւ որ իրենց հայրենակցաց առնն ի Պուրսէքի երթան։ Տիրոջ

եանք ան առեն զգացին թէ ուշչափ քալցը է եղեր բարերարելը, և փոխադարձ բարերարելը։

470. Պէզճեան՝ որ ամէն ջանք ի գործ դրած էր միաբանութեան խնդիրն արդիւնաւորելու և Աղգիս մէջէն բաժանումն ու երկպառակութիւնը վերցնելու, երբ տեսաւ թէ իր յուսացածին նման վախճան չունեցաւ գործը, փոխեց իր դիտաւորութիւնը, և յօգուտ Հռոմէական Այց եղբարց խորհուրդ ըստ Կարտէտ Պատրիարքի հետ, որ Պօղոս Պատրիարքի յաջորդ ընտրուած էր 1823 հոկտեմ. 23ին, Հռոմէական վարդապետներին՝ Պատրիարքին կողմանէ Փոխանորդ մը կեցնելու ի Պալաթիա կամ ի Տերա. որպէս զի Պատրիարքարան եկած արքունի հրամաններն անմիջապէս նոյն Փոխանորդին միջոցաւ ծանուցուին Հռոմէական Այցոց։

471. Պէզճեան այս նպատակաւ օր մը գընաց Տերա՝ Պիլէզիկճեան Պօղոս աղայի տունը, հան հրաւիրեց նաև Հռոմէական գլխաւոր Այցերը, Պաղատացի սեղանաւորները, Տիւզեան Յակոբ էֆէնդին, և ուրիշներ. և ծանոյց Պատրիարքին կամքն ու հաճութիւնը։ Նոքա ժողովականներն ուրախութեամբ ընդունեցին այս առաջարկութիւնը, և շնորհակալ եւս եղան։ Խնդիրը ընտրութեան գալով, ամէնքն ալ առաջարկեցին Պէզճեանի, թէ քանի որ վարդապետի համար հաճութիւն տրուեցաւ, այն ընդունելի է ամէնուն ալ։ Պէզ

ձեան բաւական ընդդիմանալէն վերջը, Սուրբ-ինձան Ընտան վարդապետին համար կ'առաջարկէ թէ ի՞նչպէս, յարմար կը դատե՞ն։ Մինաբերան հաւանեցան ամէնքն ալ, որ Սուրբ-ինձան Ընտան վարդապետը փոխանորդ կարգուի, և մեռած Հռոմէական վարդապետաց մէջ գրէ-խառոր ձեպուի. և վերջացաւ ժողովը։

472. Պէզձեան այս մասին ալ անյաջող մնաց. վասն զի դատարանի զօրութիւն մը կար, խորհանիկ, հեռատես, մոքերը պղտորող, որոնցուն վրայ բռնացող, այս զօրութիւնը՝ որ Հռոմի արքանեկաց զօրութիւնն էր, իրեն դէմ միշտ ախոյեան ունէր։ Հետեւեալ օրը վերոյին ժողով կազմուեցաւ Հռոմէական ազգանուանորներու մէջ, և Դաղատացի Մարուշ Պօղոս վարդապետն ընտրուեցաւ փոխանակ Սուրբինձան Ընտան վարդապետի, որ հերետիկոս Հայուն ընտրածն էր։ Սուրբ-որովհետև այս վարդապետն ալ Պատրիարքի հրամանաւ փոխանորդ պիտի կարգուէր, և կերպով մը անոր իրաւասութեան ներքև պիտի գլլար, ուրիշ խորհրդոյ մը ձեռնարկեցին. մը-ուածեցին թէ ինչ հնարքով կրնան առանձին Պատրիարք և Պատրիարքարան ունենալ, և բոլորովին բաժնուիլ իրենց համարուն եղբայրներէն և զիրենք ծնող Սուրբ և Առաքելական Եկեղեցիէն։

475. Երբ Պատրիարքի հրամանաւ փոխանորդ մը կարգելու խորհուրդը՝ մինչեւ առանձին պատրիարք մ'ունենալու առաջնանը

կը բարձրանայ. երբ մինչև ցարդ միաբանութեան ամէն խնդիրներն ի դերև կ'երթեն, և գաղտնի մերձենալով ամէն միջոցներ կը խորտակուին. զարմանալու չէ նաև՝ բոլորովին բաժնուած մնալը և բնաւ չգալ ու չմերձենալը, կամ միութեան առջեւ անհաղթ խոչընդոտներ և մեծ դժուարութիւններ հանելու համար հնարուած միջոցներուն ալ վրայ։ Անկայն գլխով ու ամէն մասերով կերպարարուած մարմին մը հարկաւ տակաւին ոյժ և զօրութիւն կրնայ գտնել իր վրայ. և արշաւնոյն մարմնոյն որ և իցէ մասը այս կերպարարութեան հետամուտ ալ ըլլայ, արշաւի ջանք ալ ի գործ դնէ. գարձեալ այն մարմինը՝ որ ամբողջն է ու ծնող, և հայրենի ամէն արբանեակ յիշատակները, սովորութիւնները, արարողութիւնները պահող, գարերու դէմ մրցող, Ազգ գուութեան կենքն, անունն ու բոլոր յատկութիւնները իր նախահայրերէն ի վեր ունեցող և անխախտ պահող խիստ մեծապոյն մնան է, միշտ պատրաստ պէտք է գտնուի իրմէ անջատուած փոքրիկ մասն օր մ'իր մէջ ընդունելու, և անոր անընդդիմանալի անարգանացն ու անպատեհ ընթացքից ներողամիտ ոգւով ակնարկելու, ու սիրով գգուելու զայն։

474. Բաղաքապետութիւնը՝ որ շատ անգամ է փորձառու և հմուտ գլուխները կը պատրէ, և զանոնք խաղալիք կ'ընէ անհաշտ դէպքերու, և կը մատնէ անխորհուրդ ձեռնարկութեանց թշուառ հետևանքներուն,

հապա որչափ և առաւել այն գլուխները, որ Տիրոջը տաճարին մէջ Ս. Սեղանոյն առջև խոնարհած, մարդկային մեղաց քաւութեան համար պատարագելու, և աշխարհային ամէն զբաղմունքներէ ձեռք քաշած՝ միմիայն հանդերձեալ աշխարհի վրայ խոկալու ենթարկուած են. մանաւանդ անանկ ձեռնարկութեան մէջ, որ ոչ ժամանակին հանդամանաց, ոչ երկրին օրինաց և ոչ Տէրութեան քաղաքականութեան կը պատասխանէ, որով և հետեւութիւնն ալ նշաւակ և նախատինք կը մնայ ձեռնարկող անխորհուրդ գլուխներուն։ Ինչդ ատանկ եղաւ Հռոմէականաց՝ Ի. Գոնէն Պարիզը կամ առանձին ազգապետ ուզելու խնդիրը, և այս խնդիրն արդիւնաւորելու համար հնարուած միջոցը, ու անոր հետեւանքը։

475. Ռուսաց ընդդէմ Պարսից պատերազմը, որով գրաւեցին Այրարատ նահանգը բոլոր շրջակայ քաղաքներով և գիւղերով, որոնց մէջ կը գտնուի նաև Ս. Էջմիածնի վանքը, ուր բոլոր Ազգին ընդհանրական գլուխ Ս. Կաթողիկոսը կը նստի, յարմար պարագայ և միջոց տեսնելու Հռոմէական Հայոց գլուխներուն։ Նոյն առիթ գտան իրենց խնդրոյն նիւթ և փաստ գտնելու թէ. Հայք միանալով Ռուսաց հետ մեծ Քարդ առին Պարսից, և ազատուելով Պարսից հպատակութենէն, կը խորհին յարձակիլ նաև Օսմանեան Տէրութեան սահմանները, և օգնութեամբ Ռուսաց մանաւոր թագաւորութիւն մը

կանդնել հան։ Հռոմի եկեղեցւոյն յարող Հայերն ալ թէպէտ Հայոց եկեղեցին ոչ կը յաճախեն, և ոչ ալ ամենից հետ ի հոգևորս հաղորդակցութիւն ունին, սակայն որոմէտև Ի. Դրան առջև իբրև մէկ Ազգի անդամ և մէկ Պատրիարքի իրաւասութեան ներքև կը գտնուին. ուստի երբ անանկ ապստամբութեան խորհուրդ մը երևան ելնէ, իրենք ալ անոնց միաբան և միախորհուրդ պիտի երևան, և իրենց հաւատարմութիւնը ու հարազատ ծառայութիւնը ցնցանալով, իրենք ալ արժանի պատուհաս կրելու ենթակայ պիտի ըլլան. արդ սանկ ազգատալի վիճակ մը ազատելու, և բնաւ կասկած մը շտալու համար հարկ է կամեցաւ ծանուցանել Սուլթանին, և խնդրել որ առանձին Պատրիարք կամ Ազգապետ մ՝ իրենց շնորհէ, որպէս զի Ի. Դուռն և զիրենք բողոքին բաժնուած և առանձին ազգ, և բնաւ ի հոգևորս և ի մարմնաւորս Ազգին հետ անհաղորդ ճանաչէ։ Այս մտօք ահա խմբագրուեցաւ ազերբայդիրմը և տրուեցաւ Սուլթանին, ամենայն ազնիւ ազգասիրութեամբ յանձնուելոյն զարմացեալ, միջնորդութեամբ Լատրոյ Մէհեմմէտ փաշայի՝ որ խիստ երեսելի և Սուլթանին ալ սիրելի է։

476. Թէպէտ Օսմանեան պատմութիւնը ծայրէ ի ծայր լեցուն է Սուլթանութեան շատ անգամ Ապստամբութիւնովն մեր Ազգին վայ ցուցրած մարդասիրական ազնիւ զգացմունց ապացոյցներով, սակայն խիստ մեծ և

առաջին կարգի մարդասիրական շնորհ մը կը հաստատենք տրուած աղերսագրոյն նկատմամբ՝ Սուլթանին դարձեալ մեր Ազգին հաւատարմութեան և երախտագիտութեան վրայ ունեցած հաստատուն վստահութիւնը, և առանց խուզարկութեան և քննութեան լոկ Պատրիարքի երաշխաւորութեամբ բաւականանալը։ Այսպէս ալ երբ Սուլթան Մահմուտ աղերսագիրը կը կարդայ, կանչել կուտայ Պէզճեանը, և գրուածներուն բացատրութիւն կ'ուզէ։

477. Պէզճեան՝ որ կը յուսար թէ Հռոմէականք առանձին պատրիարք խնդրելու համար աղերսագիր տալու չափ թերևս խելամոլ կարող ըլլան, բայց այնչափ խորունկ քաղաքագիտական դատողութիւն մը մարդերեներին ոչ կրնար ակնկալել, և ոչ իսկ առանց տակալի վստահութիւն մը անոնց համար կրնար մտքէն անցնել, առանց վարանելու՝ մի առ մի Սուլթանին կը ներկայացնէ Պաղատացի Հռոմէական հայոց անհաշտ առելութիւնը և թշնամութիւնը Հայոց Ազգին հետ, և թէ՝ Պատրիարքը քան որոմ պատասխանատու է Ազգին համար, ան կրնայ երաշխաւորել բոլոր Ազգին համար։

478. Սուլթանին հրամանաւ Կոստանդնուպոլսոյ Դուռը կը կանչէ թէ՛ Կարապետ Պատրիարքը և թէ՛ Պօղոս նախորդ Պատրիարքը։ Կը հարցուի թէ. Կրնա՞ն համարձակիլ և յանձն առնուլ երաշխաւոր ըլլալու Օսմանեան Տէրութեան մէջ դանուող բոլոր Ազգին համար,

անհաւատութեան և ապստամբութեան ցոյց մը և նշան մը բնաւ չերևար պայմանաւ։

Պօղոս Նախիսոպոս կը յառաջէ, և աներ-կիւղ կ'ապացուցանէ Հայոց Եկեղեցին հաւատարիմ, հլու և ուղղադէր ընթացքը, և Օսմանեան Տէրութեան շնորհիւ անդորր և խաղաղ կեանք վարելով՝ ամէն օր աղօթող ըլլալը թէ Աստուածաբանութեան և թէ անոր արդարադէր նախարարաց համար. և թէ՛ ինք և թէ՛ Պատրիարքը ըստ ամենայնի կ'երաշխաւորեն բոլոր Եկեղեցի համար, ապահովցնելով որ ապստամբութեան վատ խորհուրդ մը բնաւ մտքէ անդամ անցած չէ։

Կրկին կը հարցուի. Ո՞սկից կրնաք գիտնալ հեռաւոր քաղաքներ բնակող ազգայնոց խորհուրդները, և ի՞նչպէս ապստամբութիւն չծաղելու համար զմեզ կրնաք ապահովցնել. միթէ՞ ինչ որ կ'ըլլայ՝ ձեր խորհրդովը կ'ըլլայ։

Կը պատասխանէ Պօղոս Նախիսոպոս. Բրիտանական Կրօնիս մէջ ամենահարիւաւոր խորհուրդ մը կայ. այն է որ ամէն մարդ իր սրտին գաղտնիքը պարտական է յայտնելու քահանային, և ինչ չար որ գործէ թէ բանիւ, թէ գործով և թէ խորհրդով պիտի խոստովանի և թողութիւն խնդրէ Աստուծմէ։ Քահանայն ալ կը խրատէ ու կը յորդորէ զայն հեռու կենալու չար ու անիրաւ գործերէ, որ առելի են Աստուծոյ և մարդկան։ Երբ ելթէ քահանայք այդպիսի խորհուրդ մը նշմարեն և լսեն իրենց ժողովրդէն, իսկոյն կը գրեն և կը ծա-

եւ ցանեն մեզ, որ առաջն առնենք։ Եւ ոչ միայն այս պատճառաւ բոլոր Աստուծոյ համար կ'երդուիլ խաւարեցնէ, միայն Կոմիտէի լուսաց մատ մը հայերու չենք կրնար երդուիլ, որոնք ոչ մեր եկեղեցին կուգան, և ոչ մեր քահանայից կը խոստովանին։

Հանդուցեալ Կարապետը, և զրեց Սուլթանին ինչ որ ըսեց Պատրիարքէն։

479. Տես Հանդէս, Ծնունդեան Յաղոց ի Կեսարիա, և Եղբայրը Յովսէփ ի Սեբաստիա արդարուեցան իրենց ընտանիքներով մեռան, 1827 Հոկտ. 3ին։

480. Յունուարի արդարամտութեան ժամանակ, երբ Օսմանեանց հաւատարիմներ ի Կաւարին արքայաւ Երուսաղեմ հաւերին, Սուլթան Մահմուտ յանդիմանեալ Պատրիարքէն Աղգին և Հուսոյ գեղարուեստքն՝ ճամբեց, և պատերազմ հրատարակեց ընդդէմ Հուսոյ։

Հռոմէական Հայերն ալ արամիտաւ մինչև ան ատեն լաւ արքունի կամաց չեկան ու չմիաբանեցան Աղգին հետ, և միշտ յարաբերութիւն ունէին Երուսաղեմի հետ. ուստի Սուլթանը հրամայեաց իրենց Հայոց Պատրիարքին, որով հետեւեալ հինգ պատուէրները կ'ընէր։

Ա. Բոլոր Պատգամաւորներն իրենց հայրենիքն աքսորուին։

Բ. Հռոմէական կարգաւորները յԵրուսաղէմ աքսորուին։

Գ. Պօղոսեցի Հռոմէականներէն որոնք որ

Հնդանդին Հայոց Պատրիարքին՝ աքսորեալ յԵնոսրա։

Դ. Մարտիրոսները նոյնպէս աքսորեալ։

Ե. Հռոմէականք հնարին ի Ներա, ի Պալեստինա, և Եւրոպայի գանազան գիւղերը, այլ ուրիշ հայաբնակ տեղերը բնակին։

Պատրիարքարանն այրած ըլլալով, Սամուէլ Ս. Դէորդ եկեղեցւոյն մէջ, հրաւիրեալ Լուսաւորչական և Հռոմէական մեծամեծաց և արուեստաւորաց ներկայութեանը կարգացուեցաւ հրովարտակը։

481. Սկսաւ աքսորը. նախ Պաղատացիք աքսորուեցան 1827 դեկտ. 27ին. և որովհետև հրովարտակին մէջ որոշ էր բացատրուած, Լուսաւորչական Պաղատացիներ ալ աքսորուեցան, ինչպէս եղան ծերունի Պօղոս վարդապետը, ատրաֆ Կարապետ և ուրիշներ։ Յունվար 27ին ալ Պօղոյ մէջ տեղափոխութիւններն եղան. փետրվար 6ին ալ կարգաւորներն աքսորուեցան յԵւրոպա. փետր, 23ին ալ մարտիրոսներն աքսորուեցան 30 ի Հալեպ ի Պանորմա, և 11 ի Հալեպ ալ ի Մահալբա։

482. Իսկ այն Հռոմէականները՝ որոնք նոյն տարին ապրիլ 29ին Ս. Հաղբերդութիւնն առին Հայատանեայց Ուղղափառ Ս. Եկեղեցիէն, ինչպէս էին Տիւզեան Յակոբ Հէլէպի, Ալահվերտեան Պաղարէթ և Աբրահամ ամիրայք, Զամչեանք, և ուրիշ երևելի դերդատանները, հանդիսաւ ժողովեցին Ա. Պօղոյ հայաբնակ գիւղերուն մէջ։

483. Երբ 1829 ապրիլ 7 ին Պաղէոյ և Ինդէոյ դեսպանները Կ. Պոլիս վերադարձան. և երբ Պէօյուքտէրէի դաշտավայրին մէջ նոյն տարուոյն նոյեմբեր 11 ին խնճոյք կուտային Սուլթան Մահմուտին, խնդրեցին նաև Հռոմէական Հայոց աքսորէն ազատուիլը, և անոնց առանձին Պատրիարքով կառավարիլը։ Հրաման ըրաւ Սուլթանը, և 1830 յունվար 6 ին Հռոմէականք վերադարձան աքսորէն. նոյն տարուոյն սեպտեմբեր 30 ին ալ Նուրիճան Հայր Ինոնը Հռոմէն Մեսրոպ Հռոմէական Հայոց եկաւ. բայց տիկա Ազատոյ հպատակ ըլլալով. Սուլթանը զայն չճանչցաւ՝ և Մանուէլեան Յակոբ վարդապետը Պատրիարք եղաւ ազգուեանական հրավարտակով, որուն մէջ կ'ըսէ Սուլթանը թէ ١٢٤٦ րէճէպի ٢٥ ին Մանուէլեան Յակոբ վարդապետը Փիլոպաս դրինք Բաթրիկ ընտրուածներուն վրայ. 50000 տակ առաջուց ընծայ տան իմ գանձիս. և 30 միլիոն 38 հազար տակ տարեկան տուրք տան »։ Հայոց Յակոբ վարդապետ աշխարհական Պատրիարք եղաւ, և Նուրիճան հոգևոր Պատրիարք. մինչև ցայսօր ալ երկու Պատրիարքներով էր կառավարուին Հռոմէական Հայք։

484. Պէշճեան իր անթիւ ու մեծ բարեգործութիւններուն անղուգական եղած է Ազգիս մէջ. բոլոր իր կենաց ցոպէնները առանց ազբիւրի և առատնուէրներու չէ անցուցած. եկեղեցիներ և դպրոցներ շինած,

եկեղեցի և դպրոց շինելու Ազգուհական հրամանին դիւրութիւն ընծայուն սկզբնապատճառ եղած. 1828 ին Մայր Եկեղեցւոյ շինութեան մեծ նպաստ ըրած. նոյնպէս Մայր Եկեղեցւոյ Աստուծոյ յառաջադիմութեան շատ խնամք ունեցած, և պէտք եղած եկամուտն ալ անոր նուիրած։ Յոյժ ուրախ Ս. Փրկչի Ազգային վանքն ինք շինած է հանդերձ ամենայն կահ կարասիքով. և Ազգուհական հրաշալագործաւ հրամանն ստացած է Փրկչի մէջ մոմարան շինելու, և Ազգային Եկեղեցւոյ մեղրամոմ ծախելու, մինչ մեղրամոմ ծախելու արտօնութիւն բնաւ չունէին քրիստոնեայք։ Այսպէս բազմաթիւ բարեգործութիւններով նշանաւոր եղած է. ընտիր ընտիր զարդերով և սպասներով շատ եկեղեցիներ զարդարած, և անթիւ կարօտեալոց ալ առատց խարուեան ազգի և կրօնի միշտ օգնութիւն և նուէր մատուցած է, և բնաւ իրեն դիմող տառապեալ մը յուսահատ չէր արձակեր։ Նշանաւոր մեծագործութիւններէն մէկն եղած է Ս. Յրուսաղէմի մէջ Ս. Գերեզմանին վրայ մեր Ազգին համար Ս. Պատարագ մատուցանելու արտօնութիւն առնելն ալ, յաւուրս Խաթիթ Հումայունով ի 1830 ին։ Նշանաւոր են Օսմանեանց Հուսոց հետ պատերազմին ժամանակը Տէրութեան մատուցած մեծ ու հաւատարիմ ծառայութիւնները. նոյնպէս նոյն միջոցին Մայրաքաղաքին մէջ պատահած հայի նուաղը,

թեան դէմ՝ անոր առաքելութեանը համար
շատ ջանք ընելը, և ամէն ազգի պանդուխտն
ու աղքատն ազատելը, որ քանի մը օրուան
մէջ արքունական հրամանաւ պիտի տարա-
ղուէին Յունաստան և ուրիշ տեղեր, հացի
նուազութեան առաջն առնելու համար. բայց
Պէղճեան հրաման հանել տուաւ Սուլթանէն,
որ ուտելիքի վերաբերեալ ամէն նիւթերուն
համար ճաշ և ուրիշ արքունի տուքը շատ-
նուի, և քիչ օրէն Պոլիս լեցուեցաւ ամէն
տեսակ ուտելեաց առատութեամբ։ Նշանա-
ւոր մեծ բարիք մ՚ալ բոլոր քրիստոնեայ հը-
պատակաց ըրած ունի. վասն զի երբ Լէ-
հէ-Տոյոնը հաստատուեցաւ, բոլոր հպատակ
քրիստոնէից վերջինները ալ եվրոպը պիտի խան-
նուէին. ապայն Պէղճեան կրցաւ բարեյիշա-
տակ Սուլթան Մահմուտէն յաւխտեան ան-
խախտ մնալու հրովարտակ առնել, որ հը-
պատակ ազգաց վերջինները ի սկզբանէ ինչպէս
իրենց ձեռքն են, նոյնպէս մինչև վերջն ա-
նոնք պիտի մնան։ Նոյնիկ ալ Թէոլիպանտի էս-
նաֆին խառն-ինները կէորինները վերջինը ունենալն
ազատեց. և կէորինները առուծախն իրենց
մէջ ունել տալու արտօնութիւնը պահել տը-
ւաւ։ Վերջապէս Պէղճեան բոլոր իր կենացը
մէջ իր փառքն ու պատիւը օր առաւ աւելա-
ցուց, մինչև Թոմէրի Հէ-Տոյոն բարձր պատ-
ուանշանին ալ արժանացաւ, որով բարձրա-
գոյն նախարարաց իսկ ակնածութիւնը և
յարգանքը վայելել սկսաւ. գրեթէ միշտ

Սուլթանին հետ տեսնելու, որոր հետ ընկերաս սրտոնութիւնը հատարձակ կը վայելէր. իր հիւանդութեան ժամանակը Սուլթանին բարձր այցելութիւնն ալ ընդունելու նմանը չտեսնուած պատոյն ժամու մը չափ արժանացաւ. և այսպէս ամէն փառքով ու պատուով պակուած տեսնելով իր առաքինի ոգին, մարդասէր վերհանութիւնը և աղգասէր ու աղքատասէր բնութիւնը, պատրաստեցաւ բաժնուիլ ունայն աշխարհէս և երթալ հանդչելու հանդերձեալ յաւիտենական աշխարհին մէջ իր բարեգործութեանց վարձն առնելու համար։ Զմեռած՝ ուղիղ որ իր մխիթարութիւնը կատարեալ ըլլայ, իր հոգի ազդեցութեամբը յաջողեցաւ Փոլերատոյին խնամքը Տիւզեան դերդաստանին յանձնել տալու Ազգուհական հրամանաւ, ի յիշատակ իւր բարեմիտ և երախտագէտ ոգւոյն։ 1834 յունվար 3 ին կնքեց իր կեանքը Պէզճեան Յարութիւն Ազգային անղուգական Խարերարը ի Սինգապուր, Սուլթանին հրամանաւ Ազգուհի Պալասին յատկացած նաւամատոյցէն նաւ դնելով, և Անիգարու տարուելով, մեծ ցահանդէս յուղարկաւորութեամբ թաղուեցաւ Սայր Անիզեցւոյն դաւիթը, Սուլթան Մահմուտին յատուկ հրամարտակովը. վասնզի Պօլսոյ բերդաքաղաքին մէջ բաց ի թաղաւորներէ և խիստ երևելի փաշաներէ և անոնց պարագաներէ ուրիշներ չեն թաղուիր։ Ինքիւ ու անհամար բազմութիւն ամէն ազգի

եկեղեցականաց և աշխարհականաց, և խուռն բազմութիւն ժողովրդեան ուղեկից էին յաղարիաւորութեան հանդիսին, և ամէնքն ալ կ'ողբային զՊէղճեան, որ Աղգիս յաւիտենական երախտագիտութեան արժանացաւ, ու իր Անունն անմահ թողաց։

Պէղճեան իր ժամանակին համար՝ և անոր պահանջմանց ու հանդամանաց նկատմամբ իր բարեգործութիւններովը և իր հզօր աղդեցութեամբ Աղգին վրայ այն երախտաւորութիւնն առացաւ, ինչ որ կրնան ընդունել Հայրենիքը վառանդի մէջ և արիւն թափելու հարկը տեսնող դիւցազները. Հայոց Աղգը իր վիճակին մէջ Պէղճեանի նման բարերար ձեռաց մի միայն կը կարօտէր, և զայն ալ յաւացուածէն աւելի վայելեց։

485. Այն միջոցներուն Աղգին երախտաւոր վարժապետաց մէջ երևելի եղած են։

Ա. Գէորգ պատուելի Տէր Յովհաննէսեան, որ Յունարէն, Լատինարէն, Պարսկերէն, Արաբերէն, Լատիներէն լեզուաց հմուտ էր, նոյնպէս և Հայերէնի. և յօրինած է Պարսկերէն և Հայերէն բառարան մը, զոր Պէղճեան ամիրան իր ծախքը տպագրել տուած է։ Նոյնպէս Պէղճեան ամիրան չզլացաւ նաև Մխիթարեանց աշխատասիրութեամբ Վենետիկ տպուած Հայկազեան ընդարձակ բառարանին մեծաձախ տպագրութեան պէտք եղած դրամական նուէրն ընելը, որ ապացոյց մ'էր իր ուսումնասիրութեանը և Վենետիկու Մը-

խիմարեանց Միաբանութեան վրայ ունեցած համարմանը։

Բ. Դրիզոր պատուելի Փեշտիմալճեան, ընտիր վարժապետ, որ երևելի աշակերտներ թողէն զատ՝ ընտիր աշխատասիրութիւններ ալ ունի. որոնք են Լոռաշատիկ, որ Փիշմիշեան Միքայէլ ամիրայի արդեամբքը տպագրուած է, երկու հատոր Հայերէն Բառարան, Դիմաստանութիւն է չարչարանս Տիրոջոյ անուանով բանաստեղծութիւն մը, Տրամաբանութիւն մը Բերանիանութիւն մը, և ուրիշ մանր գործեր։

Գ. Ցերացու պատա Համբարձումն, որ Հայկական երաժշտութեան ծաղկեցնողն և Հայկական Ձայնագրութեան (նոթա) զարգացուցիչն եղաւ իր գիւտերովը և յարատև հետեւողութեամբը. որ բաւական աշակերտներ ալ ընծայեց Ազգին. որով մինչև մեր օրերը Հայկական ձայնագրութիւնը գալով հեռզհեռէ ծաղկելու վրայ է։

Դ. Երևելի եղած են նաև Պաղտասար պատուելի Պալատու, Խաչատուր ընտիր վարժապետ Սամաթիոյ, տիրացու Յարութիւն, Գրիգոր բազմահմուտ վարժապետ, Տէր Սերոպ քահանայ, որ Բերանիանութիւն մ'ալ յօրինած է։

Երևելի վարժապետաց հետ կը յիշատակենք նաև Թնորհք Սկրտիչ ամիրան, որ 1790 ին հասարակաց Ազգային Դպրոցի հաստատութեան առաջին հիմնադիր պատճառ եղած է, և Խուսմատու Գիւլճի փողոցը, Սա-

մաթիա, Պալատ, Մինչ ապիւղ, Իսկիւտար և Գուրուչէշմէ ազգային դպրոցներ չունել սըռած է. մինչև այն առեն կարգալ գրել սարելու համար յատկացած տեղերն էին խանները, տուները և կրպակները։ Այնպէս Շնորհք ամիրան ըրած է Հասարակաց Ազգային Հիւանդանոցի առաջին հիմնադրութիւնը. ինչպէս եղած են Բերայի և Գալաթիոյի ազգային հիւանդանոցները։ Իսկ Աղջկանց Ազգային Դպրոցի առաջին հիմնադրութիւնն 1830 ին Փարիզեան Անիկ ամիրայի օգնութեամբ Բերայի Տէր Օգաբիա քահանայն ըրած է ի Բերա երկու սրոշ թաղերու մէջ աղջկանց և տնոց կից մանչ տղայոց յատուկ կրկին վարժարաններ բանալով. Ս. Հոգիին և Ս. Լիզմոնդի. Ս. Գայիանէանց և Ս. Լուսորէ անուանց նուիրած։ Ասոնցմէ քիչ մը մանուկ յատուկ աղջկանց համար ասլանեդրոնի վարժարան մը ուսերիչ տիրացու Սերովբէի ժեռադրութեամբ Պէզճեան Յարութիւն ամիրան բանալ տուած էր գարձեալ ի Բերա, ուր ազգատ աղջկունք կար կարել տալու կ'երթային։ Որ բացուած վարժարանները բաւական տուներ Հոգին տեսնելու գարձեալ Տէր Օգաբիայի ջանքովը, որպէսզի անոնց եկամուտքը բաւականութիւն կարելի եղածին չափ։ Երկու մեծ ու հասարակաց աղբիւրներ ալ արքունական հրամանաւ և օգնութեամբ Պէզճեան և Նարարեան Գրիգոր ամիրաներուն շինուեցան այն

երկու թաղերուն վարժարաններուն կիցը. անանկ որ ազգիւրներուն ջուրը վարժարաններուն մէջն ալ վաղելու վաւերական արտօնութիւն ստացան. ասոնց ալ հասարակաց ազգիւրի շինութեան առաջին ձեռնարկութիւնն եղած է Հայոց կողմանէ, որուն համար շատ դժուարութի քաշած են. վանդի բաց ի մահմեդականներէն ոչ ոք կը համարձակէր ասանկ հասարակաց բարեգործութիւն մը ձեռնարկելու։

ԳԱՍ ԾԳ.

ԹԱՆԶԻՄԱԹ Է ԿՈՍՏԱՆԴԻՆԷՆ ՄԻՆՉԵ 1860 ՄԱՅԻՍ 24 ԿՈՍՏԱՆԴԻՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

486. Տակաւին թանզիմաթը հաստատուած չէր, երբ Սմիւռնոյ և Արզրումոյ առաջնորդ Պալատցի Յակոբոս եպիսկոպոսը Պատրիարքը եղաւ 1838 մարտ 12 ին։ Ազգն ալ արդէն ուսման Հաշակն առնելու եռեռեռ էր, և կամեցաւ վարժարաններու հոգ ունէր։ Պէշիկթաշ ամիրային խնամքն անոր առնէն ի վեր բարեկարգ և յարատև կ'երթար Սայր եկեղեցւոյ Ուսումնարանը. ասոր դէմ մրցելու և գրեթէ զայն գերազանցելու համար 1836 ին Խասքիւղի Ներսէսեան վարժարանը Ռէզայիլէան Սկրտչ ամիրային և Նէվրուզեան գերդաստանին ջանքովն սկսաւ ծաղկիլ, ուր Հայերէն, Թուրքերէն, Իտալերէն,

Թուաբանութիւն, Երկրաչափութիւն, Աստղագրութիւն, Հայկական ձայնագրութիւն (նոթա) դաս կը տրուէր, Հնագիտութեան դարձնական փորձեր կ'ըլլար. և թուղթ, գիրք ձրի կը մատակարարուէին. մինչեւ հեռաւոր թաղերէ, մանաւանդ դըպրոցի պանդուխտ ուսումնասէր տղաքներ 18 20 ի չափ այս վարժարանն ընդունուած էին. և մանաւոր տուն մը վարձուած էր անոնց համար, միանգամայն ուսելիքնին կը տրուէր. առաջին անգամն էր որ ասոնք կը տեսնուէին Աղգին մէջ։ Վարժարանին տեսուչ էր Հոմ ուեան Նիկողոս ուսումնական անձը, որ Մեղինաս ըսուելու արժանաւորութիւն ունէր. լաւ տրամ թէ այն միջոցին և թէ անկէց վերջը դպրոցի յառաջադիմութեան շատ փոյթ տանող էր, և մանաւոր խնամք ունէր որ աղգային դպրոցները զարգանան, և Հայ տղաքներն օտար դպրոցներու չկարօտին. այս մրցքով Խասգիւղի վարժարանին շատ խնամք կը տանէր, և որպէս զի աշակերտներն ալ յառաջ երթան Մրցանակաբաշխութիւն մ' ալ առաջին անգամ հոն սահմանած էր։ Հետզհետէ Խասգիւղի վարժարանին համբաւն ամէն տեղ տարածուեցաւ, և կիրակի օրերը մանաւանդ՝ խուռն բազմութիւն ամէն կողմէ կը դիմէր Խասգիւղի եկեղեցին։ Այս համբաւը կործանեց վարժարանը, վասն զի նախանձն արթնցաւ ընդդէմ Ռ'եզայիրլեանի. նոյնպէս թէ Հռոմէական Հայոց և թէ Հայոց

տուներեր յաճախել սկսող և Ազգը պատակտել ուզող Ամերիկացի Դիւրօնարաց քանին չէր զար այս վարժարանին բարեկարգութիւնը և յառաջադիմութիւնը, որովհետև իրենց վարժարաններեր յաճախող անմեղ՝այ պատանիներ ալ չպիտի գտնէին։ Ասոր մոքի պրդտորութիւն մը ձգուեցաւ, և կրօնական տարաձայնութիւնով մը վարժարանին յառաջադիմութիւնն արգիլուեցաւ։ Միւս կողմէն Իսկիւտար Ս. Երուսաղէմայ վանուցը մէջ գիշերօթիկ վարժարան մը կը շինուէր, Ն՚ենարն անուանով, Ն՚արտարատեան Սէրմէրեան Յովհաննէս ամիրային ջանքովը և բան մեծի մասին անոր ծախքովը, գրեթէ Խատգիւղի վարժարանին հետ միցելու։ Բայց այս բարեհաճութեան միցանքին չհասած, Խատգիւղի վարժարանին գոյութիւնն վրայ բացուեցաւ Իսկիւտարու Ն՚եմարանը, 1838 սեպտեմբեր 8 ին, և Խատգիւղի վարժարանէն զրկուող ուսումնատենչ մանկտին սկսաւ հոն դիմել, 3000 ղուրուշ ալ տարեկան թոշակ տալով. այնուհետեւ սկսաւ Ն՚եմարանը կարեւոր ուսմունքներով յառաջանալ ու ծաղկիլ բարեկարգ տնտեսութեամբ։

487. Ամերիկացի Դիւրօնարները Պօլիս եկած, և խիստ քաղցրաբարոյ և սիրելի տեսութիւններ ընելով՝ կը յաճախէին՝այոց մեծամեծաց տուները։ Արտեսիրտ և օտարատէր՝այք ալ միամտաբար անոնց պատիւ, մեծարանք և ընդունելութիւն կ՚ընէին. և զար-

մացումներ ալ կը գտնուէին թէ ինչ մարդա-
ւոր մարդիկ են, որ Ս. Գիրքը ամէն լեզուով
կը տպեն և ձրի կը բաժնեն, առանց գիտ-
նալու որ յուշիկ յուշիկ միտքերը պղտորե-
լու, և Աղգին մէջ նոր պատակուած մ՚ ալ
ձգելու եկեր են այդ Դիւթիչները. որոնք
յատկապէս կանոնաւոր վարժարան ալ բա-
ցած էին, որպէս զի անոր նեմանը Հայք ան-
ուած չըլլալով աւելի Համակրութիւն ստանան
իրենց վրայ. թէպէտ Հայոց մէջ ձեռնհա-
ները կանոնաւոր վարժարաններու արդէն հոգ-
ատարել սկսած էին, ինչպէս Խտգիւղի վար-
ժարանին, և յետոյ Խարբերդու Ներսիսեա-
նին։ Շատով իմացան ազգայինք և զգուշա-
նալ սկսան. բայց նպատակը մանուանդ ան-
գործ անձինք անոնց հետեւելէ ետ չկեցան.
վասն զի անոնց տարբերութիւնն է առատ ո-
ճիներով պաշտօններ տալ կամ գտնել, մինչ-
մինամիտ մարդն իրենց կողմը գրաւելը, և ապ-
գայնց հետ թշնամացնելը. անկէց վերջն ի-
րենք ալ կ՚ըսկսին երեսէ ձգել, և խեղճաս-
մխիթար թողուլ։ Ասոնց նպատակն և ոգին
վերջին տեսնողներս լաւ հասկցուած ըլլալով,
հեռացեան անոնց հետեւողներուն թիւը
պակսելու վրայ է. և թէ որ մոքի լուսաւո-
րութիւնը և հայրենասիրութիւնը գաւառ-
ներուն մէջ ալ տարածուի, մէկ քանի գա-
ւառներէն ալ բոլորովին կը վերնան դիւթիչաց
տունները, որոնք Բրիտանի եկեղեցւոյն մէջ
եպիսկոպոսութիւն ձգելով իրենց անձնական

հանգուցումը թիւնը վայելելու համար եկած էին Ամերիկայէն։

488. Յակոբ Պատրիարքն առաջինն էր Պատրիարքներուն մէջ Մոզէսը առ Վէհապետ Ամենայն Երթալու հրաւէրն ընդունելու մասին Ի. Գանէն Բէհիրէի սամիով. բայց Սուլթան Մահմուտ անձնական տկարութիւն ունենալով. պաշտօնական Ինչպէս պէտքն միջոցաւոր բարձր կամքը յայտներ էր թէ Տէրութիւն և թէ Ազգին օգտակար և կարեւոր պարծանք մը համար։ Երբ Սուլթան Մահմուտ մեռաւ, որդին Սուլթան Ապտուլ Մէճիտ պատը նստաւ, և 1839 ին հաստատեց ԹԱՆԶԻՄԱԹԸ, ուսկէց մեծամեծ շարժներ խրատեցին Ի՛նչպէս ամէն հպատակ ժողովուրդք։

489. Մինչեւ ցարդ Ազգին գործերը միշտ բարդարձակ ամիրաներէն կախեալ էին, որոնք եթէ հնար ըլլար միացնել, շատ բարիք կրնային ընել Ազգին. բայց եկեղեցական թիւնն իրենց մէջ անտարակոյս ըլլալով, Ազգն ալ շատ անգամ կը յուզուէր։ Պատմութիւն մը մեզի կը յուշէ որ Ազգին պարտականութիւնն ունի Իր անդամներուն միաբանութիւնն ապահովելու։ Հրամայեցի անդամներուն միաբանութիւնն ապահովելու։ Օրինակներ կան թէ ինչպէս անդամներուն միաբանութիւնն ապահովելու միջոց. այս ապահովելու անդամներուն ունենալու թէ քիչ մարդիկ կան թէ։ Ամենայն մարդ ունի։ Ամենայն մարդ ունի։

ժամանակի մէջ. սահմանակը՝ ո-
րուն մէջ Ֆոանկիմոնի սկզբանց շնորհիւ կեանք
պատիւ և ստոյգ ածք ապահովցան։

490. Ամիրաներուն դէմ Էանոֆ ժողովը-
դեան մէջէն արդէն ատամունք կրճտողներ
կային. և Ռ՛ասուսպետ և Վառօդապետ և
Շրկանեան ամիրաներն ալ բարեկամ էին ժո-
ղովրդեան։ Ռ՛եմարանը բացուած ժամանակը
Յակոբ Պատրիարքն իր կողմանէ ամէն հոգա-
տարութիւն կը ցուցներ, և երկու տղայ
Պարղուանէն և Սմասիայէն բերել տուած և
իր ծախիւքը յանձնած էր Ռ՛եմարանին. նոյն-
պէս քսան ամիրա ալ երեքական հազար ղու-
րուշ մէյմէկ տղայի գին տալ խոստացած էին.
ասոնցմէ ոմանք տալ չուզեցին, ոմանք ալ
կերպ կերպ տարաձայնութիւններ հանելով
ոկսան հակառակիլ։ Յակոբ Պատրիարքը ա-
տոր ճար մը դտաւ, դուրս երթացողներէն
հինգականն ղուրուշի նուէր մը սահմանեց Ռ՛ե-
մարանին համար, որ Ընկերէհանէին միջոցա-
կուգար։ Յետոյ ամիրաներուն անմիաբանու-
թիւնը, և անոնց թէ արտաքուստ և թէ ի
ներքուստ իրարու դէմ հակառակութենէն
գալիք վնասը յայտնի դուշակելով, երկպա-
ռակեալ ամիրաները ժողվեց, և առաջարկեց
որ Ազգային Պատրիարքարանի կողմանէ պաշ-
տօնական կերպով Էանոֆ ժողովրդէն յատուկ
տուք ժողվուի, և այդ տուքին վրայ քսան
և չորս անձինք իւրաքանչիւր Էանոֆէ հոգա-
բարձու ընտրուին, որ հաշտութիւն ցու-

ցրցին ամիրայք, կամ հեռուանքը չդիտնալով. կամ էանոֆն ինչ պետի կրնայ ընել նայինք՝ ըստ ելքոս արհամարհանօք մը։ Կարգուեցան քրիստոնեչարանները, և Վերեէմքուլեան Հեթումն ալ Փերեիրէօր կարգուեցաւ տեսրակ բռնելու. և ուրիշ գանձապետներ տահմանուեցան։ Այս ժողովին մէջ սարդոֆներէն ալ երիւ հոգի պետի դրուէին, որպէսզի անանց մէջ ալ հաւաքուած տուակին հոգ տանին։ Նոյնպէս Ազգային Պատրիարքարանին մէջ Գաստանեան ժողով դրուեցաւ եկեղեցականէ և աշխարհականէ բաղկացած ընդ նախագահութեամբ Պատրիարքական Փոխանորդի։ Այս Գաստանական ժողովին ձիւղեր հաստատուեցան տեղն մէկ թաղերուն մէջ, որոնք յարաբերութիւն ունէին Պատրիարքարանի Գաստանական ժողովին հետ։

491. Առաջին անգամ ժողովոյն կոչմանէ այս քանանչորս անձինքն եղան, որ իշխանութիւն ունեցան ազգային ելեւմտից վրայ հսկելու։ Այց ասոնք ալ բաւական խրատ ըլլալով խնդրեցին, որ ամիրաներէն վեց հոգի տեսուչ կամ Տ-ԵՐԵՎԷՆ դրուին, որպէսզի երբեմն ժողովի գան և ժողովոյն ըրածներուն տեղեկանան։ Երբ Պատրիարքին քով ժողովուեր էին քանանչորս անձինքն ու ամիրաները, ու այս առաջարկութիւնն եղաւ, ամիրաներէն մէկը՝ որ առաջ ժողովոյն բարեկամ էր, յոխորտաբար յանդիմանեց թէ. Լանոֆ Խոխոլէի մարդկանցդ պիտի հե-

տեսիլքը, զմեզ ձեզի հաւատոյն ընել կ'ուզէք։ Այս վիճակաւորքը վերջինն եղաւ, և անոնց ոչ երբեմն գարձեան սկզբնաւորեցին. վասնզի մարդկանց մեկնելու վրայոյց և զայրացած։ Պատրիարքը ձեռքը ծունկին և գլխաւն զորնելով հեռաւորելէ խառնուածներն ակնարկելոյ. թէպէտ խառնուածոց հեռաւորքը խառնաղաղութիւն մ՝ էր, և անուն ոչ՝ մարդկանց երկնակուութիւնը անով սկսան յարգարուէր։

492. Այս միջոցին Աղին գործերն ուելի խեղճ մնացին. մարդկանց վարժարանաց հոգը էանոփոց բաժնուած էր. անոնց վարժապետացը և աբիշ անոնցոց ալ տարուհանար ուշնան հաղար ղուրուշ պէտք էր։ Նոյն տարուոյն (1840) Ս. Առաքելոց տաղաւարին. քանի շրջանները նոր բաշուեցան և Պատրիարքին մեռնուածներուն ամիրայք ելին մեկ 40 հազար մարդ էանոփները տուն, 40 հազար ալ իրենք։ Էանոփները իրենց խառնուածը վոյ հաստատ էին. բայց ամիրաները ոչ երբեք։ վասնզի էանոփներուն տակ տարը իրենց գաղուածները կը գրէր. և իրենց զօրութեան տարբոյ բնկուծը նշանակելով, թողուած էին, որ էանոփներն իրենց տեղուածները ճանչնան։ Յակոբ Պատրիարք յուսահատած տարուելուս հրաժարականը տարը 1840 նոյեմբերի մէջ. ամիրաներուն ալ ուզածն այն էր. բայց Յակոբ Պատրիարքին ցանած սերմը կ'աճէր։

493. Յաջորդեց նախորդ Սահակն Ս-

պիսկոպոսը որ երկշտամբ ըլլալով՝ ամիրայից գերբաս գլուխ կը ծռէր. ասոր աջ խորհրդական (դ-ՐԷՇՐ) գրաւեցաւ Ս. բնաշխ վանուց մի-ապան Պօղոս Եպիսկոպոսը։ Յաղանդորդը հան-գարտ չմնաց. վասնզի ամիրայից հակառակու-թեամբը Ն'ենդրանն սկսեր էր ծանրանալ Ամերիկեանին վրայ, որ վերջապէս 1841 թին սկիզբնեալը անոր դ-ՐԵՔԼԷՈՒԹԻՒՆԸ ձգելով. և Ն'ենդրանին տեսնելն ալ քանի մ' ամսակ-ներէ ետքը դիմացը գիմանալու անկարելութիւնը տեսնելով, 1841 տարի 6 թին վերջին քնու-թեան հանդիպած մը հրաւիրելով տղայոց ծը-նողքը, ուր գրեթէ Ն'ենդրանին բարեկամ և-զող բաւական ժողովուրդ ալ կը գտնուէին, ուստից առջեւ գրաւ տղու առնտրանու-թեամբ մը. թէ Ս. Գրքին թնչ օգուտ ձեռք պիտի բերուէր Ն'ենդրանին հաստատութե-նէն, և թէ թնչ վնասակար պիտի ըլլայ անոր կործանումը։ Ս. տոր վրայ հետեւեալ կիրա-կէն Էնոֆ ժողովուրդը իր մէջ միաբանեցաւ, և Մ'էոկոմ անուանեալ բնակչութենէ մը կարգեց Ն'ենդրանին հաստատութեան և յարատևութեան ամէն ջանք չնայելու։ Եւ սակ իր կոչ-մէն զատ ազատութեան թեամբ մը խնդիր ալ Պատրիարքարանին թէ, Ն'ենդրանին եկեղե-ցի ուրիշ տղայոց հաստատութենէն եկե-ղեցականն բաժնուի։ Ս. ատեն ամիրաները Յու-կոր Պատրիարքին ատենակալ Ն'ենդրանին 5 գրաւոյ տուրքը Թէոդորիկ հանելու վրայ, Պրիչի վանուց յաստիցուցեր էին, Ն'ենդ-

բանը շուտով գործելու համար։

494. Ամիրաներուն ոտիպմամբը Պատրիարքարանը ականջ չկախեց այս բողոքին։ Ուստի ապրիլ 18 ին Ռեմարանի բոլոր աշակերտքը իրենց ծնողաց հաճութեամբը փեղապխանէն՝ աղերսագիր տուին վեհարտա Ազգային Ռեմարանին յարատևութեանը համար։ Ասոր վրայ Պատրիարքարանը զայրացած, այս գործին գլուխ կեցողներէն մէկ քանին կանչեց ու յանդիմանեց իբրեւ ապստամբութեան հեղինակներ. բայց անոնք մերժեցին Պատրիարքարանին սասը։ Արթալով խնդիրը ազգային կերպարանք առաւ. ժողովուրդը ամիրաներուն դէմ՝ միանգամայն անոնց կուսակից Պատրիարքարանին դէմ զայրացած, աղերսագիր տուաւ, և բոլոր ազգային եկամիտոց ու գործոց տեսչութեանը համար խնդրեց որ 24 անձանց պաշտօնը Ն. Պ. Ղուսը վաւերացնէ. որուն համար քանիցս անգամ Ազգադարութեան Ատենին մէջ (Ազգասը Ազգէյե) դատ վարելով վերջապէս ատացան իրենց ուզածը, անանկ որ ամիրաներն ամենեւին չպիտի խառնուէին. այլ իւրաքանչիւր Էնոֆ իրենց մէջ համագումար ժողովով երեսփոխան ընտրէ, և Էնոֆին բաղմակնիք վկայականովը ընտրեալը գայ Պատրիարքարան, և ատոնցմով կազմուի քանանչորս անձանց ժողովը, որ բոլոր Ազգային գործոց տեսչութիւնը վարէ. այս եղաւ յուլիս 1 ին, և ահա այսպէս առաջին անգամ ժողովրդեան իրաւանց պաշտպան

ժողովրդեան կողմէն վարչութիւն մը հիմնարկուեցաւ, որ Հայոց Ազգին իշխանութեան և անիշխանութեան ժամանակներուն մէջ, ակիզբէն մինչեւ ան ատեն տեւած չէր բնաւ։ Ասիկա մեծ ամօթ էր ամիրաներուն. ուստի ամէն հնար իգործ դնելով Ի. Դրան էն եկած պոյրոլոն անգործադրելի թողուցին. վասնզի անհամբեր ժողովուրդը ֆերմանի չսպասելով, առ ժամն պոյրոլոն մը միայն ձեռք ձգած էր, որպէս զի ոչ միայն Ներսիսեանին հաշիւներուն կարգադրութիւնն ընէ շուտով, այլ ազգային հաշիւներն ամբողջ պահանջէ. ասով ֆերմանը եւ մընացած էր։ Զարմանալի է ճնշուած և տառապած ժողովուրդին անակնկալ բորբոքումը. ամիրայք Ի. Դրան մէջ ամէն զօրութիւն ունէին, ամէն տեսակ հնարներն իգործ կը դնէին. իսկ ժողովրդեան զօրութիւնն իրաւունքն էր, և պաշտպան՝ Ի. Դուռը։ Ուստի ժողովուրդը օգոստոս 24 ին Զէյնոնապոլին նորէն ազերադիր տուաւ Սուլթանին, որ Վառօդարանէն կը դառնար։

495. Սուլթան Ազիզ Մէճիտ բարեխնամ կայսրը հրաման ըրաւ որ Ազգին խնդիրը անշուշտ գործադրուի։ Օգոստոս 24 ին Ի. դունէն կը վերադառնայ ազերադիր տուող անձը, որ էր Մէխանճէի Իսկէնտէր պատրաստարան և համարձակախօս Հայը, և քան և չարս անձինքը. ատոր վրայ շուկայն կրպակները ածուպարանոք գոցելով 3–4 հազար ժողովուրդ

ելը գիտեն Ի. Դուռը. ապերասպիր տուողը մեկ մարդ մը չէր, այլ բազմութիւն ալ և բոլոր Ազգն ալ՝ ընդդէմ։ Նոն քառնեն չորսներէն ներքևոյ եզան տասնեվեց Հոգին բանտարկուած էին, և մինչ Խակենատէս ալ պիտի բանտարկուէր. ժողովուրդն իր ձայնը բարձրացուց, ապերասպիր տուողը մեր ներք ողողակեալ. և քառնեն չորսներն ալ իր ընտրածն ըլլալով, անոնց ազատութիւնը Դամար բոլոր ըրաւ վերջին ատենն զայրութիւն, և թող չտուաւ ալ։ Վասն Ի. Դուռը խաղաղ ճամբով կը ճամբէ ժողովուրդը. խոստանալով որ անոր ուզածը պիտի ըլլայ։ Դարպէս ազատեցաւ, (որոնց մէջէն խիստ քիչերը տհաճ ըլլալով եզածներուն վրայ չէզոք կեցեր էին,) և անոնց վերայոյ ամէն կարգի եկեղեցականները այս վրդովման շուտով վերջ տալու միջոցները գտեր էին. մինչև Անթոնեան Պետրոս վարդապետը Անտոքին Դրծոյ Պաշտօնէին առջը գիտելով ուրիշ հնար չէր գտներ խաղաղութիւն, բայց եթէ պարտադրութիւնները գլխառելը, և կամ մինչև անոնք կ՚ուզէին՝ ոչնչելը։ Այս վերջինը յաջողեցաւ, վասնզի սեպտեմբեր 13 էն քառնեն չորսներն Դուռը կանչուելով, օգոստոս 24 էն գէպքը սեպտեմբեր ամբողջ երբ յանցանք (Դ-ՓՓԵՀԻՆ) ընել գտնեցին. և ասոր վրայ սեպտեմբեր 17 էն ոչնչուիլ սկսան հետևեալ անձերը,

Անթոնեան Յովհաննէս վարդապետ Բուրդէշ Ղ-ՂԸ-ՀՃՈ-ԽԷ.

Տիվիմեան Գէորգ.
Սէֆաեանի Իսկէնտէր.
Յակոբիկ Սամուէլեան Տէրէն Ռէհարանին.
Յարութիւն Յովհաննէսեան.
Սարգիս Աղբիւս.
Պատմութիւն Հնոյն Պերսիոյ։

Այսր օրս ժողովեան կարգեալ Ի. Գուսը զայսին Պօղոս վարդապետ Պերսուսեան և Սիրականի Սոնիսան և ուրիշներ՝ քարոզելու հանար ընդ դէմ սրբոցայց։ Զար վրայ յիշեալ երկու անձինքն ալ սրբուսեցան անմիջապէս։

496. Կարծեցին սմիրոյք որ սատ վերջացաւ, և ալ խաղալ պիտի մնան. բայց ժողովուրդը հետևեալ օրը սեպտեմբեր 18 ին հինգշաբթի՝ հաշտանէրը լսուած հանելուն բանտանոյն ազատիր սուտ սուլթանին պատմին առջև. ասոնք բարին ալ նոյն օրը բանտարկուեցան, և դիշերը ապատութիւն ասացան՝ սովն մարդ իր տեղն երթալու։ Բայց այս վերջինն եղաւ. վասն զի Պատրիարքը փոխուեցաւ, և Զատուածատուր եպիսկոպոսը պատրիարք անուանեցաւ, ուստի առանց ժողովեան դիտելոյն և հաճելոյն. քան զոր ժողովուրդն ասելն ապարդիւն դարձալ ջարգած էր, և եթէ ոչ Յակոբ եպիսկոպոսը չունէր Սամթէոս եպիսկոպոսը պատրիարք կ'ուզէր։ Սակ նոյն ասելն դեկտեմբեր 12 ին դարձեալ ժողովեան ջանքովը՝ բանեւ օթ անձանց վրայ հաստատեցաւ ազգային Վարչութեան բոլոր հա-

գատարութիւնը արքունական հրամանագրով։ Այսպէս աւելի ոյժ առաւ և հաստատութիւն դատաւ ժողովրդեան իրաւունքը պաշտպանող ազգային Վարչութիւնը. որուն կազմութիւնը վերջերն աւելի օրինաւոր կերպարանք առնելով և սահմանի մը ներքև դրուելով՝ քննեցաւ Սահմանադրական Վարչութիւն, ինչպէս պիտի տեսնենք քիչ մը վերջը։

497. Տարի մը չտևեց, երբ քանանեօթները ձանձրացան, և ամէն կողմէ եղած խոչընդոտներուն չդիմանալով, պարտաւորեցան 1842 սեպտեմբեր 25 ին հրաժարական տալու։ Ամիրաներն այնչափ չյոգնեցան այս բանին. վասն զի արդէն իրենց ժամանակն այնպիսի դրութեամբ բացարձակ դ-ՐԷՎԷԼԷՈ-ՐԷ-Ն կը վարէին, որ եթէ ուրիշ մէկն յաջորդէր իրենց, պարապ անուններէն ուրիշ եկամուտ կամ կալուած չպիտի դանէր. հետևաբար շատ դիւրին էր քանանեօթներուն անբաւական մնալը։ Ասոր նոյեմբեր 13 ին վերոյիշեալ ամիրայից յանձնուեցան վարչութեան հոգերը. բայց այս անգամ ասոնք ալ փորձեն առին որ առջևնին նման միամիտ ժողովուրդ չպիտի դտնեն առաջ առաջ նուխրատու. հետևաբար հասկցան որ իրենք ալ հապա քիչ մը ժամանակ պիտի կրնան տակալ։ Վերջապէս ասոր միջին Ճանապարհ մը գտնելու համար՝ ժողովրդեան սիրելի և բարեկամ Ասատուր եպիսկոպոսը Պատրիարք ընել որոշեցին, որ 1844 յուլիս 17 ին Պատրիարք ընտրուի՝ Գանոֆ

ժողովուրդը հաշտեցուց ամիրաներուն հետ, և 16 ամիրայէ բաղկացած Ընդհանուր Ժողովոյն 14 ալ երևելի անձինք Էնաֆէն կը կոչէր, որոնք ամիրայից սիրելիներէն ընտրած էր, որպէս զի անանկով քիչ քիչ ընտելացնէ ամիրաները։ Այն տարին սեպտեմբեր 14 ին ժողովով որոշուեցաւ թէ այնուհետև Ս. Աջ միածնի Տ. Ներսէս Ե. սրբազան Կաթողիկոսն ամենայն Հայոց՝ Ս. Պատարագի մէջ յիշատակել սկսուի, որ մինչև ան ատեն չէր ըլլար։

498. Սատթէոս Պատրիարք սկսաւ դպրոցներու և ընկերութիւններու հաստատութեան և յառաջադիմութեան եռանդով հոգատանիլ, և մասնաւորապէս շարժում տալ Աղգին։ Արդէն երբ Իսկիւտարու Ռ'եմարանը գոցուելով, տեսնուեցաւ թէ ժողովրդեան սիրտը բեկաւ, և թէ ընդհանուր Աղգին կողմէն անանկ հաստատութիւն մը պայծառ պահել նոյն ժամանակին համար գրեթէ անկարելի է, ուստի մասէր և ժողովրդեան պարագլուխ եղողներու մէջ որոշուեցաւ որ մասնաւոր ընկերութիւններու միջոցաւ թաղերու մէջ կանոնաւոր վարժարաններ բացուին, ուստի 1843 ին սկսաւ Սամաթիոյ Սոկոլէան վարժարանը ծաղկիլ և յառաջանալ համանուն ընկերութեան մ'արդեամբքը, որուն պարագլուխ կեցած էին Փափազեան Մինէճի Ենդրանիկ և Աղաբրուեան Թրխատուր։ Ասոնք այնպիսի խակ և ուսումնքն ինչ բան է կամ ինչ

գունի կարևոր ընդարձակ տակաւին չճանչցուած ժամանակի մէջ ամէն կողմէ հակառակ միշտ հոլովուելով կերծք տուած՝ մեծ նպաստ ունեցան Սահակեան վարժարանին յառաջադիմութիւնը, որ օր ըստ օրէ կը զարգանար, և մեծ հաճոյք կ՚առնէր, զանազան ուսմանց և լեզուաց դասաւորութեան շարունակութիւնը, և ժամանակ մը այսպէս միօրինակ յարատեւութիւնը և բարեկարգ վարչութիւնը երեք տարի ալ Ազգին։ Սամսիմեան միւս թաղերուն ալ օրինակ եղաւ Ազգային։ Այս արժանաւորները փոխանակ մէկ կամ երկու ամիսներ նպաստով խնամելու անոնց ինքնակամութիւն խոստանալի և վերջապէս զոհ ընելու, ժողովրդեան ու մայրաքաղաքին զարգացման և ընկերութեան զանոնք կատարելու։ այս ընկերական ոգին զարգանալու տարուս դիւն ըրած է Սամսիմեանց այս արդարին առ Հայրապետ։ և կրնանք ասել թէ Պօղոս և աչ մէկ թաղին Այս բնակիչները մի և նոյն եռանդուութեան և ընկերականութիւն դրսեւորեցին մեծ մասնաւորապէս մեր Ազգը կամա-

նաւ որ գիշերօթիկ վարժարան մ՚ունենալով, ապագայնք իրենց զաւակն օտարազգի դպրոցներ խրկելու չարտաւորին։ Պօղոս մէջ բերուած վարժարանները գոհ չեղողներ աչ եղան, որոնք իրենց զաւակներն սկսան Նիւրոտ խրկել, և հոն զանազան ուսմանց և արուեստից և լեզուաց պարապեցնել։ Լրագիրներ ալ սկսան հրատարակուիլ. և մասնաւորապէս մարի լուսաւորութեան միջոցներ, քիչ շատ Հայոց մէջ ալ սկսաւ գրքեր սիրել։ Վերջապէս առհասարակ ուսումնասիրութեան ոգի մը կը տեսնուէր Պօղոս ազգայնոց վրայ։

499. Սամթէոս Պատրիարքի ժամանակ ազգային Պատրիարքարանի հետեւարար Նշանդիս պատիւը ճանչցուիլ սկսաւ օտարներէն։ 1845 ապրիլ 18 ին Հայոց բաւական ուղղը արքունական հրամանաց հանդէս եղած ժամանակը, երբ հպատակ ազգաց Պատրիարքները Սուլթան Աբդուլ Մէճիտի ներկայացան, Սամթէոս Պատրիարք իր անուանկիւղ Հարգանանութեամբը՝ միջոց ամէնքն ալ կը տասնամէին, փութաց ազգային առջեւ բարձրին կարմանէ ծառայական խոնարհ յարգանքը յայտնելու, և վերհատուռ ազգային կենացը համար աղօթելու. և միանգամայն հաւկցուց որ ուրուութեան հպատակ ազգաց մէջ խաղաղութիւն ընելու համար հարկ է որ Պատրիարքներն իրենց մէջ համաձայն և սիրալիր ըլլան։ Սուլթանը շատ սիրտ ժելով Սամթէոս Պատրիարքին այս խօսքերն, խոկոյն

Մի-ամիջարոլ-ին շքանշանն ու պատիւը տուաւ Հայ, Յոյն, Հռոմէական և Երէց ջոր ազգապետներուն ալ. և Հրամայեց որ ամէնքն ալ իրարու հետ միրով ըլլան, և մէկ մէկու այցելութիւն ընեն։ Նոր վրայ Յունաց Մելիտոս Պատրիարքը, Հռոմէականաց Հասունեան Պատրիարքը, Երէց մեծ Ուարբին՝ առաջին անգամ մեր Ազգային Պատրիարքարանն այցելութեան եկան, որոնք բան արժանաւոր յարգուեցան. և յետոյ երեքին ալ փոխադարձ այցելութեան դնաց Սատթէոս Պատրիարք։ Նոյն տարին յունիս 13 ին Ուսաց Նիկողայոս կայսեր որդին Կոստանդիանոս դուքսը Պօլիս եկած ըլլալով, Ազգային Պատրիարքարան այցելութեան եկաւ, որուն հետ ընկերացեալ էին Ուսաց դեսպանը, Ինֆանտ փաշան և ուրիշ ջոր հազարապետներ և մեծ պաշտօնատէրներ, և Այվազովսքի Յովհաննէս երևելի Հայ պատկերհանը։ Դարձեալ նոյն տարին օգոստոս 4 ին Դաղզէոյ Լուի Ֆիլիպ կայսեր որդին Օնմբանիէ այցելութեան եկաւ Ազգային Պատրիարքարանը։

500. Սատթէոս Պատրիարք բացարձակ իշխանութիւն կը վարէր, և միշտ Ազգին օգտին ու յառաջադիմութեանը նպաստել կը ջանար. ամիրայք ալ առաջին յեղափոխութիւնով բաւական խրատուած ըլլալով, Սատթէոս Պատրիարքին ազատ կամոյ արգելք ըլլալ չէին կրնար։ Ամիրաներէն մէկ երկուքը Պատ-

քիտոլքն լրեն կրոնական ընել, կամ լրեն
անիրաւութեան կամակից ընել չկրնալով
թշնամացան հետը, և կ'ուզէին հրաժարեցը-
նել. բայց ուրիշ ամիրաներ, մանաւանդ Ն'ե-
զայիրլեան Սկրտիչ ամիրան՝ որ խիստ զօրեղ
և պայծառ վիճակ մ'ունէր նոյն միջոցներուն,
պատրիարքին պաշտպան կեցած էր։ Թէպէտ ժա-
մանակ եւոքը Ն'ե զայիրլեան ալ թշնամացաւ,
բան որուամ Սամթէոս Պատրիարք անոր հօրը
մահուանը յուղարկաւորութեան համար խնդրած
էր գացեր, որմէն ետքն ալ՝ լրեն
հետ թշնամութիւն ունեցող ամիրային մե-
կուն ալ մէկ ազգականին մահուան յուղար-
կաւորութեան ալ էր գացեր հիւանդութիւն
պատճառելով։ Ն'ե զայիրլեան ամիրան առ-
ատիկ զայրացած, ինքն ալ կ'ըսէր պատրիար-
քին հրաժարման աշխատելու։ Յաղթուրդն
արդէն ամիրայից իշխանութիւնը սահմանա-
փակելու համար, փոխանակ ամիրայից խա-
նարհող պատրիարք ունենալու՝ լրեն բարե-
կամ մէկը պատրիարք ընտրած էր, որպէս զի
ան ալ բացարձակ իշխանութիւն ունենալով
թոյլ չտայ որևիցէ ազգաւիս դրծերու.
առ համար ամիրայք ընդհանրապէս չը սի-
րելով Սամթէոս Պատրիարքը կ'ուզէին հրա-
ժարեցնել։ Եւ որպէսզի կը վախնային այս
ալ յայտնի ընելու, խորհեցան որ պատրիար-
քին իշխանութիւնը սահմանափակեն, և Ն'գ-
գայեն Պարշութեան դրծերը երկու ժողով
նելով կատարեն, ու պատրիարքն ալ ա-

ռանց ժողովոց գիտութեանը Ի. Ղուռը Ընթրեր չտայ։ Ասաի Կրմիկեան Յակոբ Էֆէնտինին աշխատութեամբը մեծ եպարքոս Ի՛նչիտիաշան՝ որ Ն՛ղայիրլեանին խիստ բարեկամ էր, հաճելով հրովարտակ հանեց արքայէն և խրկեց 1847 մայիս 9 ին Հայոց Պատրիարքարանը, որով երկու ժողով հաստատելու արտօնութիւն կը տրուէր. մէկը 20 աշխարհականներ անձերէ բաղկացած Գերագոյն անուանով ժողովը, որ հիմա Բաղչական կ'ըսուի, և միւսը 14 եկեղեցականներէ բաղկացած Ազգ-ոյ անուանով ժողովը, որ հիմա Կրօնական կ'ըսուի. այս երկու ժողովներուն պատրիարքը պիտի նախագահէ. և Լ Էօղօֆլի անուանով պաշտօնեայ մը, որ Գերագոյն ժողովոյ տնօրէնութիւններուն գործադիրը պիտի ըլլայ։

501. Պատրիարքին հակառակորդներն ասով վնաս մը տուած չեղան անոր, վասնզի գիտէր պատրիարքը թէ ինչ մեծ արժէք ունի և մանաւանդ պիտի ունենայ այդ արտօնութիւնը ապագային մէջ Ազգին համար. այն օրերն ելթէ ամիրաներն լաւ մեծի մասին կաղմեն ժողովը, օր մ'ալ ժողովուրդը իր ընտրած անձերով կազմել պիտի տայ այն ժողովները, որոնցմէ կախեալ պիտի ըլլայ Ազգին ապագայ վիճակը։ Ասոր առով վրէժ մը չը-կրնալով առնել, ուրիշ դէպքով մը առիթ դտան։ Բարեպաշտ և ազդասէր Օտեան Պօղոս աղան եօթանասունեւհինգ հազար դուռուշ նուէր կ'ընէ Բարակէօմրիւկի նորաշէն

Ս. Նիկողոսյան և Պարոյին ձեռամբ Սատմէոս Պատրիարքի, բայց կ'ապարդէ պատրիարքին որ մարդ չպիտի գիտնայ բայց իրմէ, և մէյմ՝ալ Փարիզեան ուր Յովհաննէս քահանայէն, որ անոր խոստովանահայրն էր։ Ամբոխները կը լսեն այս նուէրը, և ժողովի մէջ կը պնդեն որ նուիրատուն խմանան. պատրիարքը կը մերժէ. և խոստովանահայրը Տէր Յովհաննէս կը կանչուի. ան ալ զայրութիւն կը մերժէ. և ամիրաները, մանաւանդ Ծէզայիրլեան բարկացած կը մեկնի, ու այս գործը Էշխան փաշային իմացնելու կ'երթայ, որուն ամենապիսակին ընդդիմութիւն կը խնդրէ պատրիարքին հրաժարիլը։ Էշխան փաշան Կրճիկեանը կը խրկէ որ պատրիարքը խաղաղութեամբ հրաժարուի ատոր։ Հուսկ ուրեմն Սատմէոս Պատրիարք եղծնեցէք զգուելով, 1848 Հոկտեմբեր 1 ին Ընդհանուր Ժողով կը գումարէ Սայր Նիկողոսյան մէջ, և իր հրաժարականը կուտայ. բայց ժողովուրդը շատ կ'ընդդիմանայ, և վերջապէս Սէխանէճի Իսկէնտէրը ոտք ելելով ձայնը կը բարձրացնէ թէ, "ի՞նչու կը վրդովիք, ով Հայեր, ամիրաները Սատմէոս Պատրիարքը չեն ուզեր, անանկ էնէ Յակոբոսը նորէն պատրիարք թող ըլլայ. եթէ Յակոբոսը չուզեն, Սատմէոսը պիտի ըլլայ, կամ ա կամ ան. ժողովականը բանիկամ ասոնք են, ժողովուրդն ալ ասոնք կ'ուզէ". ասոր վրայ ժողովուրդը հաճութիւն կը ցուցնէ, և ամիրաները չկրնալով դիմա-

նալ, հաճութիւն կուտան Յակոբոս Պատրի-
արքին վերատին ընտրութեանը։

502. Յակոբ Պատրիարքը (որ նոյնն է Յակոբոս Պատրիարք) 1848 Նոյեմբեր 1 ին Կոնդակիայէն Պօլիս հասաւ և Ի. Դուռը գրեաց ըստ սովորութեան, և վերադարձն ի Պատրիարքարան շատ շքով և ժողովրդեան ուրախութեան աղաղակներով եղաւ։ Որոշ օրով Աղէն աւելի շարժում ընել սկսաւ առաւելապէս մասին. գաւառներուն մէջ ալ ուսումնասիրութեան ոգին տարածուիլ սկսաւ, և առ հասարակ Հայոց մէջ մտաւորական և բարոյական շարժումմը երևցաւ։

503. Իսկիւտարու Ն'եմարանն արդէն բաւական ծանրացեր էր Աղգին վրայ իր ծախուց կողմանէ. ուստի 1850 ին ժողովով որոշուեցաւ որ յիշեալ Ն'եմարանը իր գոյքով և աշակերտներով փոխադրուի Կէտիկուլէի Ս. Փրկչի վանքը, ուր արդէն տարի մը յառաջ նախակրթական վարժարան մը բացուած էր աղքատ և որբ տղայոց, որ Աղգին խնամոց ապաստանած հոն պատսպարուած էին. և երբ Ն'եմարանն ալ հոն փոխադրուեցաւ, ան այնուհետեւ Ս. Փրկչի Ն'եմարանը սկսաւ բաւական ծաղիլ, և գնացքն ուսմանց և լեզուաց դասախօսութիւնով յառաջանալ, և աղքատ ու որբ տղայոց մխիթարութիւն մը ըլլալ. մանաւանդ որ հետզհետէ դաւառներէն ալ աղքատ և անտէրունչ տղաքներ և վիճակը ներող պանդուխտ տղաքներ ալ հաս-

շակով հոն յոռնախեղով, Փրկչի Ն'երմարանին կարեւորութիւն մը տալին, և Աղգն ալ սկսաւ մեծ յոյսերով անոր վրայ հսկել. որպէս զի հոն պատսպարուող աղքատ տղաքները, մանաւանդ պանդուխտները զարգանան ուսմանց մէջ, և քիչ ժամանակէն երբ իրենց հայրենիքը վերադառնան իրենց հայրենեաց լուսաւորութեան ձեռնտու ըլլան։ Ասանկ բոլոր գաւառներէն, ուր Հայ կը բնակի, ընտրանօք տղայ առնելով խնամով կրթելու որ ըլլան, անտարակոյս ենք որ քիչ ժամանակէն Հայաստան կը լուսաւորուի, և Աղգին վիճակը դէպ ի բարեորութիւն կերպարանափոխ կ'ըլլայ։

504. Սկսաւ աղգային հաստատուց վարժարաններն ալ գրեթէ իրար դերազանցելու ճիգեր մտնէին։ Այդ Աղգին մէջ ընտիր ուսումնական անձինք Պօղոս Թարգիան և հեղինակ գաւառներուն վարժարանաց ուսումնասիրութիւնը նիւթելով, աղգայնոց աւան նուէրներով վարժարաններուն համար եղած ծախսերը տեսնելով, դպրոցներուն վիճակը ուսելի հաստատուն հիման մը վրայ հիմնելու և զանոնք ուսելի արդիւնաւոր ընելու համար կարեւոր գտան Աղգային Դատարանակութեան հանդիսական ուսումնական ընթացք մը հաստատելը։ Ասոր Աղգային Գերագոյն ժողովը այս ամենահարկաւոր պաշտօնին համար ուսումնական անձերէ Ասուսնական Խորհուրդի մը կազմութեան կարեւորութիւնը զգաց, և 1853 Հոկտեմբեր 28 ին պաշ-

ուսնական յայտարարութիւնով մը հաստատց Աստուծական խորհուրդ մը ստանելոյս ուստուծական և բազմահմուտ անձերէ։ Ա. յս խորհուրդին գլխաւոր պաշտօնն էր ազգային դատարակութեան ընդհանուր վերատեսչութիւնը, այսինքն. նախ՝ ազգային վարժարանները ուսման ընթացք մը տալ. երկրորդ՝ թէ հատարակութեան և թէ վարժարանները պէտք եղած գիրքերը տնօրինել. երրորդ՝ վարժարանները գատատուներն ընտրել և անոնց վրայ հեղինակութիւն ունենալ։

505. Աստուծական խորհուրդին առաջին ուշադրութիւնը գրաւեց Ս. Փրկչի Ն՝ենագրանը, ու գեղեցիկ հեռատեսութեամբ մը որոշեց որ այն աղքատ ու հայատանցի ազգայոց հոգատարութեան ամենակարեւոր ուսուցման ալ մատակարարուի հանդերձ կարեւոր ուսմունքներով. և 1854 յունիս 3 ին սկսեցաւ թիւնեղան հոգատարութեան վարժարանի մը սեպհական ուսանոց գատատուութիւններն ըլլալու հոն, ընդ տնօրէնութեամբ Ց. Սմառեանի, որ Փարիզի ազգային հոգատարական դպրոցին մէջ ուսած, և Աստուծական խորհրդոյ թէ անդամ էր, և թէ անկէց ընտրուած՝ այդ պաշտօնին։

506. Մինչեւ Ազգը մեծ յոյսեր ունէր Աստուծական խորհուրդէն, և ահա հակառակութեան ոգին միջոց գտաւ Ի-ղէաթսուրիւն անուանով աշխարհաբար լեզուի քերականութիւն մը հրատարակուելէն, և դարձ-

եալ Տէրեանց անունով յիշեալ Ուղղախօսութեան լեզուով խմբագրուած գրքոյկ մը. և զանազան տարաձայնութիւններ ալ յերևան ելելով՝ Ասուծոյն խորհուրդը վհատած ըսծուեցաւ իր մէջ, և 1855 ին բոլորովին դադրեցաւ։ Իսկ Փրկչի Հղագործական վարժարանն ալ անոր մօտ գտնուող Ս. Յակոբայ վանքը փոխադրուեցաւ, ուր ազգասէր քարերար անձ մը յատուկ վարժարան մը նոր շինել տուաւ, և Ս. Յակոբ եկեղեցւոյ շինութիւնն ալ աւարտել տուաւ իր ծախքը, բայց ասիկա ալ վեց ամիս տեւելէն վերջը՝ հաւատակորդները զայն ալ գոցել տալու ձար մը գտան։

507. Ասուծոյն խորհուրդին այսպէս դադարումը շատ ազգասէր արտերու զայրոյթ արարաւեց. և յառաջադիմութեան արգելք ըլլալ ուզողներու գէմ հակակրութեան ոգին զօրանալ սկսաւ։ Ընդէն ազգային Վարչութեան եղանակին մէջ նախկին տիրապետութեան ոգին կը տեսնուէր։ Հոգեւոր և Գրագրաց ազգային ժողովներուն անդամները գրեթէ հաստատուած էին. կայրն անձեր որ միշտ այդ պաշտօնին կ՚ընտրուէին. և եթէ փոխուութիւն մը կ՚ըլլար անդամոց մէջ, անոնք ալ գարձեալ նախորդներէն, այսինքն ժամանակաւ նոյն պաշտօնը վարողներէն էին. Հանգը միշտ իր մեծերը կ՚ընտրէր, այսինքն անոնք ուրացմէ շահ ունէր և կ՚ակնածէր. ասոնք ժողովի փոխուութիւն եղած տարիները միևնոյն

անձերը կամ միևնոյն գաղափարն ունեցող անձերն ընտրելով, վարչութեան եղանակին մէջ փոփոխութիւն մը չէր տեսնուեր։

508. Հոգևորը, մնացեալ ուսումնական անձերը դժգոհ էին այս վարչութենէն, և արդէն գանգատներ կային, բայց հրապարակական ցոյց չկար։ Բանն անուանի բերան, որ 1857 ին Երեւանայ Հոգևոր ժողովոյ անդամ ընտրուած ուսումնական և քաղաքագէտ անձերէն Աղգային Կանոնադրութիւն մը խմբագրելու կարգուութիւնը տեսնելով, և մանաւոր յանձնաժողովոյ մը ձեռքը զայն պատրաստելով, ներկայացուցին ազգային Ընդհանուր Հոգևոր Ժողովոյն, որ զայն ընդունեց անվիճաբանելու։ Բայց սոր հանեմատ հաստատուած Տեսակական ժողովի մը միայն յարմարութիւն ունեցաւ, և ոչ ինքը։

509. Այս միջոցին Ս. Էջմիածնի Տ. Գերասիմ Ե. Արքեպիսկոպոսն ամենայն Հայոց 1857 փետրուար 13 ին փոխանակելով. սոր յաջորդին ընտրութիւնը այս անգամ Մուրատեանի եպիսկոպոսներուն միայն ձրգուեցաւ. և 1858 յունիս 18 ին ի Ս. Էջմիածին միաձայն ընտրուեցաւ Կ. Պոլսոյ նախկին Պատրիարք Տ. Գարեգին Եպիսկոպոսը՝ Կամիոպոլիս ամենայն Հայոց. և օգոստոս 11 ին Աստուց դեսպանատունէն Բ. Դուռը ծանուցուելով այս ընտրութիւնը, օգոստոս 22 ին ալ հաստատութիւն տուաւ Բ. Դուռը և արտօնութիւն մեկնելու ի Կ. Պոլսոյ նորընտիր

կամաղիկոսին. նոյն օրէն եկեղեցւոյ մէջ ի Ս. Պատարագի յիշատակը սկսաւ անուն նարբնոյր Այրարատեան ամենոյն Այոց։ Նոյն տարուն գեկտեմբեր 16 ին ալ Ս. Լիզմիածինէն հրաւիրակ եկան Վանքար եպիսկոպոս, և վարդապետներ։ Իսկ 1859 ին ապրիլ 20 ին ալ Վիրայէլ Լիզիա Վերիրով Այ զորաբարեալը Ռուսաց կայսեր կողմանէ հրաւիրակ եկաւ. և յունիս 2 ին Ս. Կամաղիկոսը մեկնեցաւ ի Պոլսոյ ի Ս. Լիզմիածին։ Արքսի ժամանակ որ Ս. Կամաղիկոսը Պոլիս մնայ, առնոր Ազգային Ընդհանրական Ժողովս մ՚ըլլալուն արժանաւոր յարգական ձեւերը ի պատիւ Այոց Ազգին պահելու համար Երբուն վարդապետ Տաճեան Պոլսոյ Պէյին կողմանէ մասնաւոր հիւրանք և փոքր տարեցոյց։ Ռուբրիսմունի եպիսկոպոսներէն Կամաղիկոսի ընտրութեան գլխաւոր պատճառներէն մէկն այն էր որ, եթէ Ռուսաստանէն ընտիր ընտրութիւնը, կարելի էր որ Ռուսաց սէրութեան գոհութիւնը Ղ. ալտէան Արգիս Եպիսկոպոսը յաջողէր այդ հայրապետական գահը ընդդէմ բոլոր Ազգին կամաց. վասն զի Ղ. ալտէան իր անարժան վարմունքներով, ազգասէրց և ռուսասէր բարքը, և հանգուցեալ Ներսէս Կամաղիկոսին ազգասիրական ձեռնարկութեանց դէմ հակառակութեամբը, ու անոր անձին դէմ թշնամաբար վարուելովը զամենին ալ զայրացուցեր էր, և սատելի եղեր էր ամենուն։

510. Տակաւին Պատմէս Կաթողիկոս Պոլիս կը գտնուէր, երբ 1858 Հոկտեմբերի 7 ին Յակոբ Պատրիարքը իր հրաժարականը տուաւ իր ծերութեանը պատճառաւ. և Պատրիարք ընտրուեցաւ Պրուսայու Վէրպ Եպիսկոպոսը։ Երկու տարի յետաջ երբ Յակոբ Պատրիարք հրաժարական տուաւ, ժողովրդեան շատ թախանձանք ընելէն ետքուեցաւ վերստին ընդունելու այն պաշտօնը։ Իսկ հիմա հրաժարեցաւ թէ իր ծերութեան պատճառաւ, և թէ իրեն համար ալ արեւելեայ յուզմունք չըլլալու համար։

511. Վէրպ Պատրիարքը նոր նստած էր, երբ ազգային եկեղեցիոյ կարգադրութեան և պատրիարքարանի ծախուց մատակարարութեան դիւրութեանը համար. յանձնաժողովոյ մը ձեռամբ յառաջ կանոնադրութիւն մը խմբագրուեցաւ 1859 ին. բայց ասիկա ազգային կանոնադրութեան մը ամբողջութիւնը չունենալով, Վերոգոյն ժողովն պաշտեց որ թէ երկու տարի յետաջ խմբագրուած կանոնադրութեան, և թէ այս նոր խմբագրուածին յանձնաժողովները միանալով երրորդ մը խմբագրեն։ Այս ասիկ ծնաւ 1860 մայիս 24 անմահ յիշատակաց արժանի աւուր մէջ տարածուած ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ, որ Ամենեան Տէրութեան շնորհած պատուութեանց համաձայն՝ ազգային իրաւանց և պարտուց բովանդակութիւն մ՚է, և որուն հիմնին ալ ընդհանուր ժողովրդեան գաղափարն

քուէարկութեամբ ընտրուած Հրեափոխադրական Ազգային Ժողովը, որ կատարելապէս Ազգը կը ներկայացնէ։

512. Ազգային Սահմանադրութիւնը ջնջուած, Գէորգ Պատրիարքը պարտաւորեցաւ հրաժարիլ 1860 ապրիլ 21 ին. և յաջորդ ընտրուեցաւ Ազգխառնուածքի Սարգիս Հալիպեանը, որ 1860 մայիս 14 ին ընտրութեան Բ. Դուռը գնաց։ Սարգիս Պատրիարքի ընտրութեան օրը մեծ յուզմունք եղաւ պատրիարքարանի մէջ. խուռն բազմութիւն ժողովրդեան պատրիարքարան դիմեց, ըստ որում լրագրիներուն բերնով խմացեր էր թէ, Գէորգ Պատրիարքին հրաժարիլը խնդրելը նոր խմբագրուած Սահմանադրութիւնն ալ անվաւեր և ապարդիւն ձգելու համար է. ուստի նոյն օրը բանն անանկ ջղլաւն՝ և Սահմանադրութիւնն ալ ամբողջ ընդունուելուն՝ մէկ կողմէն նախկին պատրիարք ծերունազարդ Յակոբ Արքեպիսկոպոսը Սայր եկեղեցւոյ բեմին վրայէն վաստակաւոր ժողովուրդը. և միւս կողմէն Հրամեան Գէորգ Պէյ, Տաճեան Պօղոս Պէյ և ուրիշներ համոզելով ժողովուրդը՝ խոստացան որ Սահմանադրութիւնը քիչ օրէն կը հաստատուի, և նորընտիր պատրիարքն ալ անոր հաւատարիմ գործադիրներն ըլլալու համար ընտրուած է։

513. Ի սրբազան մայիս 24 ին երբ Ընդհանուր Ժողով գումարուեցաւ, ներկայ էին Սարգիս Արքեպիսկոպոս Պատրիարք, բազմերախտաւ

Յակոբ նախկին Պատրիարք, դաս եկեղեցական և աշխարհական, հոն էին Տառեան Պալեան, Նրամեան Պէյերը, և ուրիշ բազմաթիւ պատուաւոր և ուսումնական անձինք, հոն ծայրէ ի ծայր Սահմանադրութիւնը կարդացուելէն յետոյ, հարցուեցաւ եկեղեցական դասուն թէ կրօնքի դէմ, եկեղեցւոյ դէմ ու անոր սուրբ կանոնաց դէմ բան կայ. ոչ պատասխանուեցաւ. և քննութեան ալ կարօտ չէր, վասն զի Ազգին ընտրեալ և հաւատարիմ անձինքն էին սահմանադրական յանձնաժողովոյ եկեղեցական և աշխարհական անդամները. ուստի ամէնքն ալ ստորագրեցին, և ազգովին ընդունեցաւ նոր Ազգային Սահմանադրութիւնը, որուն հիմնական սկզբունքն է։

Ա. Ազգին ամէն մէկ անհատը առ Ազգը պարտաւորութիւններ ունի. Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամէն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամէն մէկ անհատ իրաւունքներ ունի Ազգէն և Ազգն անհատներէն.

Այս պարտիքներն որոշող և այս իրաւունքները հաստատող իշխանութիւնը ազգային Ժողովն կը կոչուի, որուժ Սահմանեան Տերութենէն յատուկ արտօնութեամբ յանձնեալ է Ցանկասանի Հայոց ներքին գործոց մնալու թիւնը։

Բ. Ազգային Ժողովը հիմնեալ է իրաւանց ու պարտուց սկզբունքին վրայ,

՝՝ որ արդարութեան սկզբունք է. իր ոյժը
՝՝ ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ
՝՝ օրինաւորութեան սկզբունք է։ Ընտրեալ
՝՝ տնօրէնութիւն ազգային որ չէ համաձայն
՝՝ այն սկզբանց, ոչ արդար է և ոչ օրինաւոր։

գ. Ազգն ու ազգային Վարչութիւնը
՝՝ փոխադարձ պարտիքներով կապված են իրա-
՝՝ ր ու հետ։

դ. Ազգայնոց պարտականութիւնն է՝
՝՝ Ազգին պիտոյից ապահանջած ծախքերուն
՝՝ մասնակից ըլլալ իւրաքանչիւրը իր կարողու-
՝՝ թեան չափովը, Ազգին խնդրած ծառայու-
՝՝ թեանցը յանձնառու ըլլալ, և ազգային
՝՝ Վարչութեան ըրած տնօրէնութեանցը ազ-
՝՝ դասիրաբար հնազանդիլ։

ե. Ազգային Վարչութեան պարտակա-
՝՝ նութիւնն է՝ Ազգին բարոյական, մտաւո-
՝՝ րական և նիւթական պիտոյից հոգ տանիլ,
՝՝ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ դաւանու-
՝՝ թիւնն ու աւանդութիւնները անխախտ
՝՝ պահել, մարդկութեան հարկաւոր եղած
՝՝ անհրաժեշտ գիտելեաց ուսումը Ազգին ա-
՝՝ մեն տարիճանի թէ՛ մանչ և թէ՛ աղջիկ տը-
՝՝ ղայոց հաւասարապէս ծառալել, ազգային
՝՝ հաստատութիւնները պայծառ պահել, Ազ-
՝՝ գին հայրենները օրինաւոր կերպով աւել-
՝՝ ցընել և ծախքերը իմաստութեամբ տնո-
՝՝ սել, Ազգին ծառայութեանը մշանջենապէս
՝՝ նուիրեալ անձանց կացութիւնը լաւցնել և
՝՝ ապագան անդորրել, կարօտելոց իրաւմ տա-

„ նիլ հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վէ-
„ ճերը արդարութեամբ խաղալէ, և վերջա-
„ ուէս Ազգին բարեկարգութեան ու յառա-
„ ջադիմութեանը աշխատութիւն չը խնայէ։

Զ. Ահա այս ամեն պարտիքները կատա-
„ րելու և իրաւունքները ապահովելու դիտ-
„ մամբ է որ Ազգը հեռուեալ կերպով կը սահ-
„ մանադրէ զազգային գործոց վարչութիւնը „։

Այս հիմնական սկզբունքը անխախտելի է Սահմանադրութեան վրայ երբ տարիէն վերջն ըլալիք վերաքննութեան ժամանակն անգամ. և վերաքննութիւնն ալ անընդունելի է, երբ հիմնական սկզբանց որոմնադրութեանցը համաձայն չըլլայ, այն սկզբանց՝ որով ապահովեալ են Ազգին իրաւունքները, իրաւունք՝ որոնց վրայ Ազգն անգամ չունի իշխանութիւն անօրէնութեան, զի միանգամայն պարտիք են։ (Տե՛ս Սահմանադրութեան Յօդ. 150)։

514. Բարձրագոյն Դրան շնորհած արտօնութեանը համեմատ՝

Ազգային Վարչութիւնը երեսփոխանական է։

Ազգը Ընդհանուր ժողովով մը կընտրի կայուն, որ 220 երեսփոխանէ և 180 ի չափ ալ անգամակից կը բաղկանայ. ընդ ամենը 400 ժողովական։ Երեսփոխանները կ'ընտրուին 160 ը Պոլսոյ թաղերէն ընտրելի, և 60 ը գաւառներէն. անդամակից են Պոլիս գտնուող եպիսկոպոսները, քարոզիչ վարդապետները ու աւագերեցները Ի. Դրան մէջ պատուաւոր Նոյ պաշտօնատարները, ազգային մասնաւոր դիրքեր, լրագրա-

պեսներ, գլխաւոր վարժապետներ, վիպեալ բժիշկներ։ (Վերջին կարգումներ, որպէս առաջին անգամ պատիւ կ'ունենան տաղանդաւոր եւ անձնական արժանաւորութիւն ունեցող անձինք Ազգը ներկայացնող Ընդհանուր ժողովոյն անդամներից ընտրուած)։

515. Ազգային Սահմանադրութեան հաստատման կարմուած երեսփոխանական ժողովը Ազգին ընդհանրական գործոց անօրէնութիւնը իրեն պահելով, տեղական գործոց վարչութիւնը երկու ազգային ժողովներու կը յանձնէ, կրօնական գործոց մասը Կրօնական ժողովի մը, որ 14 եկեղեցական անձերէ կը բաղկանայ. քաղաքական գործոց մասը՝ Քաղաքական ժողովի մը, որ 20 աշխարհական անձերէ կը բաղկանայ. իսկ խառն գործոց անօրէնութիւնը՝ այս երկու ժողովոց առ ժամանակեայ մէկտեղ գալովը ձեւացած խառն ժողովին կը յանձնէ։ Ազգային Վարչութիւնը՝ աշխատութեանց բաժանումը բարեկարգութեան առաջին պայման բռնելով, չորս ազգային խորհուրդ կը հաստատէ, որ են Աստուածական խորհուրդ՝ որուն պաշտօնն է ազգային դաստիարակութեան ընդհանուր տեսչութիւնը, Տեսական խորհուրդ՝ որուն պաշտօնն է ազգային հաստատութեանց և կալուածոց մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը. Տնտեսական խորհուրդ՝ որուն պաշտօնն է ազգային հասութից և ծախուց ընդհանուր տեսչութիւն և ազգային մնաւկին

համարակալութիւնը. Դատաստանական խորհուրդ՝ որուն պաշտօնն է ապաշխարութեան դատաստանական գործոց ընդհանուր տեսչութիւնը։ Ասոնցմէ զատ Հօրոյ իւրաքանչիւր թաղերուն մէջ թաղական խորհուրդներ կը հաստատէ, ամէն մէկ թաղին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնը իր թաղական խորհուրդին յանձնելով, ապա այն խորհուրդներուն տեսչութիւնը տակ։

516. Ապա այն վարչութեան պաշտօնական գլուխ՝ Հօրոյ Պատրիարքն է, և կեդրոն՝ Հօրոյ Պատրիարքարանը։ Իսկ Հօրմէ դուրս առաջնորդանիստ գաւառներուն մէջ Դատական Ընդհանուր ժողովներ կը կազմուին. որոնք առաջնորդանիստ քաղաքներուն մէջ Կրօնական և Բաղաքական ժողովները կը հաստատեն. ասոնք ալ քաղաքին թաղերուն մէջ թաղական խորհուրդներ կը հաստատեն. նրանք ամենայն ամէն մէկ թեմին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութեան գործը համար թեմական խորհուրդներ կը հաստատեն։

Ամէն ժողով և խորհուրդ իր տեսչութեան կամ մատակարարութեան վրայ տարեկան ընդհանուր տեղեկագիր պէտք է որ տայ իր հաստատութեան ժողովին կամ խորհուրդին։ Այն տեղեկագիրը բոլոր տեղացոյց կրնամ՝ տարեգրեալ պէտք է ըլլայ։ (Ահա այս հանգրուանութիւնները երբ տարբերութեամբ հրատարակուին, ամէն մէկ այլ կարող պիտի ըլլայ կար-

գալ և ասել ազգային վարչութեան տարեկան բոլոր գործերը, և ըստ այնմ իր կարծիքն ալ լրագիրներու ներքով կրնայ խմացնել. ասիկ ապահովութիւն և վստահութիւն կը հաստատուի։ (Տես Սահմ. Յօդ. 1, 2, 3, 4, 6, 144)։

517. Ամենայն անհատ ազգային որ քսան և հինգ տարին լրացուցած է, ընտրող ըլլալու իրաւունք ունի. և այս իրաւունքէն զրկեալ և արգիլեալ են,

Ա. Քրէական յանցանօք դատապարտեալ և հրապարակաւ նշաւակեալ անձինք, որոնք մեռեալ են քաղաքականապէս ըստ օրինաց Տէրութեան։

Բ. Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնկեալ և ազգային ատեանի մը կողմէն դատապարտութիւն կրած անձինք, որոնց համար դատաստանը ազգային գործոց մէջ չը գործածուելը վճռած ըլլայ։

Գ. Տէրութեան կողմէն զդատացուցիչ պատիժ կրած կամ ազգային զդատարանէն եկած անձինք, որոնց ազգային ատեան մը արգիլած ըլլայ ընտրելու իրաւունքը։ Այս արգելքը կը վերնայ երբոր այսպիսեաց կատարելապէս զդատացեալ ըլլալը արդիւնաւոր ատեանին կողմէն վկայի։

Դ. Խելագարութեան պատճառով անբաւական դատեալ անձինք, որոնց կատարելապէս առողջացեալ ըլլալը վաւերական կերպով վկայեալ չըլլայ։

Ե. Հարկ եղած ազգային տուրքը կարողութիւն ունենալով մերժող անձինք, որոնք ազգովին եպերելի են իբր ազգային պարտեաց զանցառու։ Այս արդելքը կը վերնայ երբ այսպիսիք ազգային այս անհրաժեշտ պարտականութիւնը ճանչել սկսին։ (Տես Սահ. Յոտ. 90)։

518. Պատրիարքը պէտք է որ Էջմիածնայ Կաթուղիկոսէն ձեռնադրեալ կամ անկէ իբր Էջմիածնայ եպիսկոպոս ընդունեալ անձ մ՚ ըլլայ և Օսմանեան Տէրութեան հպատակ։

Նորընտիր Պատրիարքը՝ դեռ Բ. Դրան ներկայացած՝ Նկեղեցւոյ մէջ և Ընդհանուր ժողովին առջև հանդիսաւոր ուխտ կ՚ընէ այսպէս. «Առաջի Աստուծոյ և առաջի Աղգիս Հայոց ներկայացեալ Ի՛նդհանուր ժողով՝ ուխտեմ հաւատարիմ մնալ Ազգային Սահմանադրութեան և հակել բոլոր արտաքին անթերի գործադրութեան» (Տես Սահմանադրութեան Յոտ. 115, 118)։

519. Հաւատիկ ազգային Սահմանադրութեան պարունակած յօդուածները ծայրէ ի ծայր՝ Ազգին նիւթական, բարոյական և միաւորական զարգացման նպաստող են. և անտարակոյս ենք որ քիչ ժամանակէն Ազգը մեծ յառաջադիմութիւն պիտի ընէ։ Այս յոյսերով բերկրալից ողջունեցաւ մայիս 24ը. իսկ օգոստոս 25 են առաջին անգամ Ազգը ներկայացնող Ընդհանուր Արեւելեան ժողովը գումարուելով մեծ բերկրութիւն

եղաւ բոլոր ազգասիրաց սրտերուն։ Այսօր ամէն Հայ անխտիր իրաւունք ունի Ներսէս և Ներսեսի ըլլալու Ազգային Վարչութեան պաշտօնի, և ամէն Հայ իրաւունք ունի տարուէ տարի իր պաշտօնեաներուն համարաւորութիւնը լսելու, վերջապէս ՀԱՅ ԸՆԼԱԼ ՃԱՆՉՆԱԼՈՒ։ Նոյնպէս ամէն Հայ անհրաժեշտ պարտք ունի Ազգը սիրելու, անոր ծառայելու, և լաւ կարի օգնելու անոր նիւթական բարոյական և մտաւորական զարգացմանը, վերջապէս ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅ ԸՆԼԱԼՈՒ։

520. Այս սուրբ Սահմանադրութեան հաստատուած օրէն Ազգին վիճակին վրայ ալ կերպարանափոխութիւն մը տեսնուեցաւ. ծերութիւնն առոյգացաւ, երիտասարդութիւնն ոյժ առաւ, և մանկութիւնը ծաղկեցաւ։ Այն օրէն նշանաւոր և մեծ և յաւտակեր շարժում մ՝ունեցաւ Ազգը. թմբրած Հայ չտեսնուեր, անհոգ Հայ չմնար. ամէնքն իրենց ազգային իրաւունքը կը փնտռեն, ամէնքն ալ իրենց ազգային պարտքը կ՝բանին Հայնալ. Ազգութեան ոգին ու գաղափարը ժամանակէն ներշնչեալ արթնցուած է ամէնուն սրտին մէջ։ Այն օրէն սրտերը նոր զգացմամբ կը լցուին. Առաւած և Հայրենիք կը հնչուի ամէնուն բերանէն. և ազգային գրքոյկներուն մէջ Բրիտանիոյ թիւն և Հայրենասիրութիւն գաղափարակրութեան հիմերը կ՝ամրանան։ Ազգային յառաջադիմութիւն, գրքոյկներու կանոնաւորութիւն, վանքերու

բարեկարգութիւն, ազգային կալուածներու և եկամտից կարգադրութիւն կը պահանջուին։ Ազգային պաշտօններու ընտրուողները ժամանակաւորութեան ներքեւ են, և շատ պէտք է զգուշանան, զի ժողովրդեան լրտեսները, այսինքն լրագիրները պատրաստ են խոյսն զենուցանելու և աղէկն ու չարն ամոր ճանչցնելու։ Ուստի այն ժամանակները, որ երկու հոգի ազգ կը կազմէր, և ժողովուրդը կը քնանար. հիմա իր անձնական շահուն կամ ուրիշ ակնածութեան և կամ երկիւղի նկատմունքով ազգային իրաւունքը և պատիւն ստնակոխ ընելու և զոհելու համարձակողը չգտնուիր։ Հուսկ ուրեմն ապագայ Հայ սերունդը պիտի դատէ զմեզ, որուն առջեւ պարզերես պիտի ելլանք. ժամանակին յարգը ճանչնալով, ժամանակին յառաջադէմ դաղափարէն օգուտ քաղելու ճիգ և ջանք ունենալումիս։ Հիմա բոլոր Ազգին ձեռնտուութեամբը կը մնայ Ազգային վարչութեան Ազգին նիւթականը զօրացնելու համար մեր արուեստին այն է հոգացուածութեան և ուրիշ արուեստից և վաճառականութեան ձեռնարկել. և զանազան տեղեր մանաւանդ Կ. Պոլիս յաճախող ժամանակաւոր պանդխտութեան առաջքն առնել. Ազգին բարոյական ոյժը զարգացնելու համար ժողովուրդն իր գաղափարքն էրկրաչէր պահել իր ազգային իրաւունց. իսկ ազգային արարքն ամոր տրվեցնելու համար ընդհա-

նուր ազգային դատարակութեան դիմել, որով կը զարգանայ Ազգին մտաւորական ոյժն ալ։

521. Վերջին ժամանակներս Ազգին ունեցած հանճարաւոր անձանց յիշատակութիւնը զանց չընելով մէջ կը բերեմ, Խաչատուր Պարսխզպանեան, որ քաջ հմտութիւն ունէր մաթեմատիքական ուսմանց, և մինչև Պէշճեանի ժամանակէն սկսեալ Այր եկեղեցոյ ուսուցիչն Խաչերէն լեզուի դասախօսութիւն կ'ընէր, յետոյ Ն'եմարանին մէջ ալ մաթեմատիքայի դասատուութեան կը զբաղէր. յետոյ կարողութիւն ունեցող ազգայնոց զաւակները Փարիզ առաջնորդելով անոնց կրթութեան փոյթ տարաւ, և ուրիշ մեծ ծառայութիւններ ընելով իր սիրելի Ազգին՝ կնքած է իր ազգօգուտ կեանքը։ Նոյնպէս երբեմն եղան Փիլիքա Պօղոս՝ որ քաջ տրամաբան էր. Զարիրապետեան Գէորգ պատուելի՝ ընտիր հայկաբան, որ 44 տարի կեանք մաշեցուցած է Ազգին մանկտոյն համար, և ընտիր աշակերտներ ընծայած է Ազգին. վերջապէս Օրդանեան Նիկողոս, ազգասէր գրագէտ, որ Ընթերցարան-ին, Արծիւ-ին ընթերցանո-ին և ուրիշ պատուական աշխատութիւններ ունի, ու մեծամեծ ծառայութիւններ ալ ըրած է Ազգին. ասոր ի կշիռ կուգայ Ռուսատանի Խաչատուր Աբովեան ճշմարիտ հայրենասէր գրագէտ անձը։

Ասոնց կը յիշատակենք Խորասանճեան Պետ-

բոս ամիրան, որ իր ազգատիրական ոգւոյն և իշխաստ ազգային յառաջադիմութեան ձեռնարկութիւններուն նշանաւոր եղած է Ազգին մէջ. և ուսումնական և ուսումնական ազգաց ալ յարգը ճանչնալուն և անոնց պատուոյ տալուն՝ ապացոյց տուած է ազգային յառաջադիմութեան սիրոյ ընտրեն. որով արժանաւոր ալ եղած է անոնց երախտապարտութիւնը վայելելու։

Համառօտ պէտք-ին մը գաւառական ազգայնոց վերաբերեալ։

522. Մեր գաւառական ազգայինները՝ Բրիտանիոյ հարաւային դարձելէն ետքը դարձեալ զանազան բռնութիւններուն ներքեւ կը ճնշուին, որոնց գլխաւորներն են.

Ա. Մահմեդականաց տարին կարգի մարդոց բռնութիւնները։ Ասոնք Տէրութեան արքունի հսկողութեամբը Թանզիմաթի հաստատութենէն ի վեր վերնալու վրայ են։

Բ. Բիւրոներուն զանազան ցեղերուն յափշտակութիւնները և անողորմ ոճրագործութիւնները։ Ասոնք դեռ մինչեւ ցարդ անդուլ լեռնցիներ են, և միշտ գիւղերն և աւանները մինչեւ անգամ քաղաքներ յարձակելով ծանր ծանր պահանջմունքներ կ'ընեն, և խեղճ Հայերն ալ առանց ընդդիմանալու անոնց ուզածը կուտան։ Ասիկա շատ ընտանիքներու և գերդաստաններու կործանման

պատճառ եղած է, և բոլոր Հայաստանեայց գիւղացւոց աղքատութեան առիթ։ Թէպէտ ամէն տեղ Հայոցմէ ընդդիմացող կը գտնուին Թիւրքերուն դէմ, և մինչեւ տակաւին աթիւն հեղութեամբ պատերազմելով վախցուցած ու փախուցած են զանոնք. բայց Հայաստանի շատ տեղերը տակաւին անոնց տրուած են. խեղճ Հայ գիւղացիներուն բոլոր տարեկան վաստակը և ունեցածը իրենցը չեն։

գ. Տգէտ ազգային գլխաւորներու և քնացող հուլիւներու ձեռքէն քաշած տառապանքները։ Ասոնք աւելի ծանր են խեղճ ժողովուրդին վրայ, որ տրտունջներէ կրած նեղութիւններուն ժամանակ փոխանակ իր ազգային գլուխներէն վնիմ արութիւն գտնելու, անոնցմէ կը կրէ աւելի զրկանք։ Յորմէ՞ն երբիշանիկ ի՛ լլայ, երբ զինքը հոգացող, խնամող և արդարացող առաջնորդ ունենայ, որ յամենայն զօրութենէ Հանք տանի զինքը բարեբարգելուն դէմ դնելու, և գաւառին փաշային կամ միւտիրին քով իր ժողովրդեան իրաւունքը պաշտպանելու համար հոգ ազդեցութիւն բանեցնելու։ Իսկ թէ ազգն և անհոգ առաջնորդի մը վիճակեր է, վայ եկեր է ժողովրդեան գլխուն. օտարաց գլուխներէն և քիւրտերէն կրած նեղութիւններէն աւելի վիշտ կը կրէ ժողովուրդը. մանաւանդ երբ քանի մը խնքնակոչ ազգային գլուխներ ալ թիկունք և ոյժ ըլլան առաջնորդին։ Ասոնց անուրն աւելի ծանր է քան բոլոր

բարեմեծարանքը. ասենք քանի մը հոգի ազգ-
կազմողներ են. խեղճ, թշուառ և կարեկցու-
թեան արժանի ժողովուրդը բան մը չգիտէ,
անոնք ինչ հրաման որ ընեն, կամակատար
պէտք է ըլլայ. ապա թէ ոչ զրպարտութիւն
կը պակսի անոնց քով. տեսչութեան կը մատ-
նեն ընդդիմացողը և բանտարկել կուտան.
սոր սով կը համարձակի այն իշխանաց և իշխա-
նապետաց, այն քնացող և անարժան եկեղե-
ցականին կամացը հակառակիլ: Ասենք ոչ մի-
այն իրենց կամքը պաշտել տալով, ժողովուր-
դը բռնաբարելով, անոր իրաւունքը յափշտա-
կելով գոհ կ'ըլլան, այլ և Տէրութեան
սատանայաց տուքն ալ եթէ իրենք վարձեն,
կը գտնուին այնչափ անգութներ իրենց մէջ,
որ ազգաս այն աւելի կեղեքել կը ջանան.
զայն տկար և լեզուաս գտնելով: Իսկ Տէրու-
թեան ուրիշ տուքերուն դալով, ազգատոր
աւելի զրկանք կրելու դատապարտուած կը
տեսնենք. ժողովրդի տուքը լաւ կարդուլ-
թեան իւրայանչիւր ազգայնոց շրջանակաւոր.
ազգասն ու հարուստ կամ հաւասար կու-
տան, կամ հարուստն աւելի քիչ կուտայ.
կամ բնաւ չտար, և կամ հաւաքած տարեկան
տուքէն ալ բաժին մը իրեն եկամուտ կը կա-
ռնէ: Որ դաւառին կամ քաղաքին մէջ բազ-
քանանութիւնը և պատկանութիւնը յա-
ւաջ դացած է, հոն անշուշտ ժողովրդեան
կեղեքուելը և բռնաբարուելը պատճառ պի-
տի դտնենք. վայ այն առաջնորդներուն, որ

անհոգ են կամ նոյն իսկ իրենք՝ հօտը պառակտելու և գայլերու յափշտակել տալու պատճառ կ'ըլլան։ Մեր գաւառական ազգայնոց այս ցաւալի վիճակը ճշմարիտ ազգասէրներու աչերէն աղի արտասուք կը հանէցնէ ապրարև. բայց բաւական միխիթարութիւն մը չենք ղգար, թողուն վերջին տեսնելու ունեցած ուսումնասիրութիւններն և Կ. Պոլսոյ ազգայնոց հետևողութիւններն, այլ երբ տեսնենք՝ որ անոնք բերկրանքի աչքով մը և մեծամեծ յուսով 1860 մայիս 24 աւուր վրայ կը նային. այն օրը Ն. սուրբ ընդ մեզ հաշտութեան նուիրական օրը կը սեպեն. և ուրախութեան արտասուքով գիւղացին գ.քաղաքացին, և հողագործը զարուեստաւորը, և բոլոր Այք զիրար կ'ողջագուրեն. և բռնաբարողք շանթահար կ'ըլլան. որովհետև ակ այսուհետև ժողովուրդն իր ազգային իրաւանց տէր է. ժողովուրդը գիւրաւ չպիտի խոնարհի բռնաւորներու, ժողովրդական ձայնը պիտի խլեսէ. և խլեսան և զգան իր ցաւը ժողովրդական ձայնին մէջ պիտի միտուէ, անոր համար զժողովուրդը պիտի արդարանան, զժողովուրդը պիտի խնդան, անոր բարեկեցութիւնը և յառաջդիմութիւնը բան ամենայնի հոգ պիտի տանի, ապա թէ ոչ մեր ալ կը կործանի. և անոր տեղ ժողովուրդը կը բարձրացնէ ուրիշ մը, որ իր սիրելին է և բարեկամը։ Այն օրերն բաղդաւորութիւն և պատուականութիւն յարոյ մասերու արտերն իրենց ազգային

Եկեղեցւոյն վրայ Ներքնացան, վասն զի ցրուեալ պատճառներդ վերցած տեսան. հայրենասիրութիւնդ և ազգասիրութիւնդ յաղթեալ սկսան։

523. Ընդ հանուր տեսութեամբ մինչև ոչ ալ, գաւառական ազգայնոց նախանձ վիճակն վերոյիշեալ բռնաբարութիւններուն պատճառաւ լաւ չենք գտներ. մանաւանդ ուրեմն Հանար տարիներով Պոլիս պատերազմներուն երեսէն մեծ կրթութիւնք կը հաշուեն։ Ազգը, կամ կերպարանական վարչութիւնն իր ուշադրութիւնը այս մեծ խնդիրին վրայ դարձնելու է. և նախ անոնց նախանձ բարձրութեան համար, անոնց բարոյական ոյժ տալու է, այսինքն ժողովուրդն իր իրաւունքն տէր ընելով, բռնաբարութիւնը վերցնելու է. և յետոյ հանուր գաւառական մասնաւորութեամբ ալ բան բաւականին միջոցները զարգացնելու է. յետոյ ամէն տեղ գտնուող Հայոց մէջ առնուազն յաւարտելու թիւնները հաստատելու, և արուեստներդ ծաղկեցնելու, և հոգագրծութիւնը զարգացնելու մասին մեծ հոգալութիւն. իրենք և անձնական էր Ազգ պէտք է ունենայ, բարոյական ապագայի մը հիմնական ուրուագիծ ունենալով աչքին առջև։ Ազգի վիճակին նայելով. բայց գաւառներու բաղդը Պոլսոյն կապուած է. անոնց բնակչաց յոյսը Պոլսոյ բնակչաց վրայ է. Պոլսոյն կ'ակնկալեն ինչ որ կ'ուզեն ունենալ. ասիկա հետաքրքիր հայրենասէր անձանց ուշադրութեան արժանի մէկ

կէտ մ՝ըլլալով՝ իւրաքանչիւր գաւառ իր մէջ ձեռնհաս ընելու, և իր գաւառական ազգային վարչութիւնը վարելու, և իր նիւթական և ուսումնական վիճակը բարւոքելու մասին փոյթ կը ցուցնեն, որպէս զի Պօլսոյ յեղափոխիկ բաղդին հետ չընկերանան. այն մասով Ազգային Սահմանադրութիւնը գաւառական ընդհանուր ժողովներ կայն, ասնմանած է. միայն գաւառները Բ. Դրան հետ ունեցած յարաբերութիւններին կեդրոնական վարչութեան միջոցաւ կ՝ընեն, և ազգային ընդհանուր գործոց տեսչութեան համար ապրդէն Ընդհանուր Ազգային Ժողովին մէջ իրենց երեսփոխաններն ունին, որոնց ամենուն մէկտեղ գալովը Ազգը ներկայացուցած կ՝ըլլան։ Ասոր կեդրոնական վարչութեան կը մնայ իւրաքանչիւր գաւառներուն զօրութիւն և միջոց մատակարարել, և ազգային ընդհանուր դատարակութեան, ազգային ընդհանուր եկամոյց և կալուածոց տեսչութեան և անոնց մատակարարութեան, և վերջապէս ազգային ընդհանուր բարեկարգութեան պաշտօնին հսկել։

524. Ամանք և ուսումնարանութիւն ինչպէս Պօլսոյ մէջ, նոյնպէս աւելի և գաւառներուն մէջ հարուստ էին։ Այսուամենայնիւ քանի մը հին և հռչակաւոր վանուց մէջ հայերէն հատարակ կարդալ և գրել մը հազիւ կային։ Գաւառներուն մէջ առաջին անգամ Միւռնիա ըրած է վարժարանի ու-

կղզեաւորութիւն, և 1798 ապրիլ 26 ին տէր Յովհան Միրզա Վանանդեցին վարժապետ կարգուած է Օմիւռնիոյ վարժարանին։ Տէր Յովհան քնիկ վանեցի ըլլալով, քահանայ Պօղոս կուգայ, և մայր դպրոցն աշակերտութեան կը մնայ, և դպրոցին հոգաբարձու ուսումնասէր Տնտրհք Մկրտիչ ամիրան զանիկա իբրև որդի կը պաշտպանէ. յետոյ Օմիւռնիայէն վարժապետ խնդրուելով, զանիկա Օմիւռնիա կը խրկէ. ուր ի՛ամուսնոյ և յետոյ քահանայութեան աւրը պաշտամունք կը կոչուի։ Տէր Յովհան բանաստեղծական հանճարի տէր էր. ինք հայերէնէ և քիչ մ'ալ թուրքերէնէ զատ ուրիշ լեզու ոչ գիտէր, և ոչ ալ Վենետիկի և Հռոմի հայերէն թարգմանութիւններն իր ժամանակն ի լոյս ընծայուած էին որ կարդացած ըլլար. բայց Աբէլեան Հայոսպանի, Ոսկի դար, և Տեսարան Հայոց, Աբրահամ և Աբրոյի անուանով ընդարձակ քերթուածներ ունի. որոնց առաջինը 1836 ին ի Կ. Պոլիս տպագրուած է և նուիրուած առ Պետրոս ամիրա Նշուսուֆեանց, և երկրորդը 1841 ին ի Օմիւռնիա յԱստուծոյ բանի Արքոյն Սեբաստոյ տպագրուած և առ Գրիգոր աղա Աբէլեան Գուլասարեանց նուիրուած, և երրորդը ի խնդրոյ ձեռնասուն աշակերտի նորին ի Գրիգորէ Կոստանդեան 1828 ին տպագրուած, առաջին խայրիք հեղինակին, և տպագրուած 1856 ին ի Օմիւռնիա ի տպարանի եղբարց Տեսէեան։ Այս

քերթուածոց մէջ բանաստեղծական հանճարը կը փայլի, և մեծ պատիւ կ'ընէ Գերթող Հեղինակին, որ առաջինն եղած է Ազգիս մէջ այս օրինակ քերթուածի հեղինակութեամբը։ 1831 ին Օմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանին ներքին վերատեսուչ և դասատու կարգուեցաւ Ռուբէն Անդրէաս Փափազեան, որպէս Տէր Մանուէլեան Յարութիւն ազգայի, բնիկ Կ. Պոլսոյ Խասգիւղէն, որ Օմիւռնիա ամուսնանալով հոն տեղաւորուեցաւ, և 26 տարի միօրինակ վարեց այն ամենադանր և փափուկ պաշտօնը խիստ արժանաւորութեամբ։ Անդրէաս վարժապետ քաջ Հայկաբան, Խոտաբան և Պաղնիաբան էր, Լատիներէն և Անգլիերէն լեզուաց ալ հմուտ ըլլալով՝ մեծ նպաստ ըրաւ վարժարանին յառաջադիմութեանը, և գրեթէ անոր օրով վարժարանը կերպարանափոխ եղաւ, և տարուէ տարի յառաջադէմ դառնալով մեծ արդիանք եղաւ Օմիւռնացւոց. և մինչև Կ. Պոլիսէն և ուրիշ տեղերէ տղաքներ յոտս Անդրէաս վարժապետի դասախօսակուելու կուգային։ Անդրէաս վարժապետ գրականութեան մէջ ունեցած տաղանդը ուրիշ շատ կարևոր նիւթերու վրայ գործածելէն զատ, մեծ օգնութիւն ըրած ունի նաև 1841 ին Բուրբատանի մէջ անդրանիկ օրագիր երևցած Արշալոյս Արարատեանի, որուն հրատարակիչ և տէրն եղաւ Գուկաս Պալդաղարեան։ Անդրէաս վարժապետ եւրոպական վարժա-

բանաց կարդերուն ու կանոններուն, ուսմանց և ուսուցման եղանակներուն լաւ տեղեկութիւններ ունենալով և զանոնք ի գործ դնելով, շատ երևելի գրագէտ աշակերտներ ընծայեց Ազգին, որոնք իրեն անմահ բարի յիշատակներն են, և ինքն ալ ասոնցմով կենդանի է Հայ Ազգին մէջ, ու ընտիր և արդիւնաւէտ վարժապետաց կարգն իրաւամբ կը դասուի. մեռաւ 1857 մարտ 6 ին, 52 տարեկան հասակի մէջ։ Օմիւռնիոյ անմահ բարերարներ եղած են Նուսուֆեանց Գօրոս Պէյ, որ Նդիպտոսի փոխարքային քով պաշտօնակալ էր, և եղբայրը Պետրոս ամիրա, որոնք ազգասիրական ոգով հատատուն եկամուտներ շնորհեցին Մեսրոպեան վարժարանին։ Այնպէս Օրիֆլիզի Գուլասարեանց Աբէլեան Գրիգոր մեծագումար դրամ շնորհած է Օմիւռնիոյ և Մանիսայու ազգային վարժարանաց։ Այնպէս 1850 ին Նուսուֆեանց քեռորդի՝ Կասանդեան Գրիգորի կողմէն Հոխիմէ տիկինը իր ծախքը Հոխիմեանց վարժարանը հիմնեց աղջկանց համար, ուր վարժապետ կարգուած էր Յովհաննէս Տահլեան Վանցի Սարգսեան, որ հայրենասէր անձ մ'էր, և Հայաստանեայց Եկեղեցւոյ ուղղափառութեան պաշտպանութեան համար խիստ և Տէր էմ Յիսուսանուն բառախաղ ընդարձակ տետրակներ խմբագրած ունի։

525. Օմիւռնիայէն զատ Արմաշու վանաց մէջ 1831 ին վարժապետ կարգուած կը

գտնենք անուանի Մուրատ վարժապետը. որ 12 տարի նոյն վանուց մէջ վարժապետելով, և ամենայն կերպիւ հոգ տանելով՝ բաւական երևելի աշակերտներ ընծայած է Ազգին։ Իսկ մեր առենները գրեթէ Հայաստանի ամէն կողմերը դպրոց հիմնելու, և յառաջ տանելու եռանդ կը տեսնուի. որոնց մէջ նշանաւոր եղած է նախ Սեբաստիոյ վարժարանը, զոր 1851 ին Սեբաստացի Օտապաշեան Յովսէպ էֆի և մահտեսի Գէորգ եղբարք իրենց ծախսերքը շինելով իրենց հայրենակցաց նուիրեցին. և այս վարժարանին յառաջադիմութեան ալ նպաստելու համար Սենեֆերիմեան անուանով ընկերութիւն մը կազմուեցաւ դարձեալ իրենց ջանքովը, և որով գաւառներուն մէջ Սեբաստիա առաջինն եղաւ ընկերութիւնով վարժարան յառաջ տանելու միջոցը ճանչցող, և արդէն ալ 1—2 հարիւր հազար ղուրուշի արժէքով մեծ խառն մը ի Սեբաստիա հիմնեցին մօտերս. որուն եկամուտովը վարժարանը կը բաւականանայ։ Այնպէս Անկիոյ Աղուշեխ գիւղին Ս. Նշանի վարժարանին միօրինակ բարեկարգութիւնը և անխափան յարատևութիւնը համար պէտք եղած 15—16 հազար ղուրուշի տարեկան ծախքը հոգացող անշարժ եկամուտ մը յիշեալ վարժարանին նուիրեց Աղուշեխցի Ս. Յարութիւն աղա Փափազեանը։ Այս ազգասիրական նուէրը ոչ միայն պատիւ կը բերէ նուիրատու անձին, այլ յարգը և խրախոյս է ուրիշ կարող անձանց ևս,

որոնք իրենց հարատեւթեան խիստ փոքրագոյն մասով կրնան խիստ մեծ ազգային բարեգործութիւններ ընել, և իրենց անունն անմահ պահել։

Յեռոց նշանաւոր են Վանի Վարդ վանուցը մէջ հաստատուած Յառաջադասարաց վարժարանը, և ազգային Տպարանը, զոր առաջին անգամ Հայաստանի մէջ մտցուց Հայրենասէր Խրիմեան Մկրտիչ վարդապետը 1856 թիւն։ Հայաստանի այս անձնանուէր նահատակին ազգասիրութեանը և հայրենասիրութեանը վրայ գոլեստ չհարկաւորիր, վասն զի ինքնին իր արդիւնքները կը խօսին. Վանի մէջ Տպարան հաստատելը ու հոն Ս. Գրոց Վասպուրական անուանով թերթ մը հրատարակելը, (որոնց համար ալ իր հայրենակիցներէն փոխառեալ օգնութիւն գտնելու՝ մեծամեծ արգելքներ կը տեսնէ,) մեծագործութիւններ կը սեպենք, և ասոնց մինչ տառապանքներով ի գլուխ տարուած ըլլալն ալ հանգնաւոր համար փորձն ընելու է։ Տարակոյս չունինք թէ մեր հայրենասէր եկեղեցականներէն այս փորձն ընելու փափաքողներ պիտի գտնուին այսուհետև, երբ միջոց ունին ձեռնարկելու, և իրենց Աստուն ու Հայրենեաց ծառայութիւն ընելու ընդարձակ ասպարէզի մը կոչ առնին. թող չմտածեն, այլ տեսնեն օրինակին որ կուտայ Խրիմեան վարդապետը. ան առանց Աստուն ալ զիրենք կ'օրհնէ ու Հայրենիք իրենց յիշատակը կ'անմահացնէ։ Իսկ

դուք, ով Հայաստանի անձնանուէր զաւակներ, աշխարհիս վրայ ժամանակաւոր կենաց հանդուրժելունը մի՛ փնտռէք, նայեցէք որ աշխարհիս մէջ ճշմարիտ Քրիստոնեայ և ճշմարիտ Հայ ապրիք, և ան առեն ձեզի պատրաստ պատ՛կ կայ յերկինս։

Ս.Խ.Հ. ՀԱՆՐՈՒՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Публичная библиотека
7/II-1922
Ս. Էջմիածին, Вяснцян
ՍՅՈՒՆԻՔԵԱՆ

ՑԱՆԿ

ՀԱՄԱՌՕՏ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1

ՄԱՍ Ա. ՀԱՅԿԱԶԱՆՑ ՏԷՐՈՒԹԻՒՆԸ

ԳԼԽ Ա. Հայկ և իր յաջորդները մինչև Արամ 13
» Բ. Արամ 15
» Գ. Արայ, Կարդոս, Անուշաւան 16
» Դ. Պարէտա և իր յաջորդները մինչև Սկայորդի . . 17
» Ե. Պարոյր և իր յաջորդները մինչև Տիգրան Ա. . 18
» Զ. Տիգրան Ա. և իր յաջորդները մինչև Վահէ . 19

ՄԱՍ Բ. ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԳԼԽ Է. Վաղարշակ 21
» Ը. Արշակ Ա. և Արտաշէս Ա. 22
» Թ. Տիգրան Բ. 23
» Ժ. Արտաւազդ Ա. և Արշամ 25
» ԺԱ. Արգար 26
» ԺԲ. Անանէ և Սանատրուկ 28
» ԺԳ. Երուանդ 30
» ԺԴ. Արտաշէս Բ. 32
» ԺԵ. Արտաւազդ Բ. Տիրան Ա. Տիգրան Գ. և Վաղարշ 34
» ԺԶ. Խոսրով մեծ 36
» ԺԷ. Խոսրովին մահուանէն մինչև Տրդատին թագաւորելը . . 38
» ԺԸ. Տրդատ և լուսաւորութիւն Հայաստանի ի ձեռն Ս. Գրիգոր Լուսաւորչի 40
» ԺԹ. Խոսրով Բ. և Տիրան Բ. 43
» Ի. Արշակ Բ. 46
» ԻԱ. Պապ 49
» ԻԲ. Վարազդատ, Արշակ Գ. Վաղարշակ Բ. և Խոսրով Գ. 52
» ԻԳ. Վարազշապուհ և Արտաշէս Գ. 54

ՄԱՍ Գ. ՄԱՐԶՊԱՆՆԵՐԸ, ԿԻՒՐԱՊԱՂԱՏՆԵՐԸ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ

ԳԼԱՒ ԻԴ. Վէհմիհրշապուհ և Վասակ Սիւնի մարզպաններ . 57.
» ԻԵ. Ս. Վարդանանց պատերազմութիւնը . . . 60.
» ԻԶ. Ս. Վարդանայ և Ս. Ղևոնդի խրախտանքը . 61.
» ԻԷ. Ս. Վարդանանց պատերազմը, և Ատրպատականի մարզպան . . 64.
» ԻԸ. Ատրշնասպ, Անդեկան, և Վահան Մամիկոնեան մարզպանները . 67.
» ԻԹ. Վարդէն մինչև Վռնճիհր մարզպանները . . 71.
» Լ. Սմբատ Բագրատունի մարզպանէն մինչև Աշոտ Բագրատունի պատրիկը . 73.
» ԼԱ. Ոստիկանները . . . . . 78.

ՄԱՍՆ Դ. ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԳԼԱՒ ԼԲ. Աշոտ Ա. Բագրատունի թագաւոր . . . 81.
» ԼԳ. Սմբատ Ա. . . . . 83.
» ԼԴ. Աշոտ Բ. Երկաթ . . . . . 87.
» ԼԵ. Աբաս, Աշոտ Գ. Ողորմած և Սմբատ Բ. . 91.
» ԼԶ. Գագիկ Ա. և Յովհաննէս Սմբատ . . . . 94.
» ԼԷ. Գագիկ Բ. . . . . 96.
» ԼԸ. Գագիկ Բ. ին Յն տարուան պանդխտութիւնը 100.

ՄԱՍՆ Ե. ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԳԼԱՒ ԼԹ. Ռուբէն Ա. . . . . 105.
» Խ. Կոստանդին Ա. Թորոս Ա. և Լևոն Ա. . . 107.
» ԽԱ. Թորոս Բ. Մլեհ և Ռուբէն Բ. . . . . 109.
» ԽԲ. Լևոն Բ. Փիլիպպոս և Հեթում Ա. . . . 112.
» ԽԳ. Հեթում Բ. ին մինչև Ռուբինեանց թագաւորութեան կործանումը . 115.

ՄԱՍՆ Զ. ՀԱՅՈՑ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ 1860 ՄԱՅԻՍ 24

ԳԼԱՒ ԽԴ. Մելիքշահին ի Հայաստան արշաւանքը . . 119.
» ԽԵ. Թամերլանայ ի Հայաստան արշաւանքը . . 121.

» ԽԶ. Լանկթիմուրին արշաւանքները, և Օսմանեանց Հայաստանի տիրելը. 122 »
» ԽԷ. Շահաբասին ի Հայաստան արշաւանքը. Դա. ւիթ սիւնի Հայ իշխանին քաջութիւնները. 125 »
» ԽԸ. Օսմանցիք Հայաստանի մեծագոյն մասին, Պարսիկք մէկ փոքր մասին, յետոյ Ռուսք նոյնպէս մէկ փոքր մասին կը տիրեն. 128 »
» ԽԹ. 1. Ռուսաստանի Հայք. . . . . 131 »
» Ծ. 2. Լեհաստան, Մաճառիստան և Աւստրիա գաղթող Հայք. 135 »
» ԾԱ. 3. Պարսկաստան և Հնդկաստան գաղթող Հայք. 140 »
» ԾԲ. 4. Թուրքաստանի Հայք մինչև ի հաստատութիւն Թանզիմաթին. 143 »
» ԾԳ. Թանզիմաթի հաստատութենէն մինչև 1860 մայիս 24 հաստատութիւն Ազգային Սահմանադրութեան 191 »

5717

0001798

2013